

ԳՐԱ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

(ՆԱԲ ԳՐՈՒԹԻՒՆ)

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՈՁ

ՀԱՆԳԵՐԶ ԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՄՏԱՄԱՐՁԱԿԱՆ

ՎԱՐԺՈՒԹԵԱՄԲԲ

ՀԱՏՈՐ Ա.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԱՍՆԱՒՈՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՔ ՈՃՈՅ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Յանապարհայ յիտաճն. Խորհ. Ազգ. Կնոք. Այսպարհան

ԳՐԻՆՆԵՅ

ՄԻՀՐԱՆ ԱՍԳՐԱՆԱԶԵԱՆ

Ուսուցիչ

ՀԱՅԿԱՍՏԱՆ ԿԵԶՈՒԻ ԵՒ ԴՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ

«Չգոյ՛ լը հաւասարա՛ զի իմասն է
ամէ՛ն ինչ եւ բարձր սակա՛տ ինչ՛: Ես կ'ըսեմ
քէ, աւելի սեղձ է քրեւս՛ Բան իմաստով,
զի մասեանք կ'ապրին, քէ յուր գրուած
մասեան մի երկ մ'է սոյ սոյք է մահն»:

ՏԻՊԱՆՈՒ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1891

ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

(ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆ)

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՈՃ

ՀԱՆԳԵՐՁ ԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՄՏԱՄԱՐՁԱԿԱՆ

ՎԱՐԺՈՒԹԵԱՄԲԲ

ՀԱՏՈՐ Ա.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԱՍՆԱԻՈՐ ՑԱՏԿՈՒԹԻՒՆՔ ՈՃՈՑ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Յանձնարարեալ յՌուսմն. Խորհ. Ազգ. Կեդր. Վարչութեան

ՅՕՐԻՆՆԵՑ

ՄԻՋՐԱՆ ԱՍՏՎԱՆԱԶԵԱՆ

Ռուսիցիչ

ՀԱՅԳԱԿԱՆ ԼԵՋՈՒԻ ԵՒ ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

«Ջգոյս յեր հաւասարու զի իմաստն է ամէն ինչ եւ բառք սակաւ ինչ. ես կ'ըսեմ թէ, աւելի սնով է թերեւս հան իմաստով, զի մասեանք կ'ապրին, թէ յոռի գրուած մասեան մի երկ մ'է որոյ ստոյգ է մանկ.»


ՏԻՒԲԱՆՆՈՒ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1891

A 15001



ԱՌ

ՏԷՐ ՌԷԹԷՆՍ Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ԲԱԶՄԵՐԱԿՈՑ ՈՒՍՈՒՅԻՉ ԻՒՐ

ՅԾՆ

ԵՐԱԽՏԱԳԷՏ ՍՐՏԻ

ՋՈՐ

ՄԱՏՈՒՅԱՆԷ ՍԱՆ ԻՒՐ

Մ. Պ. Ա.

Տէր ,

Երանոչքիչն մե՛ծ եղաւ ինձ
Չեր վատասկոց շինել պտոռչ
նախընծայ . փառք մե՛ծ պիտի
շինի նաև ինձ՝ թէ քոյլ տայք
զի Չեզ ձօնեմ՝ ոչտռննացան իմ
վատասկոց աշն սյս պտոռչ նա-
խընծայ :

Չեր աջը կը համբոշի

1884 Սեպտեմբեր 20
Ի Գասթիուզ

Զեր երախտագէտ սանք
ՄԻՀՐԱՆ Պ. ԱՍԲԱՆԱԶԵԱՆ

Առ

Մեծապատիւ Տէր Ռէքէոս Յ. Պէրգլերեան

Ազնիւ Աստուածայեան ,

Առաջին երկիդ վերջին քերթն այն ինչ դուրս ելած Արամեան մամուլէն , կը փութաս ինձ մասուցանել եւ ինձ ձօնել նախկին պտուղն ուսումնասէր վասակոցդ :

Զօնդ ուրախութիւն ինձ եւ հպարտութիւն միանգամայն կ'առքէ :

Ուսուցչական ասպարիզին մէջ առաջին քայլերս կ'առնուի եւ դու ինձ առակերտեցար Գասրգիւղի Համազասպեան բաղային վարժարանին մէջ . աղֆասիկ բայց ուշիմ եւ աշխատասէր ուսանող , կը խոսանայիր արդիւնալից ապագայ . եւ այն ասեմէն՝ յառաջադէմ փայլուն առակերտ՝ դաստիարակիդ սիրեն բերկրութեամբ կը լնուիր ու պարծանի մ'էիր իրեն : Այդ բերկրութիւնն ու այդ պարծանին աւելցան սակաւ , երբ՝ յես ուսանողական կենաց՝ բեւակոխեցիր ուսուցչական ասպարիզին մէջ , եւ ընդհուպ՝ իբրեւ հայկական լեզուի ու գրագիտութեան քաջամուտ եւ ժիր ուսուցիչ՝ սակաւուց սահմանեալ պատուաւոր տեղ մը գրաւեցիր եւ ազգային վարժարանաց ցանկալի կացուցիր զեզ :

Իսկ այսօր ո՛րքան առաւել է խնդրութիւնս եւ ո՛րպիսի քաղցր գոհունակութեամբ կը զեղու սիրսս երբ

հրատարակութեան ասպարէզը կ'իջնես' ձեռքիդ մէջ
ամէնօգտակար մասեան մը , արգասիք լուրջ եւ յամառ
աշխատութեան , մայացոյց հայագիտութեանդ ու գրա-
կան ազնիւ հաշակիդ , եւ կը նուիրես զայն վարժապե-
տիդ :

Պատուական նուէր , անգնահատելի' , ուսոցչի մը
համար իւր աշակերտին գրական աշխատութեան նուէրն .
այդ նուէր ի'նչ վայելումներ կուտայ դաստիարակին .
ի'նչ մրցանակ է նորա համար , ի'նչ վարձք . ո'րքան
զգուելի , ո'րքան սիրելի է նորա արտին : Ո'հ , աշխարհի
վրայ երէ երջանկութիւն եւ փառք ունայն բառեր չեն ,
երէ կան առիթներ ուր մարդկային արտին ներելի է հա-
շակել այդ երկու հեծութիւններն , ի նոցանէ մին ալ
անհարակոյս այս պարագայն է , եւ շնորհակալ եմ ինձ ,
Աստուծոյ , որ ինձ կը ներկայանայ ինձ եւ այն :

Սոյն ներքին երանաւէտ զգացումն' զոր կը պատահուէ
ինձ ձօնդ' չպիտի լինէր , սակայն , այնքան խորին ու
բուռն երէ գործդ ինքնին չլինէր ընտիր ու կարող պա-
տիւ բերելու ո' եւ է գրագիտի , երէ բանկագին ընծայ
մը չլինէր այն Հայ ուսուցչութեան , բանկագին գործի

մը հայկազն մանկւոյն գրական նաւակն յղկելու ֆա-
ջայարմար, պատուական դասագիրք մ'որ՝ կարելի է
վստահութեամբ ըսել՝ իւր բազմադիմի առաւելութիւն-
ներովն ու նորութիւններով կը գերազանցէ իւր տեսա-
կին մէջ ամէն հին եւ նոր հրատարակութիւններն եւ որ
պիտի ընձեռէ մեծ դիւրութիւն գրելու արուեստին մեր
վարժարանաց մէջ մշակման :

Արդարեւ փափաքելի էր որ ամէն դասագիրք յօրի-
նող իւր աշխատութեան մէջ ա՛յնքան խնամք եւ հոգա-
ծութիւն, ա՛յնքան փորձ հմտութիւն եւ ա՛յնքան զորժ-
նական ոգի դնէր որչափ դու դրեր ես քու հատորնե-
րուդ մէջ :

Ուստի կը շնորհաւորեմ զեզ արագին, ազնիւ Աս-
ֆանազեան, առաջին երկիդ համար ուր փայլեցուցած
ես ա՛յնքան տաղանդ եւ ընտիր յասկութիւններ, եւ կը
մաղթեմ նորանոր յաջողութիւններ այն նամբուն մէջ ուր
մտար ա՛յնքան փառաւոր կերպով :

Կը համբուրեմ նակասդ որ սիրեց միշտ կֆիլ՝ խոհուն՝
մատենից վրայ :

Ռ. Յ. ԵՒՐՊԵՐԵԱՆ



Վ Ա Ի Ե Ր Ա Գ Ի Բ

Պ Ի Ս Ո Ւ Մ Ն Ա Կ Ա Ն Խ Ո Ր Հ Ր Գ Ո Յ

ԱԶԳՈՅԻՆ ԿԵԳՐՈՆՈՎԱԾ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Հայերէնի և Գրագիտութեան ուսուցիչ՝ Աս-
խնազեան Միհրան էժէնսի աշխատասիրու-
թեամբ պատրաստեալ Տեսական և Գործնական
Գրագիտութեան Ա. մասն Ուսումնական Խոր-
հուրդս վերաբնակելով Երկրորդ սրբազնութեան
առթիւ, զայն լաւ կերպով պատրաստած և
օգտակար գտաւ, և կը յանձնարարէ ի պէս
Ուսումնարանաց և Զ. Գասարանի յարձրագոյն
նախակրթարանաց:

Ի դիմաց Ուսումնական Խորհրդոյ

Ատենադպիր

Ատենապետ

ԳՅԵՆԻԿ Ե. ԶԵՆՏԵՂԻԱՆ

Ռ. Յ. ՔԵՐԵԻՆԱՆ

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Գրադիտութեանս այս երկրորդ տպագրութեան առթիւ հարկ կը համարիմ համառօտիւ ի վեր բերել այն կարևոր փոփոխումներն զորս թելադրեցին ինձ ընել անձնական փորձառութիւնս և հմտալից բարեկամաց ոմանց դիտողութիւնները :

Եւրոպական վերջին գրադիտական դասագրոց համեմատ, ևս ևս իմոյս ամբողջ ընթացքը երկու գլխաւոր մասերու բաժնեցի : Առաջին մասը կը պարունակէ գրելու արուեստին բոլոր կանոնները, և երկրորդ մասը գրուածոց այլ և այլ տեսակները, ըստ որում գրադիտութիւն ըսելով ուրիշ բան չեմք հասկնար բայց եթէ գիտնալ գրելու արուեստը և գրուածոց զանազան տեսակները : Առաջին մասը, այն է շարագրելու արուեստը, երեք էական մասեր կը պարունակէ, որք են Գիւտ, Գօրիկուած և Ոճ. այսինքն գաղափարներ գտնել, զանոնք կարգադրել և յետոյ բացատրել, թէպէտ բանաւոր է այս կարգ, սակայն Ոճը իւր կանոններուն ու ձևերուն բազմադէմ զանազանութեամբը ու ընդարձակութեամբը աւելի երկար ժամանակի ու աշխատութեան կարօտ և, բաց սատի, դեռահաս մտաց ալ աւելի հեշտընկալ ըլլալով, քան թէ Գիւտը ու Գօրիկուածը որք աւելի մտաւորական զարգացում և կարողութիւն կը պահանջեն ուսանողէն, կարևոր համարեցի առաջնութիւն տալ Ոճոյն և մէկ տարուան ընթացք ընել զայն. այսպէս ըրած են նաև Գրադիտութեան Գաղիացի շատ հեղինակներ : Ուստի Գրադիտութեանս ամբողջ ընթացքը սխտի բաղկանայ երեք մասերէ : Ա. Ոճ (եր-

կու հատոր) . Բ. Դիւս և Յօրինուած , հանգերձ ծա-
նօթութեամբք և վարժութեամբք շարադրութեան
գլխաւոր տեսակներու (1 հատոր) . Գ. Բանասեղծու-
քիւն և նարսարխօսութիւն (1 հատոր) : Բոլոր այս
մասերը պատրաստած եմ , որչափ կարելի է , գործ-
նական հրահանգներով և առատ ու բնտիր օրինակնե-
րով , քաջ համոզուած ըլլալով որ Գրագիտութեան
ուսումը առանց գործնականի բոլորովին ապարդիւն
ուսում մ'է : Ըլլան թերևս սմանք , որք գուցէ տա-
կաւին լաւ բմբռնած չըլլալով թէ գործնականը պար-
տի առ երի բնթանալ տեսականին , Գրագիտութեան
միայն տեսական շոր ու ցամաք կմտախախտ դասա-
գիրք մը անձահարար բաղդատութեան դնելով Տե-
սական ու գործնական գասագրոյս հետ մեղադրեն
գիտ թէ շատ կ'երկարեմ ուղին , սակայն կը սպասա-
խանեմ այնպիսեաց . Ի՞նչ աւելի դիւրին քան հարիւր
փոքրիկ էջերու մէջ ամփոփել գրագիտութեան ամ-
բողջ բնթացք մը և վերացեալ կանոններու ու քանի
մը ոյժ և թզուկ օրինակներու շեղակոյտ մը նետել
մեր ուսանողաց առջև : Իմ նպատակը գրագիտու-
թիւն յօրինող մը երևիլ չէ սահայն , այլ Ազգային
մանկատնայն օգտակար ծառայութիւն մը մատուցանել :

Յատակազօծի փոփոխումէն զատ , սոյն այս երկ-
րորդ տպագրութեան մէջ , փորձառութեան յենլով ,
յապաւած եմ ինչ ինչ կանոններ որք տակաւին գրժ-
ուարբմբռնելի կը թուէին ուսանողին , կրճատած կամ
համառօտած եմ հրահանգները կիսովին , բոլորովին
յապաւած եմ քանի մը հրահանգներ , լեզուն աւելի
պարզած , ուրեք ուրեք կանոնները նոր կամ բաղդա-
տական օրինակներով դիւրբմբռնելի ըրած (տես էջ
29 , 83 , 84 , 88 , 89) , նախորդ տպագրութեան մէջ

գտնուած օրինակներէն մէկ մասը կտնտար և մէկ մասը
ի հարկէ վերցուցած, ի հուսկ բան, դասագիրքն աւելի
դիւրուսոյց, դիւրատար և դիւրագին ընելու հա-
մար ամէն ջանք ի գործ դրած եմ: Ի վերջ դասա-
գրոյս Չէ ընտիր հատուածներ հաւաքած և դրած
եմ ազգային մատենագիրներէն (բաց ի միոյն): Այս
հատուածները որք մեծաւ մասամբ նոր են և ար-
դէն հրատարակեալ հաւաքածոյից մէջ չեն գըտ-
նուիր, դասաւորուած են խառն, առանց կարգ մը
իւրեանց սճոյն և նախապատուութիւն ինչ իւրեանց
հեղինակաց մէջ ըլլալու:

Կրճատուած կամ համառօտուած հրահանգաց
կարգը սահուած ըլլալով, նախորդ տպագրութեան
Բանալին տակաւին ի կիրառութեան է:

Քաջայոյս եմ զի այս տպագրութիւնն ևս, ա-
ռաջնոյն նման, ազգային վարժարանաց Մեծ Տնօրի-
նաց, ուսուցչաց և ուսուցչուհեաց համակիր ընդու-
նելութեան սխտի արժանանայ, և սխտի քաջալեր-
ւիմ տանել տակաւ ի կատարելութիւն դասագիրք մը
որոյ եօթն ամերէ հետ ազգային մանկուոյն այնքան
օգտակար և արդիւնաւէտ ըլլալուն կը վկայեն ան-
նախանձ, փորձ և կարող ուսուցիչք:

Մ. Գ. Ա.

Յ Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ո Ց

Նախնական ծանօթութիւնք	1
Սահման և յատկութիւնք ոճոյ	2
Ընդհանուր յատկութիւնք ոճոյ	3
1. ՄԱՔՐՈՒԹԻՒՆ	3
2. ՅՍՏԱԿՈՒԹԻՒՆ	6
1. Պատշաճութիւն բառից	7
2. Առընչութիւն ի մէջ բառից	22
3. Կարգ զազափարաց	26
4. Հոմանիւթ	29
3. ԾՇԴՈՒԹԻՒՆ	33
4. ԲՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ	38
5. ԱԶՆՈՒՈՒԹԻՒՆ	47
6. ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆ	51
Չեմ պարբերութեան	54
7. ՊԱՏՇԱՃՈՒԹԻՒՆ	67
Վերադիւր	67
8. ԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆ	74
Մասնաւոր յատկութիւնք ոճոյ	78
1. Պարզ ոճ	79
2. Միջակ կամ բարեխառն ոճ	82
3. Վսեմ կամ բարձրագոյն ոճ	91
Պարզ, միջակ եւ վսեմ ոներու օրինակներ	
1. Արուեստ բանաստեղծութեան	100
2. Անմահութիւն հոգւոյ	104
3. Անմեղութիւն, աշխատութիւն, համեստութիւն	106
4. Դարձ պանդխտին ի տուն իւր	107
5. Տրտունջք	109
6. Առ բանաստեղծս	110

7.	Սաչ օգնեա ինձ	113
8.	Նիւթ և յառաջդիմութիւն մարդոյ	116
9.	Առ զեփրուն Ալէմաղիի	118
10.	Նամակ առ մանկիկն Լևոն Օտեան	119
11.	Լուսին	121
12.	Մայրենի սիրոյն առաւելութիւնը	122
13.	Ապագայն	123
14.	Յիսուս ի Գեթսեմանի ձոր	125
15.	Յիշատակ մի	127
16.	Մայրական սէր	128
17.	Դաստիարակն	129
18.	Քերականութիւն եւ ոճ	129
19.	Զօն	131
20.	Հայ լեզուն Հնտերոսպակա՞ն է թէ Գուրա- նական	132
21.	Թէ ի՞նչ պարտի գիտնալ քահանայն	134
22.	Պէ՞տք է հեռացնել գրարարը մեր դպրոց- ներէն	136
23.	Ծիծաղ և կերբերոս	137
24.	Յարատեւ աշխատանք	142



ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ



1. Հ. Ի՞նչ է Գրագիտութիւնը .

Պ. Գրագիտութիւնն է Ա. ամբողջութիւնն այն կանոնաց որոց համեմատ շարադրուած են այն ամեն գրուածք որք կը վերարկերին Գեղեցիկ-Դպրութեանց , և Բ. Ուսումն Գեղեցիկ-Դպրութեանց զանազան սեռերուն և նոցա պայմանաց :

2. Հ. Ո՞րք են Գեղեցիկ-Դպրութիւնք .

Պ. Գեղեցիկ-Դպրութիւնք են Քերականութիւն, Բանաստեղծութիւն և Ճարտարխօսութիւն :

3. Հ. Ուրեմն Գրագիտութիւնը քանի՞ մասերու կը բաժնուի :

Պ. Գրագիտութիւնը իրրեւ շարադրութեան ընդհանուր կանոնաց ամբողջութիւն կամ իրրեւ արուեստ գրբերու , կը պարունակէ երեք մասեր , 1. Ոճ , 2. ԳիՏ . 3. ՅՕՐԻՆՈՒՄ , այսինքն՝ գաղափարները Բացատրելու , Գրենելու կամ ընդլայնելու և Դասաւորելու կանոնաց ուսումն . իսկ իրրեւ Գեղեցիկ-Դպրութեանց ուսումն , երկու բան կը պարունակէ , 1. ԲԱՆԱՍՏԵՂՆՈՒԹԻՒՆ և 2 ՃԱՐՏԱՐԽՕՍՈՒԹԻՒՆ . վասն զի ու է գեղեցիկ գրուած կամ բանաստեղծութիւն է կամ ճարտարխօսութիւն :

4. Հ. Գրագիտութեան կամ Գեղեցիկ-Դպրութեանց ուսումը ի՞նչ բանի կը ծառայէ :

Պ. Գեղեցիկ-Դպրութեանց ուսումը կը ծառայէ միաքը մշակելու , յիշողութիւնը զարգարելու , երևա-

կայութիւնը ճոխացնելու , ճաշակը մաքրելու , սիրտը ազնուացնելու և բոլոր մտաւորական կարողութիւնները զարգացնելու :



Մ Ը Ս Ն Ը Թ Ը Ջ Ի Ն

Ո Ճ

Գ Լ Ո Ի Խ Ը .

ՍԱՀՄԱՆ ԵՒ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՃՈՅ

5 . Հ . Ի՞նչ է ոճն .

Պ . Ոճն է եզանակ բացատրելու մեր գաղափարներն ու զգացումներն . կամ այն արտաքին ձեւն որով զգալի կ'ըլլան մեր գաղափարներն ու զգացումներն :

6 . Հ . Քանի՞ տեսակ ոճ կայ .

Պ . Ոճը գրողին նկարագրին (բնււնորութեան) բացատրութիւնն է . արդ որովհետեւ իւրաքանչիւր ոք իրեն յատուկ նկարագիր մ'ունի , հետեւաբար իրեն յատուկ ոճն ունի . ուստի որքան մարդիկ կան , այնքան ալ ոճ կայ . բայց Գրագիտութիւնն սճերու այս բազմակերպ զանազանութեան մէջ գլխաւոր երկու տեսակ ոճ կ'որոշէ . յաւ և յոռի :

7 . Հ . Ո՞րն է լաւ ոճն և ո՞րն է յոռին .

Պ . Լաւ ոճն այն է յորում կը տեսնուին ոճոյ յատկութիւնքն և նորա ձեոց սլատշաճ ու վայելուչ գործածութիւնն . այս հանգամանքներէն զուրկ եղող ոճն յոռի է :

8 . Հ . Ոճը քանի՞ տեսակ յատկութիւն ունի .

Պ . Ոճն երկու տեսակ յատկութիւն ունի ,
ԸՆԴՀԱՆՈՒՐ և ՄԱՍՆԱՒՐ ,

9 . Հ . Ո՞րք են ընդհանուր և ո՞րք մասնա-
ւոր յատկութիւնք :

Պ . Ընդհանուր յատկութիւնք անոնք են որք
անփոփոխելի են և անհրաժեշտ ամէն գրուածոց
համար . իսկ մասնաւոր յատկութիւնք նիւթոց
տեսակին համեմատ կը զանազանին :



Գ Լ Ո Ի Խ Բ .

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՔ ՈՃՈՅ

10 . Հ . Ոճոյ ընդհանուր յատկութիւնք քա-
նի՞ են .

Պ . Ոճոյ ընդհանուր յատկութիւնք ութ են 1 .
ՄԱՐՐՈՒԹԻՒՆ 2 . ՅՍՏԱԿՈՒԹԻՒՆ 3 . ՃԵԴՈՒԹԻՒՆ 4 . ԲՆԱԿԱՆՈՒ-
ԹԻՒՆ 5 . ԱԶՆՈՒՈՒԹԻՒՆ 6 . ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆ . 7 . ՊԱՏԵԱՃՈՒ-
ԹԻՒՆ և 8 . ԴԱՇԵԱՎՈՒԹԻՒՆ ,



1 . Մ Ա Ք Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

11 . Հ . Յորո՞ւմ կը կայանայ ոճոյ մաքրու-
թիւնն .

Պ . Ոճոյ մաքրութիւնն յայնմ կը կայանայ զի

գրողն այն բառերն ու ասացուածները միայն գործածէ զորս բարւոք սովորութիւնը կը ներէ և խօսից մէջ իւրաքանչիւր բառին , Քերականութեան օրինաց համաձայն , իւր պատշաճ տեղն ու ձեւը տայ .

13 . Հ . Ոճոյ մաքրութեան դէմ ի՞նչ թերութիւնք տեղի կ'ունենան .

Պ . Ոճոյ մաքրութեան դէմ երեք տեսակ թերութիւնք տեղի կ'ունենան , Ա . ԽՓԱՐԱՆՈՒԹԻՒՆ Բ . ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՍԽԱԼ և Գ . ՆՈՐԱՐԱՆՈՒԹԻՒՆ .

Ա . Հ . Ի՞նչ է ԽՓարանութիւնն .

Պ . ԽՓարանութիւն կ'ըսուի քերականութեան բառագիտական մասին դէմ գործուած սխալին . ուստի ԽՓարանութիւն է ,

1 . Օսար լեզուի ըստ գործածել . զոր օրինակ , խարհել , չալել , խէր , խալիլ , խարեր եւն .

2 . Օսար քարդեր ու ւծանցումներ գործածել . զոր օրինակ , ասխար , ծնկաչոք , կտրծիկ եւն .

3 . Խոր ու ռակակակա ըստ գործածել որուն կ'ըսուի Ռակակարանութիւն կամ Վաղնջարանութիւն . զոր օրինակ , ւլիք , նիւ , նիս , ինչուան եւն .

4 . Աղաւաղ կամ խանգարեալ հնչում ունեցող բառեր գործածել . զոր օրինակ , վլալ , կլօխ , անկան , օխար , իծծուն , եւն .

Բ . Հ . Ի՞նչ է Քերականական սխալն .

Պ . Քերականական սխալ կ'ըսուի երբոր նախադասութեան մէջ բառի մը այնպիսի տեղ մը , պաշտօն մը կամ ձեւ մը տամք որ հակառակ է քերականութեան կանոնաց . զոր օրինակ երբ ըսեմք

Նորայրիս և մայրիս նուէրներ տուի . փոխանակ
ըսելու՝ Նորօրս և մօրս եւլն . Նոյնպէս

Այս լինին մէջ նաւ մը ընկղմեցաւ . փոխանակ ը-
սելու՝ Այս լինին մէջ եւլն .

Հետեւեալք եւս քերականական սխալի օրի-
նակներ են .

Ամէն ոք պարտաւոր է օգնել իւր ընկերն (ընկե-
րին) .

Այն մարդն ինձ (զիս) ճանչցաւ , բայց ես զայն
չճանչցայ .

Այս դրամն իմ աւստրիական (աւստրիական) շահեցայ .

Քերականական սխալ է նաև՝ շաղկապով ըս-
կուած նախադասութիւն մը աներևոյթ բայով
վերջացնելն . զոր օրինակ ,

Հարուստ վաճառական մը փափաղեցաւ որ մահ-
ուրէնէ առաջ իւր ժառանգութիւնն որդւոցը բաժնիլ .

Պէտք է ըսել

Հարուստ վաճառական մը փափաղեցաւ որ մահ-
ուրէնէ առաջ իւր ժառանգութիւնն որդւոցը բաժ-
նիլ . Նոյնպէս

Մօտեցայ որ անոր ով ըլլալն հասկնալու համար :

Պէտք է ըսել

Մօտեցայ որ անոր ով ըլլալն հասկնամ .

Գ. Հ. Ի՞նչ է Նորարանութիւնն .

Պ. Նորարանութիւն կ'ըսուի երբոր նոր բառ
մը չինենք , կամ արդէն ծանօթ բառ մը նոր
կամ օտար իմաստով դործածենք . ուստի պէտք
չէ ըսել .

Անձնաստիպանեւ փոխանակ ըսելու ինքզինքը սղաննել
Սրճեւ

Հետեւեալներն ալ նորաբանութիւնք են զորս ներելի չէ գործածել.

Այս գործն սրչափ երկար Բեց (տեւեց), Այս հօշկակարէն չերեք զոյգ հօշիկ առիցն (գնեցինք), Շատ տառապանք Բաւեցի (կրեցի), Հայրս գիրք կը կոխէ (կը տպագրէ), Գազաններն անոր որդին փառաւեցին (պատառեցին, գիշտեցին), Այս տղան մէկէ մը չը Բաւուի (չակնածիր), Բարեկամէ մը եղայ (բարեկամ մը կորուսի), Եւրոպացիք տեսակ տեսակ բաներ կը ճանեն (կը հնարեն) և մեր ստակները կ'առնուն եւն.

Այս մարդուն կոնակէն (չնորհիւ) շատ դրամ շահեցայ, Առջի բերան (նախ, զառաջինն) հաւանեցաւ, Բայց յետոյ մերժեց, Եթէ ձեռքս զար (կարենայի) պիտի կատարէի, Որչափ տաս ձեռք կուտայ (կը բաւէ) չըսեր, Անիծեալ ըլլայ այն բանաւորն որ զիս զաւակներէս ըրաւ (անզաւակեց), Պատանին գլխէ ելաւ (մոլորեցաւ, զառածաւ), Ձեր գլխէն անցած (ձեզ պատահած) չէ որ գիտնաք, Ձեր վիճքը կը բաճնեմ (ձեզ կը վշտակցնմ),

Նորաբանութիւն ընել ներելի է, երբոր հարկը միայն կ'ստիպէ:

2. ՅՍՏԱԿՈՒԹԻՒՆ

13. Հ. Ի՞նչ է սճոյ յատկութիւնը.

Պ. Յատկութիւնը սճոյ հիմնական յատկութիւնն է և կը պահանջէ բացատրել մեր գաղափարները այնպէս որոշ կերպով որ կարդացողը կամ լսողը խիղճն և առանց ճգան ըմբռնէ զանոնք:

14. Հ. Ի՞նչ է Խրքնութիւնն

Պ. Խրքնութիւնն ոճոյ յստակութեան հակառակ թերութիւնն մ'է՛ որ յառաջ կուգայ կամ իւր գաղափարները լաւ ու լուսաւոր կերպով չըմբռնելէ, կամ անյատուկ ու երկդիմի բառեր գործածելէ, կամ պարբերութեանց յոռի կազմութենէն և կամ քերականական սխալներէ :

15. Հ. Ոճոյ յստակութեան համար ի՞նչ բաներու պէտք է ուշ դնել .

Պ. Ոճոյ յստակութեան համար պէտք է ուշ դնել . 1) Բառից պաշտանութեան . 2) Առնչութեան ի մեջ բառից . 3) Գաղափարաց կարգին . 4) Հոմանիշ բառերու :

Ի. ՊԱՏԵԱՃՈՒԹԻՒՆ ԲԱՌԻՅ

16. Հ. Ի՞նչ կը պահանջէ բառից պատշաճութիւնն .

Պ. Բառից պատշաճութիւնը կը պահանջէ որ իւրաքանչիւր գաղափար իւր յատուկ բառովը բացատրուի . ինչպէս որ մարդ մը իւր սեպհական անուամբը կ'որոշուի ուրիշ մարդէ, նոյնպէս գաղափար մը իւր սեպհական բառովը կ'որոշուի ուրիշ գաղափարէ : Զոր օրինակ ,

Եթէ ըսեմք « Աստուած ձեռնու կ'ըլլայ նոցա որք կ'իյնան , և կը կանգնի զանոնք որք կը դանդաշեն » ուղիղ բանի դէմ խօսած կ'ըլլամք . զի ամէն մարդ գիտէ որ պէտք է ձեռնու ըլլայ նոցա որք կը դանդաշեն և կանգնել զանոնք որք կ'իյնան :

ՀՐԱՀԱՆԳ 1.

Առակերտը պարտի իւրաքանչիւր գծին տեղ փակագծին մէջ գտնուած բառերէն յարմարագոյնը դնել:

1. *Իւրաքանչիւր շորքտառանի իւր յատուկ ձայնն ունի. առիւծը — , փիղը — , ձին — , էշը — , շունը — , գայլը — , կատուն — , խոզը — , ցուլը — , կովը — , եզը — , ոչխարը — , կոկորդիլոսը — , վագրը — , այծը — , կապիկը — , արջը — , մուկը — (կը խոնջէ. կը պոռոչէ. կը բռնաչէ. կը խրխնջէ. կամ կը վրճոյէ. կը մոնջէ. կ'ոռնայ. կը նուայ. կը պապաչէ. կը մըրմայ. կը նչէ. կը խանջէ. կը գոայ կը գոչէ. կ'առխարէ. կը մայէ. կը բչէ. կը հաչէ կամ կը կաղկանձէ. կը նուայ կամ մխաէ):*

2. *Թռչուններէն ոմանք իւրեանց յատուկ ձայնն ունին. ագռուը — , աղաւնին — , տաարակը — , թռիթակը — , աքաղաղը — , կաքաւը — , կկուն — , արծիւը — , արագիւրը — , սոխակը — , ճնճղուկը — , հնդկահաւը — , վառեակը — , անձեղը — (կը գլղըլայ. կը կրկոյայ. կը խօսի. կը կոնջէ. վուվու կ'ընէ. կը մնջէ. կը բորովէ. կը բիբէ. կը գեղգեղէ. կը քքուէ. կը կառաչէ. կը փափկափէ. կը ննուէ. կը կարկաչէ):*

3. *Մարմինը կը պահպանուի — և հոգին — (բարի գործովք. սննդովք):*

4. *Աստուած հինգ բան կ'առէ. այն լեզուն որ — , այն ձեռներն որ — , այն սիրտն որ — , այն ստաներն որ — , այն սուտ վկայն որ — (անմեղ արիւն կը բափեն. ստուրիւնը կը հաստատէ. կը ստէ. ի շարն կ'ընթանան. անիրաւ խորհուրդներ կ'երկնէ):*

5. *Ո՛վ լսած չէ յաճախ տերևոց — , զանգակաց*

— , թմրկին — , սրնգին — , ծնծղային — , ծղինիին
— , սղոցին — , սմրին — , թնդանօթին — , հողմոյ ն
— , աղբիւրին — , գետայն — , գնդակին — (ղօղան -
չիւնր . Երեւնր . գանչիւնր կամ բինդր . սոյր . դա-
փիւնր . խոնսիւնր . խոխոջիւնր . Եչիւնր . կարկաչիւնր .
բոմբիւնր . նոնչիւնր . մոնչիւնր . պայրիւնր) :

6 . Ծննդեան գիշերն եզրայր մը ծնաւ — , փրկիչ
մը — , բարեկամ մը — , տէր մը — , օրինակ մը — ,
յայթող մը — (վարդապետաց . մահուան . բշուառաց .
գերեաց . բագաւորաց . մանկանց) :

7 . Իւր ծախքն իւր եկամուտին համեմատ կար-
գադրել՝ — է , իւր բոլոր եկամուտը ծախսել՝ — է ,
իւր եկամուտէն աւելի ծախսել՝ — է (անխոնեմու-
րիւն . յիմարութիւն . իմաստութիւն) :

8 . Ամբարտաւան մարդիկ ուսումը — , միամիա-
ները — , խեղացիները — (կը զարմանան ընդ այն .
կ'արհամարհեն . կ'օգտին ի նմանէ) :

9 . Յիսուս Քրիստոս յաշխարհ եկաւ նորոգելու
համար համայն բնութիւնը , սրբազործելու համար
— , զօրացնելու համար — , փրկելու համար — ,
միացնելու համար — (սկսեր . ապականեալը . բա-
ժանեալը . կորուսեալը) :

10 . Համբոււն յաճախ փոխ կուտայ իւր փողը
— , քան թէ — (արժանեաց . հարստութեան) :

11 . Բազումք ի մարդկանէ կ'ուզեն հարստա-
նալ — , սակաւք՝ — (յիպուածով . արդարութեամբ) :

12 . Միայն — թագաւորներն են որ ճշմարտա-
պէս — են (մեծ . արդար) :

13 . Մի՛ ամէնար զգեստիդ — համար , այլ անոր
— համար (բիծերուն . ծակերուն) :

14 . Կենաց մէջ չէ պարտ խնդրել այն առար-

կաներն՝ որք աւելի — ունին, այլ զայնս՝ որք աւելի
— ունին (ծանրութիւն . արժէք) :

15 . Պարտ է նախ — զայն անձն, զոր կ'ուզեմք —
(սիրել . յարգել) :

16 . Ամէն մարդիկ չեն կարող — լինել, բայց աս-
մենեքեան կարող են — լինել (բարի . մեծ) :

ՀՐԱՀԱՆԳ 3 .

Առկերսը պարտի իւրաքանչիւր գծին տեղ փակագծին
մէջ գտնուած բառերէն յարմարագոյնը դնել :

1 . Մտաց անհաստատութիւնը հարկաւորապէս
տարափոխիկ չէ սրտին համար . կարէ ոք փոխել իւր
— և պահել իւր — (կարծիքներն . զգացումներն) :

2 . Յաջս Աստուծոյ չկայ — մը, որ — մ'արժէ
(բարեգործութիւն . աղօթք) :

3 . Հայր Ռիչչի ի Զինաստան — դասեր կուտար,
յորս ճարտարութեամբ կը խառնէր — դասեր (բար-
ոյակամի . երկուշափութեան) :

4 . Բարութիւնը նման է մտաց . կարէ ոք շատ—
յայնմանէ, բայց կարէ շատ — (ցուցունել . չունե-
նալ) :

5 . Չկարէ ոք մեծ մարդ լինել, եթէ աւելի —
ունի քան — (սիրտ . միտք) :

6 . կարէ ոք — լինել առանց — լինելու, բայց
չկարէ երբէք — լինել, առանց — լինելու (առաքինի .
բարեգործ) :

7 . Չարտրդութիւնը բով մ'է, ուր առաքինու-
թիւնը — և փորձաքար մը, ուր — (կը փորձուի .
կը գտի) :

8 . Չարերը կը նմանին —, զոր հողմը կը ցրուէ,
և —, զոր մրրիկը կը յարուցանէ (փռուոյն . յարդին) :

9. Ահա երեք շքնաղ զարդք երիտասարդութեան. — որ գիտէ խորհիլ, — որ գիտէ ի շափուկալ, — որ գիտէ շիկնիլ (դէմք . լեզու . գլուխ) :

10. Տկար մարդը — ի մահուանէ, թշուառը — զայն, քաջը — զայն, իմաստունը — նմա (կը վախնայ . կը կոչէ . կ'արհամարէ . կ'ապասէ) :

11. Մանուկնք կ'ըսեն ինչ որ —, ծերք ինչ որ —, անմիաք ինչ որ — (բրած են . կ'ընեն . կ'ուզեն ընել) :

12. Ծշմարիտ բարեկամներ նոքա են, որ — վըշտաց մէջ և — ձախորդութեան մէջ (կը մխրթան . կ'օգնեն) :

13. Երկչոտ մարդը կ'աշարեկի վտանգէն —, վատն — վտանգին, քաջը վտանգէն — (ի ժամու . յառաջ . յետ) :

14. Աշխարհակալն — է, իմաստունը —, բարեգործ մարդը միայն — է (անարկու . սիրելի . յարգելի) :

15. Գիտութիւնը պահուած է — մարդուն, հարրատութիւնը — մարդուն և երկինք — մարդուն (զանաւէր . առաքիլի . նարպիկ) :

ՀՐԱՀԱՆԳ 3

Աեակերսք պարտի իւրաքանչիւր գծին տեղ փակագծին մէջ գտնուած բառերէն յարմարագոյնը դնել :

1. Մարթի տակ զգիւցազնութենէ, զի կը բազկանայ — է, զորս — կը ներշնչեն — ու մէջ (գեղեցիկ գործեր . մեծ պարագայներ . մեծ զգացումներ) :

2. Իմացականութեան քով, որ —, օժանդակ մը կայ, որ —, յիշողութիւնն է այն (կը փնտէ և կը գտնէ . կը հաւատէ և կը պահէ) :

3. Ձի՞նչ կայ գեղեցկագոյն , կ'ըսէր Պարթէլըմի .
— , Ձի՞նչ հզօրագոյն . — , Ձի՞նչ դժուարագոյն . — ,
Ձի՞նչ հազուադիււ . — (ծանօրութիւն անծիւն . սիե-
զերք . հարկը . ճեմարիս բարեկամ մը) :

4. Տէ՛մակրիդ կը պնդէր թէ , — ցնորք մ'է . —
կեղծաւորութիւն մը , — հաշիւ մը , — արեւուն
խարուսիկ ճառագայթն է (բարեբարութիւնը . բարե-
կամութիւնը . բարեպաշտութիւնը . յօյսը) :

5. Կին մը միշտ գեղեցիկ պիտի լինի , եթէ հաս-
տատապէս ունի նա — իւր աշաց և ձայնին եղանա-
կին մէջ , — իւր զարդուց մէջ , — իւր խօսից և կեր-
պարանայ մէջ (հաղցրութիւն . համեստութիւն . հաշակ
և պարզութիւն) :

6. Տղիտութիւնը — , դիտութիւնը — (կը քա-
րակուսի . կը հաստատէ կամ կը ժխտէ) :

7. — մ'ապագոյն իւր — գօրծն է միշտ (մօր .
մանկան) :

8. Մարդը մեծ չէ այնու — , այլ այնու — (գոր
կը գործէ . որում կը ձեռնարկէ) :

9. Որքո՞ր գանձու համար շան էական յատկու-
թիւնն՝ — է . նորա վերայ յարձակելու համար՝ — է :
(արագընթացութիւնն . քաջութիւնն) :

10. Գորոցի մէջ — կը յաջողի ոք , աշխարհի մէջ
— (նկարագրով . մտք) :

11. Ձգուչացիր — մարդէն , խոյս տուր — մար-
դէն (բարկացոս . կեղծաւոր) :

12. Մեծ մարդիկ միշտ իւրեանց — ժառանգորդն
ունին , բայց դուն ուրեք իւրեանց — (իշխանութեան .
հանճարոյն) :

13. Ոչ ոք կարէ ասել իւր անձին համար թէ —
է , եթէ չէ — (երջանիկ . առաքինի) :

14. — գեղեցկութիւնն յառաջ կը բերէ — գեղեցկութիւն (ոճոյ. զգացման),

15. — վայելելու համար, փափուկ զգայարանք պէտք է. — վայելելու համար, փափուկ զգայարանք և միտք պէտք է (ըստ աստիճանութիւնը. երաժշտութիւնը),

16. — ճշմարիտը կ'որոշեմք սուտէն, — գեղեցիկը՝ տգեղէն (նազակով. ուղիղ բանով),

17. Ամենուրեք այս ձայնը կը լսուի «մի՛ քննէք». պաշտօնեայն կ'ըսէ «մի՛ քննէք», այլ — «սեղանաւորը կ'ըսէ «մի՛ քննէք», այլ — «քահանայն կ'ըսէ «մի՛ քննէք», այլ — «(նաւասացէ՛ք. վնարեցէ՛ք. կասարեցէ՛ք)»,

18. Կեանքն յարատեւ կռիւ մ'է. միշտ կռուիլ մեր — է. յաղթեւ մեր — (նպատակն. պայմանն),

19. Աղքատութիւնը — մ'է, մուրացկանութիւնը — մը (վիճակ. գործ),

20. Օրէնսդիրը — է, որ շինած է զմեքենայն. գատաւորը — է, որ ի գործ արկանէ զայն (մեքենաւարն. մեքենագործն),

ՀՐԱՀԱՆԳ 4.

Աեակերսք պարսի իւրաքանչիւր գծին սեղ փակագծին մէջ զսնուած բառերէն յարմարագոյնը դնել:

1. Փառքը կը գնուի ի գին —, զուարճութիւնն՝ ի գին —, նպաստն՝ ի գին — (անկախութեան. առողջութեան. երջանկութեան),

2. Հաստատամիտ մարդը ամէն բան — կը վերագրէ, եռանդնոտ մարդը՝ —, զգայուն մարդը՝ — (սիրոյ. երեւակայութեան. կամաց):

3 . — լեր գործոց մէջ և — խոստմանց մէջ (հաւասարիմ . հաստատուն) :

4 . Յիսուս Գողգոթա լեռը տարուեցաւ իւրեան — ունենալով զինւորներ և — երկու աւազակներ (ընկեր . ուղեկից) :

5 . Խօսքը վտանգաւոր է ի զէնս . հարուած — հեշտեաւ կը բուժի քան զհարուած — (լեզուի . նիզակի) :

6 . Կան մարդիկ , որոց իւրաքանչիւր — թշնամանք մ'է և անցնիւր — խայթուած մը (խօսք . նայուածք) :

7 . Պէտք է որ — բնակի կնոջ սրտին մէջ , — փայլի նորա ճակատին վերայ , — հոսի նորա շրթներէն և — գրաղեցունէ նորա ձեռներն (աշխատութիւն . համեստութիւն . առաքինութիւն . քաղցրութիւն) :

8 . Գաղափարները գրքի մը — են , ոճը նորա — է (ասղծն . նախապետութիւն) :

9 . Որպէս ձին ծնած է — համար , եղն — համար , շունն — համար , նոյնպէս ալ մարդն — համար (աշխատելու . աշխատելու . որսալու . հետկելու) :

10 . Մարդասիրութիւն ի գործս , — է . ի գոացմունս , — է (բարեսիրութիւն . բարեբարութիւն) :

11 . Ամենուրեք ուր — կը դադրի , — կ'անհետի . զի մին արդիւնք է միւսոյն (գեղեցկութիւն . կարգը) :

12 . Մինչդեռ այս առատաձեռն թագուհին — մի ձեռքը բաշխելու համար իւր ինչքերն այս մեծ քաղաքին մէջ , միւսն ալ — օգնելու համար թշուառ գաւառաց (կը կարկառէր , կը բանար) :

13 . Հեզնութիւնը դուն ուրեք — , միշտ — (կը վիբաւորէ . կ'ուղղէ) :

14 . Մօր մը սիրան երբէք չծերանար . երբ դա-

դարի նա — , յայն սակա է , զի դողարած է —
(բարախելէ . սիրելէ) :

15 . Երեկոյեան սպասէ — դովելու համար . մահ-
ուան սպասէ — դովելու համար (կեանք . օր) :

16 . Պատմութիւնը զմարդն — կ'ընէ , բանաս-
տեղծութիւնը՝ — շափական դիտութիւնք՝ — , փի-
լիսոփայութիւնը՝ — , բարոյականը՝ — , արամարա-
նութիւնը՝ — (նրբամիտ . վառվառն . ուղղադատ .
ճանրարոյ . խորախորհուրդ . հակահասող) :

17 . Մէկն որ — ունի , միւսնոյն ժամանակ —
ունի (կրկին կեանք . նեմարիտ բարեկամ մը) :

18 . Ի՞նչպէս աստորժ է մարդոյն՝ հոգանին ծա-
ռոյն , զոր ինքն — , հոտը ծաղկին , զոր ինքն — ,
համը պաղոյն , զոր ինքն — (ոռոզեց . սնկեց . հա-
սունցուց) :

19 . Ամէն — մարդ — է (չարագործ . դատարկա-
պորտ) :

ՀՐԱՀԱՆԳ 5 .

Առակերսը պարտի իւրաքանչիւր գծին տեղ փակագծին
մէջ գտնուած բառերէն յարմարագոյնը դնել :

1 . Միշտ —ը կը յաղթէ — ին (նարսարագոյնի . զօ-
րաւորագոյնի) :

2 . — համար ներումն — դէմ դաւաճանութիւն
է (առաքինութեան . մոլութեան) :

3 . — հոգւոյն — է (զանձն . առաքինութիւնն) :

4 . Ամէն ինչ բարի կը լինի մարդոյն համար , երբ
իւր կեանքը — կը հայցէ եւ զմեծութիւնն — (յառ-
խասութեան . ի կրօնից) :

5 . Հարուստներու — , դիւցազանց — եւ արքա-

յից — , այս ամենայն կը վերջանան ԱՅՏ ՀԱՆԴՁԻՄՈՎ
փառքը . նոխուրիւնը . մեծվայելչուրիւնը) :

6 . Երկար — երկար — է մահու (ակնկալուրիւն .
կեանքն) :

7 . Մահն արդարոյն համար — մ'է . իսկ մեղա-
պարտին համար — մը (նաւահանգիստ . փոքորիկ) :

8 . Աւելի պէտք է ազահ լինել — քան — (դրա-
մի . ժամանակի) :

9 . Ազահութիւնը դարչելի է , վասնզի — մտաց ,
— սրտի և — նկարագրի նշանն է այն (յոռի . ան-
ձուկ . հպարտ) :

10 . Ազքատութեան — կը պակսի , իսկ ազահու-
թեան — (շատ բան . ամէն բան) :

11 . Ինչ որ կը շուայլէ մարդ՝ — կը խլէ զայն և
ինչ որ կ'ծծութեամբ կը խնայէ՝ — կը բռնայ (յանձ-
նէ . ժառանգորդէն) :

12 . Զմարդիկ խոզխոզելով ոսկի ստանալն — է ,
ծովու վտանգաց մէջ երթալ զայն փնտռելն — է ,
ապականութեամբ և մոլութեամբ զայն դիզելն է —
(ոնիր . վասուրիւն . յիմարուրիւն) :

13 . Դատարարութեան նպատակն է հայթայ-
թել մարմնոյն այն — , զոր պարտի ունենալ և հոգ-
ւոյն այն , — որում ընդունակ է (գորութիւնը , կասա-
րելուրիւնը) :

14 . Վայելէ նախախնամութեան բարիքն , ահա
— . տուր վայելել զայն և այլոց , ահա — (իմասու-
րիւն . առաքինուրիւն) :

15 . Առաքինութիւնը շէ — բնութեան կամ գի-
տութեան , այլ — աստուածութեան (պարզել . պտուղ) :

16 . Զօրաւոր հոգւոյ դործ է — մահը , ինչպէս
նաև — կեանքը (արհամարհել . ասել) :

ՀՐԱՀԱՆԳ 6.

Առակերսը պարտի իւրաքանչիւր դժին տեղ փակագծին մէջ զտնուած բառերէն յաւարագոյնը գնել:

1. Ոչ թէ՛ այն — այլ այն — քան զամենեւեան ուսեալ կը համարուի (որ տաս կ'ընրեանու . որ օգտակար ընրեցմամբ կը պարապի):

2. Ով որ իւր կեանքն ուղեւորութեան մէջ կ'անցունէ բազում — կ'ունենայ , բայց — սակաւ (քարեկամներ . ասպնջականներ):

3. Դիւրին է գտնել — , բայց — անգին արժէք ունին (գիտում տրքներ . ոսկի եւ աղամանի):

4. Չար — կը բուժի , չար — չբուժիր բնաւ (համբար . վերք):

5. Բնական վիճակը — լինել չէ , այլ — (մարդ . բազաւոր):

6. Մի՛ թողուր բնաւ — բարեկամդ , վասն զի — բարեկամ մը չէ կարող նմին նման լինել (երիկեան . վաղեմի):

7. Ամէն ճշմարտութիւնք յարմարաւոր չեն — , այլ միշտ բարւոք են — (ի խօսել . ի լսել):


8. Կրօնքը միայն կարէ կազմել — քաղաքացիներ , — հպատակներ , — սպասաւորներ , — տէրեր , — դատաւորներ , — իշխաններ և — բարեկամներ (բարի . համբերասար . հաւասարիմ . զբաժ . անկաշառ . խօնարհ . հօտարիս):

9. — չէ որ կը խօսէ , այլ — (գասողութիւնը . բանականութիւնը):

10. Չիք — անդ ուր չիք հանդիսա , և չիք հանդիսա անդ ուր չիք — (Ասուած . երջանկութիւն):

11. Կ'րտէք թէ՛ վրայդ , և սակայն կան բազ-

10051



մաթիւ — որք անօգնական կը ծիւրին կը ծնդին
իւրեանց թշուառ անկողնոյն վերայ, — որք կուլան
չունենալով զօք ողբակից, — որք ցրտէն ընդար-
մացեալ, դռնէ ի դուռն կ'երթան, հարուստներէն
իրենց սեղանոյն մի փշուրը խնդրելու և շէն ընդու-
նիր (չուտո՛ւք . հիւանդք . մասալ մանկունք) :

ՀՐՅ. ՀԱՆԳ 7 .

Առակերսը պարտի իւրաքանչիւր գծին տեղ դնել այն
բառն զոր պարբերութեան իմաստը կը պահանջէ : Շե-
ղագիր բառն առընչութիւն ունի այն բառին կամ բա-
ռերուն հետ զորս պիտի գտնէ առակերսը :

1 . Աստուած է որ կը վարձատրէ բարիները , որ կը
պատժէ — , որ կը փթթեցնէ — , որ կը հասուն-
ցնէ — , որ կը դեղնեցնէ — , որ կը ծագէ — , որ կը
գոռացնէ — , որ կը հոսեցնէ — , որ կը ընդստու-
ցանէ — , որ դաւարագեղ կը զարդարէ — :

2 . Մարդիկ հանճարեղ են ի խարեւ զանձինս՝
իւրեանց թերութեանց մէջ . երկչտան ինքզինքը
խոհեմ կը կործէ , աղահէր՝ — , շոայլը՝ — , յանդըզ-
նութիւնը — կը կոչուի , յամասութիւնը՝ — , բարկու-
թիւնը՝ — , հպարտութիւնը՝ — , շատախօսութիւ-
նը՝ — , տկարութիւնը՝ — , ամարդութիւնը՝ — :

3 . Աստուած ստեղծեց խոսքը մարդագետնին հա-
մար , — դաշտին համար , — օդոյն համար , — բու-
նին համար :

4 . Ամէն ծառ իւր կանաչութիւնն ունի . ամէն մե-
ղու իւր — , ամէն ալիք իւր — , ամէն շիրիմ իւր — :

5 . Դպրութիւնք կը դեղեցկացնեն կեանքը , կը
զարդարեն — , կը բարձրացնեն — , կը կրթեն — ,

կ'ազնուացնեն — , կը փարատեն — , կ'ամսքեն — և
կը հայթայթեն բիւր — :

6 . Հիւանդ՝ յայնժամ կը ճանչնամք առողջութեան
յարգը . գերի՛ — յարգը , սնանկացեալ՝ — յարգը ,
ի գահու՛ — յարգը , զառամեալ՝ — երջանկութիւնը ,
լքեալ՝ թէ ի՞նչ կ'արժէ — մը , անպատիւ՝ թէ ի՞նչ
կ'արժէ — , զրկեալ ի մատենից՝ թէ ի՞նչ կ'արժէ — :

7 . Շուայլը կը նախաճաշէ առասուրեան հետ , կը
ճաշէ — հետ , կ'ընթրէ — հետ :

8 . Տպագրութիւնը շնորուեցաւ զրազէսէ մը ,
ոչ բեւեռացոյցը — , ոչ հեռադէտը — , ոչ մանրա-
դէտը — , ոչ վառօդը — :

9 . Աստուած իմ , ջուր տուր աղբերաց , փետուր՝
— , գեղմն՝ — , ստուեր և ցօղ՝ — , առողջութիւն՝
— , հաց՝ — , բնակարան՝ — , ազատութիւն՝ — :

10 . Բարեկամութիւնը ներկայ կ'ընէ բացակայ-
ները , կը հարստացնէ — , կը զօրացնէ — , կը վերա-
կենդանացնէ — :

11 . Երբ բարեկամդ չխաւոր է , դու առատաձեռն
լեր . երբ — է , օգնէ նմա . երբ — է , լուսաւորէ
զայն . երբ այլք — զայն , դու ճշմարիտն ասա նմա .
երբ այլք — զայն , դու մխիթարէ զայն . երբ — ,
— , — շունի , մասնակից արա զայն քո տան , քո
հանդերձին և քո սեղանոյն և յայնժամ գրեզ առա-
քինի պիտի կոչեմ :

12 . Աստուած իւրաքանչիւր ումեք ղէնք մը ար-
ւաւ . առիւծուց՝ ոյժ , —՝ ահաւոր մագիլներ , — եղ-
ջիւրներ , —՝ խայթոց մը և —՝ բանականութիւն :

13 . Յառաջդիմութիւնը կը ձգտի յար բարձրա-
ցրնել փոքրը , — աղքատը , — տգեղը , — տալ տգի-
տին և ոչ թէ — մեծը , — հարուստը , — գեղեցիկը ,
— հանճարեղը :

14. Լաւազոյն է կորուսանել խնձորը քան թէ նորա ծառը, ձուն քան թէ —, բուրդը քան թէ —,

15. Իւր նախաձայրներով պարծիլն, արմատնց մէջ փնտռել է այն պատուներն, զորս պէտք էր — վերայ գտնել:

16. Բնութեան օրինաց հակառակ է անապան ելնել. առաւօտեան օդը կը գովացնէ ուղեղը, — թոքերը, — մարմինը, — ախորժակը:

17. Խօսիլը, սերմանել է. —, հնձել:

18. Մարդը զգաց զի տէր էր եղջերուն որ կ'ընթանար, թռչնոյն որ —, ձկան որ —, այծեման որ —:

19. Վայրենի մը աւելի յարած է իւր — քան իշխան մը իւր պալատան:

20. Տկար մարդիկ կ'ստանան զայլոց հեռ, կը զսան — հեռ, կը մայեն — հեռ, և ամէն կուսակցութեան կուսակից են:

21. Ինչ որ կը գործէ հիւանդութիւնը մարմնոյն վերայ, ժանգը՝ —, ցեցը՝ —, օրդը՝ —, նոյնը կը գործէ մտլութիւնը — վերայ:

22. Մշակութեան համար պարարտ հող պէտք է, աջողակ սերմանացան և ընտիր սերմանիք. դաստիարակութեան մէջ ալ հողը բնութիւնն է, — սերմանացան, և — սերմանիք են:

ՀՐԱՀԱՆԳ 8.

Առակերտը պարտի իւրաքանչիւր գծին տեղ դնել բառ մը զոր պարբերութեան իմաստը կը պահանջէ:

1. Ոսկին կը բանայ ամէն —, կը խտտոյէ ամէն —, կը հարթէ ամէն —, գեղեցկութիւն կուտայ —, խելք՝ —, պատիւ՝ —, անմեղութիւն՝ —, իմաս-

տութիւն՝ — , գիտութիւն՝ — , քաջութիւն՝ — ,

2 . Յիսուս Քրիստոս կը մխիթարէր — , կը բժշկէր — , ի հաւատս կը դարձնէր — , կեանք կուտար — , լոյս՝ — , խօսք՝ — :

3 . Չիք վարդ առանց — , երկինք առանց — ծով առանց — , երջանկութիւն առանց — :

4 . Պէտք է անօթին — , մերկը — , հիւանդը — , վշտացեալը — , տգէտը — :

5 . Մարդիկ ոմանք — ունին և չեն տեսներ , — ունին և չեն լսեր , — ունին և չեն խօսիր , — ունին և չեն քայլեր , — ունին և չեն բռներ :

6 . Բնութիւնը կը սաՀանջէ որ , ամէն ձեռքի մէջ մի գործի լինի . նաւալարն՝ իւր — ունենայ . մշակն՝ իւր — . երկաթագործն՝ իւր — , կօշկակարն՝ իւր — , հիւսնն՝ իւր — , երկրաշափն ու Հարտարապետն՝ իւրեանց — , մեքենագործն՝ իւր — , բժիշկն՝ իւր — , նկարիչն՝ իւր — , արձանագործն՝ իւր — , երաժիշտն՝ իւր — , կինն՝ իւր — , մատենագիրն՝ իւր — . վաս ու անարժան է անգործի ձեռն , պէտք է որ գօսանայ այն :

7 . Մի՛ խօսիք ձեր — վրայ հիւանդի մը առջև , ոչ ալ ձեր — վրայ թշուառի մը առջև :

8 . Մարդիկ ամէն բան շարաշար գործածեցին . — ի նոցանէ թոյն շինելու համար , — գինովնալու համար , — զիրեարս սպաննելու համար , — զինքեանս ապականելու համար :

9 . Չախ և զգիշեր նաւաստին խաղալիկ է տարերաց . հուրը միշտ պատրաստ է — նորա նաւը . օդը՝ զայն — , ջուրը՝ զայն — և ցամաքը՝ զայն — :

10 . Մարդիկ կը գթան յիմարին վրայ , բայց երբ նորա — ը — կ'ըլլայ , կը կապեն զայն :

11 . Մանկունք ալ իւրեանց վիշտերն ունին , բայց

վաղանցիկ են . նոցա ծիծաղը կը փայլի — մէջէն ,
ինչպէս արեւուն մի ճաճանչն — մէջէն :

12 . — Ին կորուսար կը դարմանուի . — Ին կո-
րուսար անդարմանելի է :

13 . Ամէն անգամ որ կեանքէն մեկնելու փորձ
փորձես , գնա փնտռէ — մը օգնելու համար , — մը
զայն մխիթարելու համար , — մը զայն սաշտապանե-
լու համար :

14 . — ու պիտի արուի ձեզ . — ու պիտի գըտ-
նէք . — ու պիտի բացուի ձեզ :

15 . Երբ թութակները կը կրկնեն պարբերու-
թիւններ զորս մարդիկ ուսուցած են նոցա . յայտ է
թէ այն պարբերութեանց — գիտեն և ոչ թէ — :

16 . Ինչ որ է — հոգոյն համար , նոյնն է — հոգ-
ւոյն համար :

17 . Պէտք է որ մարդ իւր ակա՛ջօք — և իւր ա-
ջօք — , երբ խնդիրն ու է ուրուք համբաւոյն վը-
րայ վճիռ տալ է :

18 . Կ'ըսէք թէ կը սիրէք , և բազումք յեզրարց
ձերոց շունին — յազենալու համար , շունին — իւր-
եանց մերկ անդամները ծածկելու համար , շունին —
մը պատասպարուելու համար , ափ մը — վրան ննջե-
լու համար . մինչդեռ դուք ունիք զամէն ինչ յոր-
դառատ :

2. ԱՌՆՁՈՒԹԻՒՆ Ի ՄԷՋ ԲԱՌԻՑ

Բառից պատշաճութեան համար տրուած նա-
խընթաց հրահանգներուն մէջ , դժուարութեան
առարկայ եղող բառերն յաճախ իրարու քով

դրուած էին, երկրորդն առաջնոյն լրացուցիչ-
բայց յաճախ կը պատահի զի այն բառերն որ ա-
ռընչութիւն ունին միմեանց հետ, բառական հե-
ռի կը գտնուին իրարմէ :

Բացատրեմք .

Ձէ կարելի մարդոյ վեսակրիլ կամ բերկրիլ առանց
այլում հաղորդելու իւր — կամ իւր — (վիճըր . բեր-
կրուրիւնը) :

Սոյն պարբերութեան մէջ պէտք է վիշտը յա-
ռաջ գնել քան զբերկրուրիւնն . քանզի այն բառն ,
այսինքն վշտակրիլն ընդ որում առընչութիւն ու-
նի վիշտը յառաջ դրուած է քան զբերկրիւնն . ուստի
պէտք է ըսել :

է է կարելի մարդոյ վեսակրիլ կամ բերկրիլ առանց
այլում հաղորդելու իւր վիճըր կամ իւր բերկրուրիւնը :

ՀՐԱՀԱՆԳ . 1 .

Ասակերտ պարսի իւրաքանչիւր գծին տղ ղնել փակա-
գծին մէջ զսնուած բառերէն զայն զոր պարբերութեան
իմաստն ու յստակութիւնը կը պահանջեն :

1 . Այն հեշտալի վայրին մէջ գարուն և աշուն կը
տիրեն ի միասին , զողելու համար անդ ընդ միմ-
եանս — և — (ծաղիկներն պտուղներն) :

2 . Մարդիկ այնքան յեղյեղուկ են զի կը կործա-
նեն յետ հիմնելու , և — ժամանակի մը մէջ ինչ որ
— ուրիշ ժամանակի մէջ (կ'այրեն . պատեցիս) :

3 . Կրօնք և բարոյական երկու մեծ միջոցներ են .
մին — և միւսն — , ի մեան որոց մարդ կարէ լա-
ւազոյն լինել և հետեւաբար երջանիկ (մարդկային .
երկնային) :

4 . Մատեանք հայելի են . եթէ հայելին ջինջ է , հաւասար գեղով կը ցոլացնէ պալատ մը և խրճիթ մը . — մը սիրտը և — մը սիրտը (դելտոյի . հովուուհւոյ) :

5 . Եթէ դու ունէիր այնքան փափկութիւն քո — մէջ որքան քո — մէջ , ստութիւն մը այնքան անհաճոյ պիտի լինէր քեզ որքան սիւսլ ձայն մը (ականջաց . սրսին) :

6 . Մի բարի մարդու միայն ձայնը պարտի նախընտիր լինել քան տասն չար մարդոցն . յայտ պարագայի պարտ է — ձայները քան — (կռել . հաւուել) :

7 . Իրք փոքունք կը ծնին մեծամեծ իրեր որպէս — կը գործեն — (վսակներ . զեներ) :

8 . Նա — կամ — մէջ էր , ըստ այնմ զի երկիւզը կամ յոյսը կ'առաւելոյր (արսառաց . ուրախութեան) :

9 . Իմաստասէրք աւելի անդամազնին են քան բժիշկ , — ու — (չեն բուժեր . կ'անդամահներան) :

10 . Սէրը կը չափուի յարգանքէն , կ'ըսէ Սիւլիօ Բեյլիքօ . շատ — ու համար մարդկութիւնը , պէտք է շատ — զայն (յարգել . սիրել) :

11 . Միաքը հանճարին քով այն է ինչ որ է — ը — ին քով (կնածելի . մարմարին) :

ՀՐԱՀԱՆԳ 3 .

Աւակերսք պարսի իւրաքանչիւր գծին տեղ ղնել փակագծին մէջ զտնուած բառերէն զայն զոր պարբերութեան իմաստն ու յսակութիւնը կը պահանջեն :

1 . Ժուժկալութիւնը — մը և միանգամայն — մ'է . քանզի մարմնոյն առողջութիւն կուտայ և հոգւոյն՝ կարեւոր հանգարտութիւն երջանկութեան հասնելու համար (առողջապահիկ օրէնք . առաքինութիւն) :

2. Փառամտութիւնն աւելի գիւրութեամբ կը գրաւէ փոքրիկ ոգիները քան մեծ ոգիներն, ինչպէս հրդեհն աւելի հեշտիւ կը ճարակէ — քան — (պալասները . հիւղակները) :

3. Աղէքսանդր կ'ըսէր յաճախ . « Ես աւելի պարտական չեմ Փիլիպոսի քան Արիստատէլի . զի եթէ միոյն — կը սարտիմ , միւսին կը սարտիմ — (կեանք . առաքինութիւն) » :

4. Պարտ է մարդոյ չափով ուրախանալ և չափով արտմիլ , վասն զի կեանքը խառնուրդ է — և — (բերկրանաց . վեճաց) :

5. Լաւ է ներեւլ քան վրէժ առնուլ , վասն զի մին արդասիք է — բարուց , միւսն — բնութեան (վայրաց եւ գազանային . հեղ եւ մարգասէր) :

6. Քրիստոնէական կրօնքն երջանկութեան փիլիսոփայութիւնն է . խոյ մեր նոր փիլիսոփայութիւնը հաճոյից կրօնքն է . մին — , միւսն — (դառն դեղ է բայց առողջարար . կերակուր և ախորժանամ բայց առողջութեան վնասակար) :

7. Ազօթքը նուազ ցաւագին կը գործէ տառապանքը և առաւել անբիծ ուրախութիւնը . միոյն հետ կը խառնէ չդիտեմ որպիսի — , և միւսին հետ — (երկնային բուրում մը . գօրաւոր եւ փողոց բան մը) :

8. Երկնային արդարութիւնը թոյլ շտար երբեք որ — և — յաղթանակ կանգնեն անմեղութեան և իրաւանց վերայ (ոնիրը . անիրաւութիւնը) :

9. Գիտուն բարեկիրթ ազջիկ , գիտուն բարեկիրթ մայր , գիտուն բարեկիրթ զաւակ , Ուրեմն — և — ազջկանց (բարեկրութիւն . գիտութիւն) :

10. Բախտը կապած է մեծութիւնը ի ծայր շրջ-

թայի չէ հնար ու մեք — զմին առանց — ու զմիւսն (կրել . usանալ) :

11 . — աւելի պինդ կը բռնեն զմարդիկ քան — նոցա համար յոյսը շղթայ մ'է , և երախտագիտութիւնը դերձան մը (խոստումներ . բարեբաւութիւններ) :

12 . ներշնչենք երախտագիտութիւն , այլ իբր պարտք շղենք զայն ուրուք վերայ . թող — մը լինի այն , երբեք — մը (զող . շղթայ) :

3 ԿԱՐԳ ԳԱՂԱՓԱՐԱՅ

17 . Հ . Ի՞նչ է գաղափարաց կարգը .

Պ . Պարբերութեան մը այլ և այլ նախադասութեանց մէջ բնական կարգ մը կայ գաղափարաց զոր չէ օրէն տեղափոխել . պէտք է իւրաքանչիւր գաղափարին իւր պատշաճ տեղը տալ . այնպէս որ առաջինը պատրաստէ և բերէ երկրորդը , երկրորդն ալ՝ երրորդը . զոր օրինակ ,

Յոյնք պաւարեցին , առին և կործանեցին Տրովագա քաղաքը :

Այս պարբերութիւնը կը պարունակէ՝ երեք բայ , երեք գործողութիւնք որք բացատրուած են այն կարգաւ որով գործուած են . զի քաղաք մը առնլու համար , պէտք է նախ սկսիլ պաշարել զայն , և յետ առնլու կարելի է կործանել : Ուստի սխալ պիտի լինէր եթէ ըսէինք .

Յոյնք կործանեցին , պաշարեցին և առին Տրովագա քաղաքը :

ՀՐԱՀԱՆԳԻ 1.

Ասակերսը պարսի բնական կարգի վերածել նեհեհալ
պարբերութիւնները

1. Ամէն տարի ծառք կը ծածկուին սաղարբնե-
րով, պտուղներով, կակոններով և ծաղիկներով: 2. Հո-
վին ընթացաւ, անկաւ առ սաս նորա և նեմարեց
զայն: 3. Եւս կերաւ և հաղեց արգիլեալ ծառին
պտուղէն: 4. Միաքը կը դասէ և կը բաղդասէ: 5.
Կոլուացիք այրեցին, աւարեցին, բողոցին, առին և
պաշարեցին զՀոովմ: 6. Երկինք թանձր ամպովք
ծածկուեցաւ, երկիրն ողողեցաւ ի վայրկեան ժամա-
նակի և անձրեւք տեղացին: 7. Գեռք կ'ոռոզեն
դաշակերը, կ'երբան յմզկիան և կը բղխին յերկրէ: 8.
Մարդ կը տառապի, կը ծնի և կը մեռնի: 9. Ոճրա-
գործը բռնուեցաւ, դասուեցաւ, բանտարկուեցաւ,
զլխասուեցաւ և դասապարտուեցաւ: 10. Յիսուս
Քրիստոս մարդ արէնեքէն գուժակուեցաւ, Հրէաստանի
մէջ երջեցաւ, Յուդայէն մտնուեցաւ, քառասուն օր
իւր աշակերտաց հետ անցուց, Ս. Հոգիէն յլացաւ,
կոյսէ մը ծնաւ, Աւետարանը հարողեց, երկինք համ-
բարձաւ, Հօր Աստուծոյ աջ կողմը նստաւ, դժոխք
իջաւ, գերեզման դրուեցաւ, խաչեցաւ, յարեաւ ի
մեռելոց և դասապարտուեցաւ: 11. Փախալ և օձ մը
նեմարեցի: 12. Գորտը նեմարեց զեզն, պայրեցաւ,
ուռեցաւ, փափափեցաւ նորա մեծութեան և ուզեց
նմանիլ նմա: 13. Անգղիացիք կուռեցան, դասապար-
տեցին, զնեցին, այրեցին և դասեցին զՅովաննա
ս'Արք: 14. Յուդա յուսահասեցաւ, ինգրինը կախեց
և վանաւեց իւր Տէրը:

ՀՐԱՀԱՆԳ Զ.

Առակերսը պարտի բնական կարգի վերածել հետեւեալ պարբերութիւնները :

1 . Քնանալուն պէս պառկեցաւ : 2 . Տիտոս կործանեց , պաշարեց և առաւ զՆրուսաղէմ : 3 . Յետ պառկելու ընթրեց : 4 . Գողը կախուելուն պէս բռնուեցաւ : 5 . Դուռը բացին , բաղխեցի զայն և ներս մտայ : 6 . Մարդոյ կեանքը չորս ժամանակներու կը բաժնուի . պատանեկութիւն , մանկութիւն , երիտասարդութիւն , ծերութիւն : 7 . Տիւն երեք մասանց կը բաժնուի . միջօրեայ , երեկոյ , առաւօտ : 8 . Նաւամատոյց իջայ , նաւ մը նշմարեցի , նաւը մտայ , մեկնեցանք , տոմսակ մը գնեցի , առադաստ բացին , անցազնոյն տեղեկացայ , խարխսի վերուցին : 9 . Աստուած է որ կը պահպանէ մեր կեանքը և կուտայ զայն մեզ : 10 . Երկու ախոյեաններն իրարու կը մօտենան , վար կը ծռին , կ'ընկրկին , վերջապէս զմիմեամբ կը փարին և յանկարծ վեր կը ցատկեն : 11 . Միտքը կը դատէ , կը վճռէ : 12 . Պուալոյ մեղկութեան ուժաւորութիւնն նկարելու համար ըսած է « Բազուկները կը տարածէ նա , կը հառաչէ , աչքերը կը փակէ և կը ննջէ » : 13 . Կաքաւը բոյն մը շինեց , թխսեց , ձու ածեց : 14 . Դուլիէլմոս Թէլ կը լարէ իւր աղեղն , նեաը կը մեկնի , նպատակին կ'ուղղէ զայն , կը շէշէ : Բոլոր ժողովուրդը կը ծափահարէ , խնձորը կը զարնէ : 15 . Չարք կը փախչին յիրերաց և կը կասկածին :

4. ՀՈՄԱՆԻՏԷՔ

18. Հ. Հոմանիչ ո՞ր բառերուն կ'ըսուի .

Պ. Հոմանիչ կ'ըսուի այն բառերուն որք գրեթէ միևնոյն նշանակութիւնն ունին .

19. Հ. Իրապէս հոմանիչ բառեր կա՞ն .

Պ. Ուէ լեզուի մէջ իրապէս հոմանիչ բառեր չկան . հոմանիչներն ընդհանուր գաղափարի մը երկրորդական այլ և այլ առումները կը ցուցնեն . այսպէս ակումբ, կաճառ, երամաղ, հօս, երամակ, վոհմակ, երամ, ճահուկ, հոյլ, բոյլ, գիհ, հօրան, վսառ բառերը կը նշանակեն խումբ այլ և այլ իրաց . ընդհանուր գաղափարն է այս որոյ նըկատմամբ հոմանիչ են վերոգրեալ բառերն . Բայց երբ ուզենք աւելի յստակութիւն դնել խօսքին մէջ, յայնժամ ոչ ևս են հոմանիչ, և իւրաքանչիւրն իւր յատուկ տեղն ունի . այսպէս,

Ակումբ կը նշանակէ խումբ մարդկան

Կանառ	»	»	գիտուն, ուսեալ մարդկան
Երամաղ	»	»	տղայոց
Հօս	»	»	խաւանց, արջառոց
Երամակ	»	»	խոզից, ձիոց, ուղտուց
Վոհմակ	»	»	գայլոց, ցանց
Երամ	»	»	բոչնոց
Ճահուկ	»	»	աղուխուց
Հոյլ	»	»	ձողկանց
Բոյլ	»	»	ասեղաց
Գիհ	»	»	ոչխարաց
Հօրան	»	»	այծից
Վսառ	»	»	ձկանց

*Երբեմն այս համանիշներն փոխարեքութեամբ
ուրիշ իրաց համար ալ կը գործածուին :*

ՀՐԱՀԱՆԳ 1.

Հետեւեալ գոյականաց իւրաքանչիւրին երկու հումանիւ
զսնել :

Ա. 1. *Ձեփիւռ* : 2. *Որմ* : 3. *Նեա* : 4. *Նաւ* : 5.
Բանակ : 6. *Հովանի* : 7. *Դող* : 8. *Կապ* : 9. *Ուղե-
ւոր* : 10. *Բիծ* :

Հետեւեալ ածականաց իւրաքանչիւրին երկու հումանիւ
զսնել :

Բ. 1. *Փառաւոր* : 2. *Բարեկամ* : 3. *Բարակ* : 4.
Լի : 5. *Անգութ* : 6. *Հատու* : 7. *Սին* : 8. *Վայրե-
նի* : 9. *Կլոր* : 10. *Յայտնի* :

Հետեւեալ բայից իւրաքանչիւրին երկու հումանիւ զսնել :

Գ. 1. *Հանդիպիլ* : 2. *Սրել* : 3. *Կշտամբել* : 4.
Դիզել : 5. *Հողալ* : 6. *Ուսնուլ* : 7. *Լալ* : 8. *Համ-
բել* : 9. *Յողնիլ* : 10. *Մաղրել* :

ՀՐԱՀԱՆԳ 2.

Հետեւեալ պարբերութեանց մէջ աւակերսը պարսի շե-
ղագիր բառերուն տեղ իւրեանց հումանիւր ղնել առանց
խօսքին իմաստն այլալիւ :

1. *Ճճմարիտ բարեկամն ի վեր է քան զամենայն
զանձս աշխարհի* : 2. *Նա որ ամենուն բարեկամ է ,
ոչ ուժք է բարեկամ* : 3. *Ազաճով բարեկամ համարէ
քեզ այն անկեղծ մարդն որ պակասութիւններդ կ'ի-
մացնէ , քան թէ զայն որ կը զովէ ամէն ինչ որ
կ'ընես* : 4. *Ճճմարիտ բարեկամն իւր բարեկամին ու-
րախօսքանն ուրախակից և ցաւոցը ցաւակից կը լի-*

նի, և պակասութեանցը վրայ ներողամիտ աչօք կը նայի: 5. Ապերալէս մարդուն սիրտը կը նմանի անպատի որ յերկնից իջած անձրեւն անյագարար կը ծծէ, կը կնէ ու ոչինչ կը բուսցնէ: 6. Ու՛մ գրուցես դաղանիքդ, նմա դերի կ'ըլլաս: 7. Ազանը կը կ'արծէ թէ սսկին ու արծաթն են երջանկութիւն, մինչ, ընդհակառակն, միջոցք են նոքա երջանկութիւնը ձեռք բերելու: 8. Ի բոլոր սրտէ պատուէ ձերուքի հայրդ, և մօրդ գորովալից խնամքը մի մտնար: 9. Նա որ իւր կիներ կը ձեռնէ, աջ ձեռամբ ձախ ձեռքը կը ձեռնէ: 10. Մարդոյ կեանքը օրագիր տեսարակ մ'է, մէջը բարի գործեր միայն գրելու է: 11. Մարդ իւր բարեկարգութեանց պտուղը կը կորուսանէ, երբոր ինքը կ'սկսի զանոնք գովել: 12. Սիրելի վաճառականին ապրանքը շուտով կը ծախուի: 13. Եթէ բարձրանաս, աշխատէ որ այլք չփափագիս անկուճդ տեսնել: 14. Փառքը կը վայելէ այն սրտին միայն որ գիտէ ճանել զշտաց և ոճնակոխ ընել զճեշուրիւնս: 15. Ազան հօր, շոյլ որդի: 16. Բնու վոքրիկ բւնամի չկայ: 17. Լուսադոյն է միայնակ երթալ քան շարի մը ընկերութեամբ: 18. Նա է հարուստ որ ոչ իմիք կը փափափի: 19. Երանի այն աշակերտին որ իւր աշխատասիրութեամբ, և համես վարութն իւր բոլոր դաստառաց համարմանն արժանացած է: 20. Զեփուոբ կը զգուեն ծաղիկները:

ՀՐԱՀԱՆԳ 3.

Հետեւեալ գոյականաց երեքական հոմանիօ գտնել:

- Ա. 1. Մութ: 2. Վերարկու: 3. Տառն: 4. Բազուկ: 5. Ազմուկ: 6. Վնաս: 7. Սոսոսկիք: 8. Գոյն: 9. Սանձ: 10. Կանթեղ:

Հետեւեալ ամականաց երեքական հումանիւզ գտնել .

Բ. 1 . Իմաստուն : 2 . Ազնուական : 3 . Տկար : 4 . Ազտեղի : 5 . Ոխակալ : 6 . Խորերայ : 7 . Քնքուչ : 8 . Շատակեր : 9 . Չոր : 10 . Բերրի :

Հետեւեալ քայերուն երեքական հումանիւզ գտնել :

Գ. 1 . Քիչնալ : 2 . Ծուլանալ : 3 . Փախչիլ : 4 . Մօտենալ : 5 . Նախանձիլ : 6 . Ընթանալ : 7 . Փայլիլ : 8 . Շողոքորթել : 9 . Պատրաստել : 10 . Բժշկել :

ՀՐԱՀԱՆԳ 4 .

Հետեւեալ պարբերութեանց մէջ , աւակերտք պարտի շեղագիր բառերու տեղ իւրեանց հումանիւզը դնել առանց խօսքին իմաստն այլայլելու :

1 . Սոխակն անտառաց երգիչն է : 2 . Ազունին կը կանչէ իւր վարուժանը ողբալիս ձայնով մը : 3 . Գեռանաս իշխանը զարմանօք տեսաւ այս փոքրիկ հասարակապետութեան կարգը , փոյթն ու ջանքը : 4 . Յաջողութեան մէջ դիւրին է բարեկամ մը զտնել : 5 . Եսայի գուշակեց Նրուսազեմի ազէտքն : 6 . Փիղն օձէն կը վախնայ : 7 . Համբաւը մեծ շաղակուս մ'է : 8 . Գթութիւնն առաքինութեանց առաջինն է : 9 . Այն գերին Պիթիս կը կոչուէր : 10 . Երկինք Աստուծոյ փառքը կը պատկէ : 11 . Քաղցրութիւնը կը հանդարտեցնէ բարկութիւնը : 12 . Մարդիկ կը սովորին չարին ինչպէս բարւոյն : 13 . Չափաւորութիւնն երջանկութիւն կուտայ մեզ : 14 . Ամէն ինչ որ կը փայլի սուկի չէ : 15 . Պէտք է կայսեր տալ ինչ որ կայսեր կը վերաբերի : 16 . Մեծութիւնն և հարատւութիւնն զմեզ երջանիկ չեն ընէր : 17 . Տեսնուած չէ մարդ մը որ զզայ բարի գործ մը ընելուն համար : 18 . Տիրոջը

տար ձեռքով շտկուած, նաւահանգիստ հասաւ
անհորձ, անշխաս:

Ք Ռ Ի Լ Ո Վ



ԳԻՍԱԽՈՐ, ԱՍՈՒՊ, ԵՐԿՆԱՔԱՐ

Երբեմն երկնից երեսն այնպիսի աստղեր կ'երեւին որ լուսաւոր պոչ ունին: Այս աստղերն՝ որ լոյսն արեւէն կ'առնեն, չէ՛սէր կ'ըսուին, այսինքն չէ՛ ունեցող աստղեր: Այս գէսը փայլուն օդ է, շատ երկայն: Բոլորակի շեն դառնար, այլ շատ երկար ձուածն չըջան մը կ'ընեն:

Հասցա ս'ըջափ սիրուն են այն շողուն կէտերն որ շուտ շուտ երկնից երեսը կը սահին վերէն վար և լուսաւոր կոր գիծ մը գծելով՝ յանկարծ կը մարին: Այս մանր աստղերն --- էր կ'ըսուին: Բայց ինչո՞ւ կը մարին - ինչու որ մեր մթնոլորտին շփուելով փայլելէն ետե՛ կրր անոր սահմանէն կը հեռանան աներեւոյթ կ'ըլլան մեզի: Ասուպները տարուան մէկ քանի ամիսներուն մէջ շատ կ'երեւին:

Մանր թափառիկ աստղեր են ԵՐԿՆԱՔԱՐ, որոց մէջ սովորաբար երկաթ կը գտնուի, և մթնոլորտին բարձունքէն վար կ'իյնան: Ատեն ատեն երկնաքարերն առատ կ'իջնեն, ինչպէս 1803ին Նորմանտիոյ նահանգին մէջ անձրևի պէս տեղացին: Երկնաքարին շափն որոշ չէ: Այլ և այլ մեծութեամբ երկնաքարեր գտնուած են:



Բնութիւնն անունը կուտանք այն ամեն բաներուն որ Արարչին ձեռքէն ելած են. Բնութիւնն երեք կարգ կը բաժնուի. 1-ինը կարգն, որու մէջ կը պարունակուին բոլոր հանածոք, ոյսինքն քարեր և մետաղներ. 2-ինը կարգն, որու մէջ կը պարունակուին բոյսերը կամ տունկերը, այսինքն խոտերը, թուփերը, ծաւերը. 3-րդը կարգն, որու մէջ են կենդանիները, այսինքն անասունները, նոյնպէս մարդը.

Կենդանիները գործարաններ ունին այն պէս որ կը կերակրուին, կը շարժին, կը մշտածեն, մէկ խօսքով կ'ապրին, ասոր համար 2-րդ արարածներ կ'ըսուին.

Բոյսերն ալ գործարաններ ունին սնանկու համար, բայց մինակ չէ 2-ինը, վասն զի չեն կրնար ոչ տեղէ տեղ շարժիլ, ոչ զգալ, ոչ մտածել, ուստի անզոյս են և անկենդան. Իրօք ո՞վ տեսած է ծառ մը որ խնդայ, երգէ, շարժումներ ընէ.

Իսկ հանքերը, անգործարանաւոր մարմիններ կամ առարկաներ են, ինչու որ գործարան չունին. ոչ կենդանիներուն և ոչ բոյսերուն պէս կ'ապրին. այլ միայն երկրի վրայ անշարժ կը մնան և հանքահանները հողին տակէն կը հանեն ահագին ծակեր բանալով.

Ճ Ա Ր Տ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Մարդ շատ բաներու պէտք ունի. կերակուր, զգեստ, բնակարան կ'ուզէ. Արդեօք այս պիտոյքը պատրաստ կը գտնուին երկրի վրայ. ո՛չ, երկիրը բարերեր է, բայց ինքնին շատ բան չը տար մեզի. պէտք է —չ—չլ այդմեր պիտոյքը հոգալու համար. եթէ երկիրը չհերկենք ու չը ցանենք՝ ցորեն ու հաց չենք ունենար. եթէ գետինը փորելով քարեր ու մետաղներ չհանենք, եթէ անտառներէն փայտ չկտրենք՝ գործիք, տուն ու բնակարան չենք կրնար շինել. եթէ ոչխարներ չպահենք և անոնց բուրդը չմանենք ու չհիւսենք՝ ըզգեստ չենք կրնար շինել. Ուստի այն մարդն որ կ'ուզէ ապրիլ և օգտակար բաներ վայելել՝ պարտաւոր է աշխատիլ ու հ—ր—ը ըլլալ. Այն մարդը որ մարմնով ու մտքով տկար է՝ չը կրնար աշխատիլ.

Այն ժողովուրդն որ չաշխատիր և միայն վայրի պտուղներով կը սնանի՝ վայրենի վիճակ ունի. Այսպիսի վայրենիներ կան աշխարհիս այլ և այլ կողմերը. Անոնք ողորմելի կեանք ունին, հանգիստ բնակարան, ըզգեստ ու կերակուր չունին, և որովհետեւ նեղութեան օրեր պաշար չեն պատրաստեր՝ շատ անգամ անօթութենէ կը մեռնին.

Երբ ժողովուրդ մը ժիր ու ճարտար է՝ ա-

ւելի հանգիստ կեանք կ'անցընէ : Արտեր կը մշակէ , արջառններ կը պահէ , տուններ ու մեծ շէնքեր կը շինէ , գործարաններ կը բանայ , ուրիշ ժողովուրդներու հետ առուտուր կընէ , և օրէ օր նոր արուեստներ ու գիտեր կը գտնէ , որով աւելի շատ գիւրաւ բաներ կ'արտագրէ : Այն երկիրներն՝ ուր ճարտարութիւնը ծաղկած է՝ աւելի բազմամարդ են քան թէ այն տեղերն՝ ուր ճարտարութիւն , ապրուստ չըլլալով՝ շատ քիչ մարդիկ կը գրտնուին :

Բ Ե Ն Ի Ա Մ Ի Ն

Ամերիկայի Պոսթօն քաղաքը Բենիամին անուանով տղայ մը կար : Հայրն աղքատ էր և չէր կրնար իր որդւոյն պիտոյքը հոգալ : Բենիամին իր հօրը վրայ բեռ չըլլալու համար տագարան մը մտաւ ու գրաշար եղաւ : Բայց ուսմունքն ալ շարունակեց : Առանձին կ'աշխատէր : Շատ կը սիրէր գիրք կարդալ և իր աւուրչէքէն աւելցած ստակով գիրքեր ծախու կ'առնէր : Կանուխ կ'արթննար , ժամանակին իր գործը կ'սկսէր և ժամ մը պարտոյ չէր անցընէր : Բենիամին օրէ օր յառաջ կ'երթար թէ՛ արուեստին և թէ՛ ուսմունքին մէջ : Երբոր տասնեօթն տարու եղաւ , Ֆիլատելֆիա գնաց և գրաշարի արուեստը շարունակեց :

Ուշիմ ու ժրջան էր Բենիամին , արդէն կա-

բող էր մաքուր ու կոկիկ սճով նամակ գրել: Քա-
ղաքին կառավարիչն անոր մէկ նամակը տեսնե-
լով շատ հաւնեցաւ, և դանի պաշտպանեց: Բե-
նիամին Լոնտոն ճամբորդեց և այն տեղ ալ գործը
շարունակեց: Երբ ուրիշ գործաւորներ շարաթը
չորս հինգ շիլին գարեջուրի կուտային, Բենիամին
կ'զգուշանար ոգելից ըմպելի խմելէ և ստոր հա-
մար միտքն աւելի բաց, աւողջութիւնն աւելի կայ-
տառ էր և աւելի շատ ստակ կը խնայէր: Քսան
տարու էր երբոր նորէն Յիլատելֆիա դարձաւ:
Շատ աւելի ճարտար ու խելացի եղեր էր Բենիա-
մին: Ոչ միայն տպարանի գործը կը կատարէր այլ
և իրեն համար մանր թերթ մը կը տպէր և բա-
րեկամներուն կը ցրուէր: Իր ժիր, պարկեշտ և
ուղիղ վարքով ամենուն սիրելի եղեր էր Բենիամին
և օրէ օր յարգ ու յաջողութիւն կը գտնէր: Քիչ
ատենէն ինքն իր գլխուն գործ մը սկսաւ. լրագիր
մը հրատարակեց, անոր մէջ իմաստալից բաներ
գրեց և բաւական ստակ շահեցաւ: Բայց Բենիա-
մին թէև աւելի ունեւոր էր, միշտ ժուժկալ կեանք
մը կը վարէր. քիչով կ'ապրէր, պարզ կը հագուէր
և շատ անգամ ինք լրագրին համար սոսաժ թուղ-
թը սոցլակով տպարան կը կրէր:

Բենիամին քիչ քիչ գործը մեծցուց. թղթի խա-
նութ մը բացաւ, և սկսաւ գրչեշնչ մը հրատա-
րակել, որուն մէջ շատ ընտիր խրատներ կային: Այս
ժանր գրադմունքին մէջ ժամանակ ալ կը գտնէր
նոր նոր բաներ սորվելու: Շատ շանցաւ կառավա-
րութեան պաշտօնի մէջ մտաւ և մատենադարան
և ուսումնարան հաստատեց իր հայրենակիցներուն
օգտակար ըլլալու համար:

Բենիամին թէպէտ երեսուն տարեկան եղեր էր բայց միշտ նոր բան սորվելու կ'աշխատէր: Ինք գտաւ շնորհաբեր: Գործիք մ'է այս որ կ'արդիւն կայծակը տուներու վրայ իջնելու և մարդոց վնաս տալու: Անպատ որ մը թռուցիկ թռցնելու ատեն այս գիւտն ըրաւ, որով բոլոր Եւրոպայի մէջ մեծ անուն առաւ: Բենիամին շատ ծառայութիւններ մատուցց իր հայրենիքին և անոր ազատութեան համար բոլոր ճիգը թափեց: Աղքատ տղայ մ'էր, բայց իր աշխատութեամբը, խելքովն ու իր արդարասիրութեամբը մեծ պատիւ ու հարստութիւն ստացաւ: Այս Բենիամին ՅԲԱՆՔԱԻՆՆ է, որու յիշատակն այսօր ամեն մարդ կը սիրէ ու կը յարգէ:



Ժ Բ Ո Ի Թ Ի Ի Ն

Ինչպէս մանր ժիր մեղուն, օդին մեջ շուտ կը սահի, մեղր ծծելով օրն ի բուն, ամեն նորարոյս բարձր ծաղիկ. — Նոյնպէս ես պիտ' ըլլամ ժիր ամեն դասի ու գործի: Դու ալ, բնկե՛ր շուտ փախիր ծուլութենէ չարոգի: — Իմ նոր սարիք բո՛ղ անցնի, ուսումնոյն ու ողջ խաղով, որ կարենամ նոր ժամի՛ համարս տալ գոհ արտով:—



ԵՐԿՐԱՇԱՐԺ, ՇՐԱՅՈՒԻ

Քանի մը տղայք պարտէզի մը մէջ հանդարտ կը խաղային, երբոր յանկարծ ահ ու դողով սկսան

ասողիս անդին վազվզել, և երուանդ, որ ութ տարեկան էր, պառաց.

«Հողը կ'երերայ ստքիս տակ. արդեօք սատանան կը շարժէ երկիրը:

Տիգրան իր եղբորն երուանդին ազազակը լսելով դուրս պարտէզը վազեց ու ըսաւ. — Մի վախնաք, տղայք, երէշ-շէշ է. վտանգ չկայ:

ԵՐՈՒԱՆԿ. — Ի՞նչ է երկրաշարժը:

ՏԻԳՐԱՆ. — Երկրին խորը կրակ կայ. այս կըրակէն շատ մը նիւթեր կը հալին, կ'եռան և դուրս պոսթկալ կ'ուզեն. երբոր ծակ մը շղտնեն՝ տեղ տեղ հողը կը ցնցեն: Այս ցնցումն կ'ըսուի երէշ-շէշ, որով երբեմն հողը կը պատուի, ծառեր կը տապալին, տուներ կը փլին, քաղաքներ կը կործանին: Սովորաբար այս ցնցումներն երկար չեն տևեր. քիչ մը ատեն հողին մէկ մասն կ'երերի, ինչպէս նաևակ մը ջուրին վրայ:

ԵՐՈՒԱՆԿ. — Այդչափ ոյժ ունի՞ կրակը:

ՏԻԳՐԱՆ. — Անշուշտ: Ա՛ն տան մը, մէջը ջուր դիր, բերանը լաւ մը գոցելով կրակին վրայ դիր, պիտի տեսնես որ սանին խուփը վեր պիտի ցատկէ շողխացած ջրէն: Նոյնպէս երկրին միջևը գըտնուած մետաղները հեշտ-հեշտ կոյտ մ'են որ շարունակ կ'եռան:

Երկրաշարժներ աւելի շատ կը պատահին այն երկիրներն ուր հր-հր-հր կան: Հրարուխը լեռ մ'է որու գագաթէն կրակ կ'ելնէ: Ատեն մը երկրին կեդրոնին կրակն անոր կեղևը պատուած է, այսինքն այն ահագին ժայռերն որ հողէն և աւազէն վար կ'գտնուին, և այսպէս վրէշ-շէշ ձևացած են:

4406707



Նշանաւոր է Մ—ի— կամ Այր—դ— լեռն, որու համար կ'ըսուի թէ ատեն մը հրաբուխ էր: Ս—ն—դ—ն կ'ըսուի հրաբուխին բերանն որմէ վար հորի պէս է: Սառնարանն՝ որ ձաղարի ձև ունի, երբեմն կէս մզոն լայն է և հալած ու —յը— նիւթեր դուրս կը նետէ, ինչպէս ծծումբ, ջուր, քար, այնչափ որ բոլոր շրջակայ տեղերը կը ծածկեն:

☞ Ասոյ մէջ շատ հրաբուխներ կան, բայց ամենէն շատ Ամերիկա կը գտնուին: Ակոսի ու Գուին քաղաքներն երկրաշարժէ կործանած են: Երևելի են Եանա, Վէսուվ եւ Հեկլա հրաբուխներն Եւրոպայի մէջ:

Մովուն տակ ալ տեղ տեղ հրաբուխներ կան, այնպէս որ երբեմն կ'ընէ ջրին երեսը կ'երեւին, երբեմն ալ կը կորսուին:

ՆԻԿՈՂՈՍ ԵՒ ԻՐ ՔՈՅԸ

Ահա Նիկոզոս կուգայ. ո՛րչափ ազտտա է, իր այտերն ու ձեռքերն ածուխի պէս սև են. ըզուռնգները ճիրաններու կը նմանին, ա՛յնքան երկար են. մազերը տակնու վրայ են, կարծես թէ ողջտիկ վայրենի մ'է:

Նիկոզոսին քոյրը մաքուր է. միշտ կը խըրատէ իր եղբայրն որ մաքրուի, ինք միշտ ջրով ու աճառով կը լուացուի, ինչու որ դիտէ թէ մաքրութիւնն առողջութեան օգտակար է, երբոր մէկը ստէպ կը լուայ երեսն

ևւ մաքուր կը պահէ մարմինը՝ շատ հիւանդ չըլլար :

Նիկողոս կը տեսնէ որ իր աղտոտութեան պատճառաւ ամենուն ատելի կ'ըլլայ, ուստի միտքը կը դնէ մաքրուիլ ամեն օր: Ականջներն ու ակօանները պիտի լուայ, ըզունգները պիտի չկրծէ, այլ ամեն շաբաթ մկրատով պիտի կտրէ, հագուստները պիտի մաքրէ և իր քրօջը խօսքը պիտի պահէ :

Հ Ա Մ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Երբոր տղայ մ'ինքզինքը կը գովէ կամ իր վրայ շատ կը խօսի ու կը պարծի՝ ուրիշներուն ծիծաղը կը շարժէ: Ուստի պարտաւոր ենք ոչ միայն համեստ ըլլալ՝ այլ ուրիշներուն տուած գովեստը խոնարհութեամբ ընդունիլ: Արժանաւոր մարդն անգամ երբոր կը գովուի՝ ուրիշներուն համարումը կը կորսունցընէ, ուր մնաց ինքնահաւան ու տգէտ մարդըն, որ գոռոզութեամբ կը կարծէ թէ ամեն բան գիտէ և ամեն տեսակ լաւ ձիրք ունի:

Պէտք չէ որ մարդ ինքն իր վրայ մեծ համարում ունենայ և ուրիշներուն կարծիքն արհամարհէ, վասն զի մեր կարծիքն ալ կըրնայ սխալ ըլլալ: Պէտք է որ մարդ միշտ մըտածէ, թէ ո՛րչափ լաւ յատկութիւններ ու-

Նենայ՝ իրմէ աւելի բարի , աւելի արդարա-
սէր , աւելի ազնիւ , աւելի խելացի մարդիկ
կրնան գտնուիլ աշխարհիս վրայ , և իր վար-
մունքը շտկէ :



Ս Ա Հ Ա Կ

Շատ անգամ գիտուն ու մեծ մարդիկ աւելի
համեստ կ'ըլլան քան թէ տգէտ ու անախտան
մարդիկ : Սահակ որ շատ ուշիմ և արթուն տղայ
մ'էր , պարծենկոտութիւն չունէր :

Երբոր զպրատուն կ'երթար՝ լռիկ մեջիկ իր դա-
սերով կը պարտաւէր : Յետին ծայր ճարտար էր և
խաղի ժամերը կ'անցընէր շատ հետաքրքրական
բաներ շինելով : Այլ և այլ սղոցներ , մուրճեր ,
հերիւններ ունէր և գործածելը գիտէր : Իր տան
քովը հովաշարժ աղօրի մը կար : Սահակ ամեն օր
կ'երթար այս աղօրին կը քննէր որ հասկընայ թէ
ինչպէս կը դառնայ : Երբոր անոր այլ և այլ մա-
սերը գիտեց , նստաւ մանր աղօրի մը շինելու , մե-
ծին նման , իր դանակով , սղոցովն ու մուրճովը :
Շատ սիրուն ու կոկիկ աղօրի մը շինեց : Երբեմն
կ'ընէր տանիքին վրայ կը դնէր աղօրին որ հովէն
դառնայ : Նոյնպէս ջանաց իր աղօրին մուկի մը
դարձընել տալու : Գոգաւոր անուի մը մէջ կը դը-
նէր այս սղօրի կենդանին որ քանի դուրս ելնե-
լու համար ճիգ կը թափէր , աղօրին կը դառնար :
Անուին տակը քանի մը ցորեն ալ կը դնէր և երբոր
մուկն ցորեն առնելու կը ջանար , աղօրին կը դար-

ձրնէր : Իր սենեկին պատերուն վրայ ածուխով տեսակ տեսակ նկարներ շինած ունէր :

Երբոր Սահակ քիչ մը մեծցաւ՝ վարժարան մտաւ : Շատ կը սիրուէր գիտնալ թէ ինչ է Զուրբը, օղբը, արեւը, լուսինն ու սասուկերն : Երբոր օր մը պարտէզին մէջ մինակ նստեր էր, յանկարծ ծառէն խնձոր մ'ընկաւ : Այն ատեն ինքն իրեն հարցուց թէ ինչ պատճառաւ խնձորը գետինն ընկաւ : Արդեօք խնձորին ծանրութիւնն էր պատճառը՝ թէ ոչ երկրին մէջ գորութիւն մը կայ որ խնձորն իրեն կը քաշէր : Բաւական խորհելէն կտքը, տեսաւ որ երկիրն էր որ իրեն կը քաշէր և այս քաշելը բնութեան օրէնքներէն մէկն է : Անոր ուժովն է որ թեթեւ առարկաներ երկրիս երեսը կը մնան՝ օդին մէջ թռելու տեղ : Առարկաներուն ծանրութիւն տուողը ձգողութիւնն է : Սահակ երեւան հանեց որ մարմին մ'իր մեծութեան ու հեռաւորութեան համեմատ ձգողութիւն ունի : Այսպէս երկիրը կը քաշէ լուսինն, խիստ արեւը՝ բոլոր մոլորակներն : Այս է պատճառն որ երկնքի մարմիններն իրենց տեղը կը պահեն և չեն խառնուիր :

Սահակ այս եւ ուրիշ գիտեր ալ ըրաւ և մեծ անուն ստացաւ : Ինք ցցուց որ ամեն ճերմակ ճառագայթ եօթն տարբեր դոյներ ունի :

Սահակ շատ անոյշ և հանդարտ բնասրութիւն ունէր, բնու չէր բարկանար : Պատիկ չուն մ'ունէր, որու անունն Աղամանդ էր : Օր մը գըրասենեկէն դուրս կ'ելնէ գործի մը համար և սեղանին վրայ կը թողու բոլոր գրած թուղթերն : Աղամանդ սեղանին վրայ կը ցատկէ և կանթեղը

վար կը ձգէ, այնպէս որ բոլոր թղթերը կ'այրին մոխիր կը դառնան: Սահակ ներս կը մտնէ եւ եղածը կը տեսնէ, շունը չծեծեր այլ այսչափ կ'ըսէ:

— Ա՛խ Աղամանդ, Աղամանդ, գիտե՞ս արդեօք որչա՞փ վնաս տուիր ինձ:

Իրաւ Սահակ շատ խնաստուն ու գիտուն մարդ մ'էր, բայց բնաւ սարժենկոտ չէր. բնդհակառակըն խանարհ եւ հեզ, Ամենուն հետ սիրով կը վարուէր, եւ մեռնելէն քիչ մ'առաջ կ'ըսէր.

Իմ բոլոր գիտութիւնս քան մը չէ՝ չգիտցած բաներուս հետ բազդատելով:

Ահա՛ այս էր ՍԱՀԱԿ ՆԻՒԹԸՆ՝ բոլոր աշխարհի մեծ մարդերէն մէկը:



«Տղաս, կրնա՞ս ըսել ինձ թէ ինչո՞ւ համար ամաւն աւելի տաք կ'ընէ քան թէ ձմեռը. պատճառը գիտե՞ս, Մի՛հրան:

— Հա՛յր իմ, այս գիտեմ որ քանի վառարանին մտենամ այնչափ կը տաքնամ. ուստի՛ կը մտածեմ որ՝ եթէ ամառը տաք է, պատճառն այս է որ արեւը մեզի աւելի կը մտակնայ քան թէ ձըմեռը:

— Այդ ըսածդ սխալ է, տղա՛ս. ինչու որ ձըմեռ ատեն երկիրն արեւուն աւելի մօտ կը գըտնուի: Եթէ ձմեռը ցուրտ է, պատճառն այս է որ արեւուն հառադայթները մեր վրայ շիփ շխտակ չեն իջներ, եւ արեւն ուշ ելնելուն եւ կանուխ

մարը մտնելուն, ինչպէս կ'ըսեն՝ քիչ կը տաքցնէ երկիրը :

— Հայրի՛կ, ըսածդ աղէկ չեմ հասկնար, կ'ազայեմ, բացատրէ՛ :

— Շատ աղէկ, տղա՛ս : Ամառ օր՝ կէսօրին՝ արեւուն նայէ եւ պիտի տեսնես որ գլխուդ վրայ է, եւ ճառագայթներն կապարալարին պէս շխտակ վար կ'իջնեն. նոյն ժամուն ձմեռ ատենն ալ նայէ՛ եւ արեւն այնքան ցած պիտի գտնես որ պիտի կարենաս տեսնել առանց գլուխդ վեր վերցընելու :

— Այո՛, այդ բանը դիտեցի : Սակայն ամառը՝ կան օրեր որ ցուրտ են, եւ ձմեռն ալ երբեմն բաւական տաք է :

— Իրաւունք ունին, տղա՛ս : Օդի այդ փոփոխութեան պատճառը հովերն եւ մթնոլորտի մէջ գտնուած շոգիներուն խտանալն է. եւ որովհետեւ ջերմութեան աստիճանը կը փոխուի, քեռիդ շատ անգամ ջերմաչափին կը նայի :

— Բայց հովերն ուսկի՞ց յառաջ կուգան, հայրի՛կ :

— Երբ օդը շարժի՝ հով կը հանէ : Այն շարժումն ալ օդին տաքութեան տարբերութենէ յառաջ կուգայ : Երբ տեղ մը տաք է եւ ուրիշ տեղ ցուրտ, օդն հասնէ կամ հեռէ կ'ելնէ : Ինչպէս, երբ սենեկի մը մէջ կրակ վառի, օդը տաքնալով կը թեթեւնայ ու վեր կ'ելնէ եւ կրակարանին բոլորտիքը պարաս կը մնայ. եթէ դրսէն՝ օդ բանի՛ պարաս տեղը կը լեցուի եւ շարունակ հոսանք մը

Հաստատելով՝ հով կ'ելնէ, որ կրակ վառելու համար պիտանի է :

Մովեղերեայ քաղաքները՝ սովորաբար ցերեկ ատեն՝ հովը ծովէն կը բանի, իսկ գիշերը՝ ցամաքէն . ինչու որ օդը ցամաքի վրայ աւելի կը տաքնայ քան թէ ծովու վրայ, այնպէս որ վեր կը բարձրանայ և ծովէն բանող աւելի զով օդն անոր տեղ կը բռնէ : Իսկ գիշերն ասոր հակառակը կը պատահի . քանի որ ծովուն օդն աւելի տաք է քան ցամաքինը :

Չորս հով կայ՝ որ երկրիս շորս կողմէն կը փչէ . հիւսիսային հով, հարավային հով, արեւելեան հով՝ որ որ անձրեւաբեր է, վերջապէս արեւմտեան հով՝ որ չոր է : Արեւելի բուն հով մ'է որ Ափրիկէ կ'ելնէ և աւազը ծովու ափքներու պէս կը շարժէ մինչեւ վեց կանգուն բարձր, եւ շատ անգամ ճամբորդները կը կորսուին :

— Հայրի՛կ, անտարակոյս ջերմութիւնը միշտ արեւէն մեզի շհասնիր, վասն զի անցածներս, երբ քեռիս սղոցով փայտ կը կտրէր, ձեռքս սղոցին վրայ դրի եւ տեսայ որ սաստիկ տաք էր :

— Այդ դիտումդ շատ ճիշդ է, Մինչեւ : Իրաւ է . ամեն շարժումէ տաքութիւն կը ծագի . եթէ ձեռներդ շփես՝ կը տաքնան, եթէ քալես՝ ոտներդ կը տաքնան . երբ ջուր քաշելու համաշուանը ձեռքիդ մէջ կը սահի որ դոյլը հորինյար տակն իջնէ, կ'զգաս որ ձեռներդ տաքցեր են : Վայրենիներն երկու շոր ճիւղ իրարու շփելով կըրակ կը վառեն, մինչդեռ մենք հրահանով եւ մանաւանդ ծծմբառով կրակ կը հանենք : Միհրան,

կը խրատեմ քեզ որ ծծմբառի շղպշխա . շատ ար-
զաք մեռած են բոցերու մէջ սաստիկ տանջուե-
լով՝ այս խրատին հակառակ վարուելուն համար :

— Ո՛հ , այդ խրատդ պիտի շմռնամ : Հայրիկ ,
քիչ մ'ալ ուրիշ բաներու վրայ խօսինք : Գիտեմ
ցո՛ւն ի՛նչ է : Սովորաբար զարնան ու աշնան ժա-
մանակ կը պատահի , երբ արեւը քիչ մը շատ կը
տաքցնէ , երկիրն եւ անկից շողի կը հանէ , խի
գիշերը զով ըլլալով շողին կը խտանայ եւ մանր
կաթիլներու պէս վար կ'իջնէ . գիտեմ նաեւ թէ
էդե՛ն ցրտէն սառած ցող է : Գիշերուան թանձր
մշուշը կը խտանայ առաւօտեան ցրտէն եւ մանր
սառոյցի կաթիլներու պէս կը ծածկէ պաղ առար-
կաները : Տեսեր եմ որ մշակն իր տունկերն եղ-
եամէն պահպանելու համար անոնց վրայ կտաւ
կամ փսիաթ կը ծածկէ : Պ-ր-Վ-յն ալ բարակ անձ-
րեւ մ'է որ պաղ հովին վրայ կը սառի . խի ուն-
ալ ջուր է որ ցուրտ օդէն կը պնդանայ : — Բայց
յի՛շն ու կ'ըլ-ն-ն ի՛նչպէս կը շինուին :

— Միհրան , կարկուտն անձրեւ մ'է որ փոթոր-
կի ժամանակ օդին մէջ կը սառի : Ընկուզի շափ
խոշոր կարկուտներ թջած են . կարկուտը տեղացած
ատեն՝ այնպէս աղմուկ կը հանէ որ կարծես թէ
ընկուզի պարկ կը պարօգուի . երբեմն դաշտեր ու
պարտէզներ կ'աւրէ : Իսկ ձիւնը խտացած անձրեւ
է որ մանր սաստիկներու պէս կը սառի երբոր պաղ
հովի հոսանքի մը մէջէն կ'անցնի : Կան լեռներ ,
ինչպէս Մասիս , Մօն-Պլան՝ որոց դադաթին վրայ
երբէք ձիւնը չհալիր :

— Միթէ ստուգիւ ձիւնն օդատակար է , Հայրիկ :

րին կը յաջորդէ — , ծիծաղք կը յաջորդեն — , 12 . Օրէնքը շինուած է սաչտագանե , ու համար սկարուրիւնն ընդդէմ — , միամտութիւնն ընդդէմ — , ուղղութիւնն ընդդէմ — , 13 . Բարեկամութիւնը զանոնք միացուց , — զանոնք — , 14 . Այն մարդիկ որ կ'ամբարտաւանին յաջողութեան մէջ , — — մէջ , 15 . Հարսութիւնը կը քաշէ բարեկամներն , և — զանոնք — , 16 . Բարեկամութիւնը կը վերջանայ անդ ուր անխտաճութիւնը — , 17 . Եթէ բարիներուն բարեկամութիւնը ստանաս , պիտի ծաղրես — — , 18 . Ո՞վ է այն գերազայն ճարտարապետն որ կուտայ արեգական ծագել և — , որ կուտայ զլոյս տուրնջեան աշխատութեան ժամուն և — — — ժամուն : 19 . Աստուած յաճախ խորհրդաւոր տեսութեամբ արգասաւոր կ'ընէ զայն որ — կը թուէր , զօրաւոր և խելացի կ'ընէ զայն որ — և — կը կարծուէր :

ՀՐԱՀԱՆԻ 15 .

Աեակիւքը պարսի լրացնել հետեւեալ պարբերութիւններն , իւրաքանչիւր գծին տեղ շեղագիր բառերուն հականիւրդ դնելով .

1 . Երբ զարմանքը դադրի անելէ , — : 2 . Ահա անձնասիրին օրինագիրքն է ամենայն ինչ ինձ համար : — — համար : 3 . Մասանք զով են յամարայնի , և — — : 4 . Մի՞ձեռնակը կուզան ի զարման և — — : 5 . Ես ներէ այլոց , — ներէ — : 6 . Փոխ կ'առնու յամենեցունց , — — : 7 . Բախտին անուոյն վրայ մարդ յամր կը բարձրանայ , և — — : 8 . Մեր կեանքը դաշտ մ'է զոր սարախօք մշակել . ծաղկունք են ի զարման , — — , աշխատութիւն վասն ամարան , — վասն — : 9 . Հին բարեկամը զանձ մ'է միշտ — :

10. Են ծաղկունք որ կը փրքին ընդ առատոսն և — — : 11. Լաւադոյն է վստի պատուոյ մէջ քան — — մէջ : 12. Նախամեծար կը համարիմ պարսաւիլ բարիներէն քան — — : 13. Ամառան սօրը չէ այնքան անտանելի որքան — — : 14. Չախորդութիւնը որ ի կօր կօրծանէ սկար հողիները, — — հողիները : 15. Մարդ սառն է նեմարսութեանց առջեւ, և — — առջեւ : 16. Լեզուն լաւագոյն և — բան մ'է, եթէ նա գործին է նեմարսութեան և բանականութեան, է նաև գործին — և — . այնու մարդիկ կը գովեն կամ — գգիս, կը շինեն կամ — գբաղաքս, կը գրգռեն կամ — գկազս : 17. Ճոխին առատութիւնը կը ծաղրէ — — : 18. Առիթը դժուարին է գտնել, — — :

ՀՐԱՀԱՆԳ 3.

Առակերսը պարտի լրացնել նետեւալ պարբերութիւններն, իւրաքանչիւր գծին տեղ՝ տեղագիր բառերուն նականիւր դնելով .

1. Աստուած կը ծագէ իւր արեւը նոցա վրայ որք կ'օրհնեն իւր անունը, և նոցա վրայ որք — զայն . անձրև կը տեղոյ արդարոյն արտին վրայ ինչպէս նաև — : 2. Մարդ պարտի աշխատիլ իւր երիտասարդութեան մէջ, իրաւունք ունենալու համար — իւր — մէջ : 3. Թող բարեկամութիւնն՝ որ քեզ գովել կուտայ քս բարեկամին բարեմասնութիւնները, չարագելու զքեզ — նորա — : 4. Նա որ չարութիւն կը սերմանէ, չկարէ — — : 5. Յիշէ այն շնորհներն զորս ընկալար, — զայնս զորս — : 6. Երիտասարդ հրեշտակ մը կրնայ — — լինել : 7. Պէտք չէ երբեք ոչ շատ յուսալ, ոչ շատ — : 8. Չարն արագ կուգայ, — — : 9. Դրամը բարի ծառայ մ'է, և — — մը :

10. Երեսուրապէս ամենէն երշանիկն , յաճախ — ամենէն — է : 11. Մարդիկ ոմանք որ առասաձեռն են չփառորեան մէջ , — կը լինին — մէջ : 12. Կան իրք յորոց զրկուելով կը բժշկուիմք , և կան իրք զորս — : 13. Չօփազանցութիւնն աւելարանութիւն մ'է յայսկոյս կամ — ճշմարտութեան : 13. Արեգակն իւր ներկայութեամբն յառաջ կը բերէ լոյս , ջերմութիւն , շարժումն և կեանք , և իւր — , — , — , և — : 15. Կեղծաւորը մերթ գառնուկ հեզ և մերթ — — , առ երեսս կը շողոփորէ և — — : 16. Լաւագոյն է խղիկ մը յարգաւէն ուր կը խնդան , քան — մը — ուր — : 17. Ծոխութիւնք և աշխարհ կ'անցնին , բայց բարի գործերը — : 18. Մեք արդիւնք կը տեսնեմք , Աստուած և եթ զխաէ — :



6. Զ Ա Ն Ա Չ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

25. Հ. Ի՞նչ է ոճոյ Չանազանութիւնը .

Պ. Ոճոյ Չանազանութիւնն է խօսքին ձևին ու եղանակին փոփոխութիւնը . միօրինակ ոճ մը , միաձև ու միաշար պարբերութիւնք տաղտուկ կ'ազդեն .

26. Հ. Ոճոյ մէջ Չանազանութիւն գնելու համար ի՞նչ պէտք է ընել .

Պ. Ոճոյ մէջ Չանազանութիւն գնելու համար պէտք է գաղափարաց և զգացմանց համեմատ մերթ բարձրանալ , մերթ խոնարհիլ , է զի ուժգին , է զի թեթև , երբեմն շնորհալից և երբեմն

զուարճախօս իսկ լինել: Հարկ է նաև կտրուկ ոճը խառնել ճարտարապէս պարբերական ոճոյն հետ: վերջապէս բացատրութիւնը, ձեւն ու եղանակը պատշաճեցնել պարագային:

27. Հ. Կտրուկ և Պարբերական ոճ որո՞ց կ'ըսուի:

Պ. Կտրուկ կ'ըսուի այն ոճոյն յորում պարբերութիւնք կարճ են և գրեթէ գլխաւոր նախադասութիւններէ միայն բաղկացած: իսկ պարբերականն այն է՝ որ կը պարունակէ երկար պարբերութիւններ յորս կը տեսնուին բազում միջանկեալ նախադասութիւնք:

Կարգանք հետեւեալ երկու հասուածները և բաղդատենք իրարու հետ:

ՎԱՐԺԱՊԵՏԸ

Վարժապետը մեծ գործաւոր մ'է. նա կը կռէ կը գործընէ անդուլ միտք և սիրտ, գազափարներ և զգացուիներ: Հոգին կոշտ, անև ու միտին է երբ կ'երթայ նորա ձեռքին մէջ. և Աստուածային ու գեղափայլ է երբ դուրս կ'ելնէ անտի. նա անթեւ էր, և հիմա իրենն է միջոցը. ազատաթեւ սուտանկով գարուց և աշխարհաց վերեւ, կը թեւածէ անհունին մէջ: Աշխարհ ազջամզջին քառս մ'էր այդ մշտքի առջև որուն մէջ այդ գործաւորը զամպար մը վառելով լուսաւորուեցաւ ոյն, պարզեցաւ և արարչագործութեան հը-

ՎԱՐԺԱՊԵՏԸ

Մեծ գործաւոր մ'է ան, վարժապետը. կը կռէ կը գործընէ անդուլ. ի՞նչ է կռածը, ի՞նչ է գործածը. — միտք և սիրտ կը կռէ, գազափարներ և զգացուիներ կը գործընէ: կոշտ, անև, միտին է հոգին՝ երբ կ'երթայ նորա ձեռքին մէջ. աստուածային է գեղափայլ երբ դուրս կ'ելնէ անտի. թեւ շուներ, հիմա իրենն է միջոցը. ազատաթեւ կը սուտանի գարուց և աշխարհաց վերեւ, կը թեւածէ անհունին մէջ: Աշխարհ ազջամզջին քառս մ'էր այդ մշտքի առջև. այդ գործաւորը զամպար մը վառեց նորա մէջ, և

բաշտլիք իյոյտ կկան իւրեանց
 ներդաշնակ և անյեղլի որենքնե-
 րով: Այդ հոգին կը նետէր վոյ-
 րագ անարկներ իւր նմանեաց
 վերայ, որք թշնամիներ կ'երե-
 ւէին իրեն յեղաշրջում մը եղաւ,
 իւր աշկուճք կը շողան հիմա
 գորովագին, նա ունի ժպիտ մը
 ամենուի համար սիրոյ և ներդ-
 զուիթեան. նա ունի մարգարիտ-
 ներ թմակագին, — այսինքն
 արցունքներ զորս գուժը կը հա-
 նէ սրան. նա եղբայրներ կը
 տեսնէ մերթ սոսիներ նշմարած
 տեղը. և ինչ որ ոճիր պիտի լի-
 նէր գուցէ կը լինի արդ ի նմա
 գիւցազնակամ առաքինութիւն:
 Աւարժապետը կը գործէ այդ
 յեղաշրջում մը. նա ամեն օր ծը-
 աւելով այդ հոգիին վրայ կ'աշ-
 խատի տամանագին. պետք է
 զտել այդ հոգւոյ ազամանդը
 զինքը պատող ազտերէն և կոշտ
 կեղեւներէն, բանիլ անոր վրայ,
 յղկելով ողորկելով երեսակներ յս-
 րինել, որպէս զի իւր ամեն կող-
 մերով փայլփլի ճշմարտութեան և
 առաքինութեան արեւուն զի-
 մաց, որպէս զի վրան իյնող ճա-
 ճանչն բեկրեկելով արձակի իւր
 շորագին. կը ցաւիժ որ այդ էակը
 խոնարհ է. որոյ կեանքը գրեթէ
 խեղճ է միշտ և որոյ համար չեն
 փայլիլր սակին ու արծաթն և
 չեն թաւայիլր կառքերն, որոյ
 արիտուրն շորարեկ հաց մ'է
 յաճախ. բայց այդ էակը մեծ է
 իւր խոնարհութեան մէջ. նա

անա քառան լուսաւորեցաւ,
 պարզեցաւ, և և իյոյտ կկան
 արարչագործութեան հրաշտլիք
 իւրեանց ներդաշնակ և անյեղլի
 որենքներով: Այսրագ անարկ-
 ներ կը նետէր այդ հոգին իւր
 նմանեաց վրայ, որք թշնամիներ
 կ'երեւէին իրեն. ո՛վ յեղաշրջում,
 ի՛նչպէս գորովագին կը շողան
 հիմա իւր աշկուճք. ժպիտ մը
 ունի ամենուի համար սիրոյ և
 ներդուիթեան. մարգարիտներ
 թմակագին, — այսինքն ար-
 ցունքներ զորս գուժը կը հանէ
 սրան, եղբայրներ կը տեսնէ
 անդ ուր մերթ սոսիներ կը շըշ-
 մարէր, ինչ որ ոճիր պիտի լինէր
 գուցէ՛ կը լինի արդ ի նմա գիւ-
 ցազնակամ առաքինութիւն: Ա՛՛վ
 կը գործէ այդ յեղաշրջում. —
 ան, վարժապետը. ամեն օր ծը-
 աւած այդ հոգիին վրայ, կ'աշ-
 խատի նա տամանագին. այդ
 հոգւոյ ազամանդը պետք է զը-
 տել այն ազտերէն, այն կոշտ
 կեղեւներէն որք կը պատեն զինքն.
 և յետոյ, պետք է բանիլ անոր
 վրայ. յղկել, ողորկել, երեսակ-
 ներ յորինել, որպէս զի իւր ամ-
 ան կողմերով փայլփլի ճշմարտու-
 թեան և առաքինութեան արեւուն
 զիմաց, որպէս զի ճա-
 ճանչն՝ որ կիյնայ նորա վրայ՝
 բեկրեկելով արձակի իւր շորս
 գին: Ա՛՛հ, խոնարհ է այդ էակ-
 իւր կեանքը գրեթէ խեղճ է միշտ.
 իրեն համար չեն փայլիլր սակին
 ու արծաթն, և կառքերն չեն

մարտիրոս մ'է յառաջգիծու-
թեան, մարդկութիւնը կը քայլէ
անոր արեան գնովը. ամուսին է
որ կ'այրի քաղաքակրթութեան
մեքենան գարննոց շոգին արտա-
գրելու համար: — Պէտք է որհ-
նել վարժապետը:

Թաւայիր իրեն համար. շորքեկ
հաց մ'է յաճախ իւր արիտուրն.
քայլ իւր խոնարհութեան մէջ
մե՛ծ է այդ էակ, նա մարտիրոս
մ'է յառաջգիծութեան, անոր
արեան գնով կը քայլէ մարդկու-
թիւնը. ամուսին է որ կ'այրի
քաղաքակրթութեան մեքենայն
գարննոց շոգին արտագրելու
համար: — Օրհնեա՛ւ ըլլայ վա-
րժապետը:

Բ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Առաջին սիւնակին հատուածք իւր միակերպ և
միաձև նախադասութիւններովն ունի ծանրութիւն
մը ու դանդաղութիւն մը որ ձանձրոյթ յառաջ կը
բերէ. իսկ Բ. սիւնակին հատուածք կենդանութիւն
մ'ունի որ յառաջ եկած է նախադասութեանց ու
ձևերու զանազանութենէն:



ՋԵՒԲ ՊԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ

ՅՏ. Հ. Չեւք պարբերութեան ըսելով ի՞նչ կը
հասկցուի:

Պ. Չեւք պարբերութեան կ'ըսուին այն զա-
նազան ձևերն որովք մտածում մը կրնայ ներ-
կայանալ, գրեթէ պահելով միևնոյն բառերն:

Այսպէս այն մտածումն՝ որով Ռասին իւր
ՊԹՈՂԱՆ ողբերգութիւնը կ'սկսի,

Այո՛ կուգամ իւր սահարին մէջ Անմահին երկրպագել .
(Oui je viens dans son temple adorer l'Eternel.)

կրնայ ըսուիլ հետևեալ ձևերով ալ:

Ո՛չ, առ այլ ինչ չեմ գար այս բայց Անմահին երկրպագել :
Ի՛նչպէս չը գամ երկրպագել Անմահին իւր սահարին մէջ :
Է՞ր չը գամ երկրպագել Անմահին իւր սահարին մէջ :
Թո՛ղ տւի ինձ երկրպագել Անմահին իւր սահարին մէջ :

Հարկ չէ ըսել թէ այս ձևերէն լաւագոյնն այն է անշուշտ զոր բանաստեղծն ընտրած է . բայց կան պարագայք յորս տարբեր ձև մ'աւելի նախամեծար է :

29. Քանի՞ են պարբերութեանց ձևք .

Պ. Պարբերութիւնք հինգ գլխաւոր ձեւ ունին որք են . 1. ՀԱՍՏԱՍՏԱՅԻՆ, 2. ԺՅՏԱՅԻՆ, 3. ՀԱՐՑԱՅԻՆ, 4. ՀՊԱՐՑԱՅԻՆ, 5. ԲԱՅԱՊԱՅԻՆ, կամ ՀՊՐՄԱՍՏԱՅԻՆ, Ու իցէ մտածում այս ձևերէն միովը կրնայ բացատրուիլ, և գրողին ճարտարութիւնը կը նախընտրէ այն ձեւն որ խօսքին աւելի յստակութիւնկամ ճշդութիւն, աւելի կորով կամ վայելչութիւն կուտայ, Բայց այս ձևոց գլխաւոր առաւելութիւնն այն է զի ոճոյն զանազանութիւն կուտայ :

30. Հ. Ո՞րն է Հաստատական ձևը .

Պ. Հաստատական ձեւն այն է որ պարզ և բնական կերպով բան մը կը հաստատէ և որոյ գործածութիւնը յաճախ կը ներկայանայ մեր մըտաց . զոր օրինակ ,

Մարդ իւր սխալը կամ պակասութիւնը ճանչելով՝
կը հաստատէ թէ դիւցազնութեան ծիլ մը կը կրէ յին-
քեան :
(Դանիէլ Սրէքն)

Այն մարդն է արժանի ունկնդրութեան որ խօսքը մտածման համար միայն կը գործածէ, եւ մտածումը նշմարութեան եւ առաքինութեան համար : (Յեճեկոն)

Ճշմարտութիւնը դժխոյ մ'է որոյ յաւիտեանական զանն է յերկինս :

(Պոսիւտ)

Սրտով եւեք մեծ է մարդ :

(Մասիկոն)

31 . Հ . Ո՞րն է ժխտական ձեւը .

Պ . *Ժխտական ձեւը գողցես ներկայ կամ անց-
եալ հակառակախօսութիւն մը կ'ենթադրէ , ե
գրողը հակառակ կարծեաց դէմ պատասխանե-
լու երևոյթն ունի , հետեւաբար այս ձեւն աւելի
բուռն եւ աւելի յուզիչ է , զոր օրինակ .*

Նա որ շնանցիւր ժամանակին յարգը , չէ ծնած փա-
ռաց համար :

(Վովնարկ)

Աշխարհի փառքն , առանց Աստուծոյ երկիւղին ,
չունի ինչ իրական :

(Մասիկոն)

32 . Հ . Ո՞րն է Հարցական ձեւը .

Պ . *Հարցական ձեւն աւելի բուռն եւ աւելի
յուզիչ է քան երկրորդը , զի յառաջ կը կոչէ ի-
րական կամ մտացածին խօսակից մը , եւ , թուի
թէ , պատասխանուոյ կ'սպասէ ի նմանէ . զոր օ-
րինակ ,*

Կ'ուզէ՞ դասել զոք , դիտեցէք քէ ո՞յք են նորա բա-
րեկամներն :

(Յեճեկոն)

Ի՞նչ արժէք եւ ի՞նչ պատասխանատւութիւն ունի
այն մարդն որ այնպէս կը մտածէ , կը հաւատայ եւ կը
գործէ , ինչպէս կը հրամայեն իւրեան : (Լամբրէ)

*Եթէ վերոյգրեալ երկու ասացուածներն ա-
ռանց հարցական ձևի ըսէինք*

Երէ կուզէք դասել զոք , դիտեցէք եւայլն .

Արժէ՛ք եւ պատասխանատուութիւն չունի այն մարդն
որ եւայլն .

Խւրեանց աղղուութիւնը պիտի կորսուէր :

33 . Հ . Ո՞րն է Հրամայական ձեւը .

Պ . Հրամայական ձեւն այն է որով պաղատանք
մը կամ հրաման մը կ'ընեմք ու մեք . զոր օրինակ ,
Աստուած իմ , ջուր տուր աղբերաց . (Նամարբին)

և

Գնացէ՛ք եւ այլ եւս մի՛ մեղանչէ՛ք .

34 . Հ . Ո՞րն է Բացադանչական ձեւը .

Պ . Բացադանչական ձեւն ամենէն կրքոտ ձեւն
է զոր մարդ կային երեւակայութիւնը կրնայ գոր-
ծածել . այս ձեւը կը ծառայէ վառ ու բորբոք
զգացումներ բացատրելու . զոր օրինակ ,

Ո՛վ գիշեր աղիսաբեր . ո՛վ գիշեր անաւոր , յորում
որոտման նայիւնի նման , այս սոսկալի գոյժն հնչեց .
Տիկի՛նը կը մեռնի , Տիկի՛նը մեռաւ :

(Պոսիւէ)

*Քանի՛օն անաղղեցիկ ու ցուրտ պիտի լինէր ,
եթէ այսպէս ըսէր Պոսիւէ*

Աղիսաբեր եւ անաւոր էր այն գիշերն , յորում ո-
րոտման նայիւնի նման , այս սոսկալի գոյժն հնչեց քէ
Տիկի՛նը կը մեռնէր . քէ Տիկի՛նը մեռած էր :

Բայց այս ձեւը բացառիկ պարագայից մէջ կը
ներկայանայ , ուստի պարտ է ի ճահ գործածել
զայն եթէ չուզեր որ ծաղրելի լինել :



ՀՐԱՀԱՆԳ 1.

Ասակերսը պարտի պարբերութեանց ձեւերն որոշել , այսինքն նշանակել հաստատական , ժխտական , հրամայական , բացազանչական , հարցական ձեւերն .

1 . Ձեռնառ լեր միշտ տառապելոց :

2 . Նոքա են մեզ բարի խորհրդական , որք կը խրատեն զմեզ թէ որչափ ի վեր քան զայլս բարձրանա՞մք , այնչափ աւելի խոնարհ և համեստ ոչե՞տք է որ լինի՞մք :

3 . Ո՛հ , որչա՞փ դժուարին է լինել մեծ և խոնարհ միանգամայն :

4 . Յոյսը մեծագոյն մխիթարութիւնն է թշուառաց . նա կը սրբէ արտասուքը և կը բերէ արիութիւն , համբերութիւն և խնդութիւն :

5 . Մի՛ հպարտանար յաջողութեանց մէջ :

6 . Վա՛յ այն մարդուն որ կը դնէ իւր յոյսը մարդոյ վերայ և որ կը ջանայ մեղէն բազկի յենուլ :

7 . Ի՛նչ փառասիրութիւն , ի՛նչ տղայական նախանձ . մարդոց մէջ անուն ունենալու հետամուտ լինել հասնելու համար համբաւին որ հողմոյ խաղալիկ եզող ծուխէն ոչ նուազ ցնդելի է :

8 . Երանի՛ այն թագաւորին ոյր հպատակք երջանիկ են :

9 . Բնաւ ծաղկասփիւռ ճանապարհ մը շտանիր ի փառս :

10 . Անճակ երկիրը բերք չտար իւր տիրոջ :

11 . Աղքատաց , որրոց և տառապելոց հայր ըսուիլ , ի՛նչ գեղեցիկ պատուանուն :

12 . Ձե՞մ կարծեր որ մարդ կարենայ առաքինի լինել առանց կրօնի :

13 . Հայր , մայր , որդիք , եղբարք և քորք . միթէ

կա՞ն աւելի սուրբ և աւելի անոյշ բարբառք և առ
խմէ՞ ուրիշ անուանք ալ կը գտնուին երկրիս վրայ :

14 . Ճշմարիտ հարստութիւնը՝ հոգւոյ հարստու-
թիւնն է :

15 . Ազահութենէն աւելի փտանգաւոր հիւան-
դութիւն կա՞յ :

16 . Ամէն բարի գործ ողորմութիւն մ'է :

17 . Ողորմութիւն ընելով՝ մարդ իւր հարստու-
թեան չփխսեր :

18 . Չքաւո՞ր է բարեկամդ , դու առատաձեռն
լեր . ի փտանգի՞ է , օգնէ նմա . տգէ՞տ է , լուսաւորէ
զայն . այլք կը խարե՞ն զայն , դու ճշմարիտն ասա
նմա , այլք կը վշտացունեն՞ զայն , դու մխիթարէ .
բնակարա՞ն , հանդերձ , հա՞ց չունի , մասնակից արա
զայն քո տանն , քո հանդերձին և քո սեղանոյն և
յայնժամ զքեզ առաքինի պիտի կոչեմ :

19 . Կամ լուեցէք կամ քան զլուելն լուադոյն բա-
ներ ըսէք :

20 . Կամքի ոյժը մեծ մարդոց գործակատարն է :

21 . Բոլոր մարդկային ազգն ոչ այլ ինչ է , բայց
մի ազգատոհմ համասփիւռ ընդ երեսս երկրի :

22 . Մարդավար և անոյշ կերպերը մշտախօս յանձ-
նարարական նամակներ են :

23 . Նա որ կ'սպասէ այլոյ պնակին շատ անգամ
անօթի մնալն աչք առնելու է :

24 . Ի՞նչ կուրութիւն . փափաքիլ միշտ այնմ զոր
չունիմք և չլատանալ բնաւ այնու զոր ունիմք :

25 . Ճշմարտութիւնը խմացական աշխարհին ա-
րեւն է :

26 . Չէ ոք մարդ եթէ միայն իւր անձը կը սիրէ :

27 . Մարդոյ ամենէն անհրաժեշտ գիտութիւնն է
ծանօթութիւն անձին :

ՀՐԱՀԱՆԳ 2.

Աւակերտը պարտի միեւնոյն իմաստը բացատրել խօսքին
հաստատական ձեւ տալով .

1 . Բարերարութիւնը չկորնչիր :
— Բարերարութիւնն անկորուստ է :

2 . Եթէ շողոքորդութիւնն իժի պէս սողոսկելով
չսպրդի սրտիդ մէջ , և դքեղ չսարտուցանէ անաչառ
խրատներէ , կորուստ չպիտի հասնի քեզ :

3 . Փառքը չէ վայելուչ այն սրտին որ չժուժկա-
ւեր վշտաց և առ սան չկոխեր զգրգանս :

4 . Փառք և յաջողութիւնք չարաց չեն կրկարա-
տու :

5 . Նա որ իւր կոչման մէջ հաւատարիմ չէ , ցոյց
կուտայ թէ արժանի չէ բարձրագոյն վիճակի :

6 . Բարի մարդը դժուարաւ շնորհար նախատինքը :

7 . Ով որ հաւատարմարար կը ծառայէ իւր հայ-
րենեաց , անարժան չէ անոր յարգանացն ու կրախ-
տադիտութեան :

8 . Մարդոյ բարի ու չար գործերը չեն մեռնիր ,
թէ պէտեւ ինքը մեռած լինի :

9 . Մեծամեծ իրաց համար ծնած չէ ոք , եթէ
չունի զօրութիւն իւր անձին յաղթելու :

ՀՐԱՀԱՆԳ 3.

Աւակերտը պարտի միեւնոյն իմաստը բացատրել խօսքին
մխտական ձեւ տալով .

1 . Փոքրիկ և ախտաւոր միտքերը , բարկութեամբ
և վրէժխնդրութեամբ լեցուած , թշնամւոյն ներելու
վսեմ հաճոյքն անկարող են զգալու :

— Փոքրիկ և ախտաւոր . . . չեն կարող զգալ :

2. Քաջութիւնն եթէ խոհականութենէ ուղղեալ է, առաքինութիւն է :

3. Մոլեգին քաջութիւնը կասկածելի է :

4. Նա որ կարէ համբերել վշտաց մեծ սիրտ մ'ունի :

5. Նա որ աւելի բարձրանալու բաղձանօք իւր ներկայ վիճակին մէջ բարեօք կը գործէ, թէ իւր ներկայ վիճակին և թէ քան զայն բարձրագունին է արժանի :

6. Սահած ժամանակն անդարձ է, ու կորսուած առիթն՝ անգիւտ :

7. Ճշմարտութիւնն անձերանայի և անմահ է :

8. Մօր մը սիրտն անձերանայի է :

ՀՐԱՀԱՆԳ 4.

Առակերսը պարսի միեւնոյն իմաստը բացատրել առանց հարցական ձև գործածելու .

1. Միթէ նախանձն ամենէն ցած ու տանջող ախտերէն մին չէ՞ :

— Նախանձն ամէն ցած ու տանջող ախտերէն մին է :

2. Մարդասիրութիւնն անբաժանելի յատկութիւն և որոշիչ նշան մը չէ՞ մեծութեան :

3. Գիտութիւնն է միթէ որ մեծ կ'ընէ զմարդիկ թէ գործունէութիւնն ու յարատեւութիւնը :

4. Այս աշխատութենէն ի՞նչ պտուղ կրնաս քաղել :

5. Ի՞նչ օգուտ է քեզ անհանգիստ լինել ապագայի մը համար որ քոյդ չէ :

6. Ո՞վ ի մէնջ ամենէն յետոյ պիտի մեռնի :

7. Կա՞յ վայրկեան մը որ զմեզ ապահովէ թէ բոսլէ մը եւս պիտի ապրինք :

8. Ձիւ ս՞ղ կը կարծեն :
9. Կ'արգելո՞ւս ընկերիդ որ դասը պատրաստէ :
10. Վստահի՞մ խարեքայի մը խօսքերուն :
11. Կուզե՞ս երջանիկ լինել, սանձ դիր կրիցդ :
12. Միթէ ազդ և ազինք եղբարք չե՞ն միմեանց ,
և չէ՞ պարտ նոցա որպէս զեղբարս սիրել զմիմեանս :
13. Անվեհերարիութիւնն ու երկայնամիտ աշխատութիւնն ի՞նչ խոչ և խուժ չեն տապալէր :
14. Անօթի՞ է թշնամիդ , կերակուր տուր որ ուտէ . ծարաւի՞ է , ջուր տուր որ խմէ :

ՀՐԱՀԱՆԳ 5.

Առակերսը պարտի միեւնոյն իմաստը բացատրել խօսքին հարցական ձեւ սալով

1. Օգուտ մը չէ շահիլ աշխարհը և կորուսանել մեր անձն :
- Ի՞նչ օգուտ է մեզ շահիլ աշխարհը և կորուսանել մեր անձն :
2. Աշխարհ չկարէ քեզ ընծայել բան մը որ բաւական լինի գոհացնել սիրտդ :
3. Ձիք ինչ լաւագոյն քան զլեզու :
4. Ձիք ինչ յոռեգոյն քան զլեզու :
5. Հեշտասէր մարդը նման է անասնոյ որ բնագդմամբ կը գործէ և ոչ բանականութեամբ
6. Բարկութիւնը , նախանձը և ազատութիւնն ախտեր են որք հոգւոյն վրայ աղետալի ազդեցութիւն մը կ'ընեն :
7. Աւա՛ղ , հակառակ հարստութեանս , յարստե՛ ձանձրութեան և անհանգստութեան մէջ եմ :
8. Առաքինութիւնն անուն մը չէ միայն :

9. Չէ արժան նենդութեան դէմ նենդութիւն գործել :

10. Նա որ կը ստէ անարժան է լինել ի համարի մարդկան :

11. Եթէ գինովութեան գեղ կ'ուզես գինովի մը նայէ :

12. Եթէ առողջութիւն ունիս, հարուստ ես առանց գիանալու :

13. Ոչ ոք կրնայ լաւ խօսիլ, եթէ իմաստութեամբ չխորհի :

14. Եթէ կ'ուզես երջանիկ լինել, երեք ինչ պիտոյ են քեզ. առողջ մարմին, ազատ միտք ու մաքուր սիրտ :

ՀՐԱՀԱՆՊ 6

Առակերսը պարսի միեւնոյն իմաստը բացատրել առանց հրամայական ձեւ գործածելու .

1. Փախի՛ր մեղկութենէ, սնափառ պերճանքէ, ու շոյալութենէ, և պարծանք համարէ քեզ անպանձոյճ պարզութիւնը :

— Պարտ է քեզ փախչիլ մեղկութենէ, սնափառ պերճանքէ ու շոյալութենէ, և պարծանք համարել անպանձոյճ պարզութիւնը :

2. Լուր ամենեցուն, այլ սակաւուց հաւատ ընծայէ :

3. Նախ հասկցիր և ապա խօսէ :

4. Ամէն տեսակ վէճ ու կռիւ վաղուան թող և կը շահիս :

5. Աղքատութեամբդ մի նուաստանար, հարստութեամբդ մի հպարտանար :

6. Միշտ պատրաստ լե՛ր :

7. Այլոց ամէն ինչ ներէ, իսկ քեզ՝ ոչինչ :

8. Մտացդ առողջութիւնը պահելու համար նախ մարմնոյդ առողջութեանը խնամ տար :

9. Եթէ խիստ դատաստան պիտի ընես, նախ անձիդ վրայ ըրէ և յետոյ այլոց վրայ, և ընդհանրապէս նախ քո թերութեանց լեր ուշադիր :

10. Մի՛ մտածեր չարութիւն բարեկամիդ համար որ քեզ կռթնած և յուսացած է :

11. Եթէ սք թեթեւամտութեամբ կը խօսի քեզ, մի՛ լինի ուշադիր : Եթէ յիմարութեամբ կը խօսի, ցուէ՛ նորս վրայ : Եթէ զքեզ նախատեւու մտօք կը խօսի, ներէ նմա :

ՀՐԱՀԱՆԳ 7.

Առակերսը պարսի հետեւեալ պարբերութիւնները հրամայական ձեւով բացատրել .

1. Չախորդութեան մէջ չէ պարտ բնաւ դի յուսահատիս, որ մը կը հասնի բախտին մէկ ժպիտն և կը փարատէ տրամութիւններդ :

— Չախորդութեան մէջ մի յուսահատիր բնաւ, որ մը կը հասնի բախտին մէկ ժպիտն և կը փարատէ տրամութիւններդ :

2. Պարտ է ձեզ փախչիլ ամպարչակն, դի իւր շունչը կ'սպաննէ . բայց չէ պարտ ատել զայն, ո՞գիտէ թէ արդեօք Աստուած չէ փոխած արդէն նորս սիրտը :

3. Պարտ է քեզ մոռանալ ինչ որ տուած ես, և յիշել ինչ որ ընդունած :

4. Պարտ է փախչիլ այն ներկայ հաճոյքէն որ կարէ շարիք պատճառել քեզ առ յապա :

5. Պարտ է ձեզ ազատ լինել ժամանակին նկատմամբ :

6. Պարտ է քեզ յօսն կալ նորա առջև որ աղերեկ մազեր ունի, և սատկառիլ : Երոյն ներկայութենէն :

7. Պարտ է քեզ զգուշանալ յայնմանէ որ զիր բացակայ բարեկամէն կը շարախօսէ, կամ չպաշտպաներ զայն երբ այլք զնմանէ կը շարախօսեն :

8. Պարտ է քեզ թշնամի լինել ստութեան, և ճշմարտութեան լեզուաւ միայն խօսիլ առ մարդիկ :

9. Եթէ ձեր երջանկութիւնն առաքինութեան մէջ փնտրէք, բնութեան դէմ դանդառտելու բան մը չպիտի ունենաք :

10. Եթէ ըսես ինձ թէ առ ո՞ կը յաճախես, քեզ պիտի ըսեմ թէ ո՞վ ես դու :

11. Չէ պարտ զի բռնաւորք ցանկալի համարեն պատերազմը փառք ստանալու համար, քանզի չիք խկ և չիք ճշմարիտ փառք արտաքոյ մարդասիրութեան :

12. Որդեակ իմ, պարտ է քեզ չվստահիլ երբեք ներկային, այլ պինդ կենալ առաքինութեան խիստ ու դժուարուա ճանապարհին մէջ, և անբիծ վարուք ու սիրով արդարութեան պատրաստել քեզ տեղ մը խաղաղութեան երանաւէտ օթեւանին մէջ :

13. Իմաստութիւն է Նախախնամութեան բարիքը վայելել. առաքինութիւն է զայն վայելել տալ այլոց :

ՀՐԱՀԱՆԳ 8.

Աւակերտք պարտի միեւնոյն իմաստը բացատրել առանց բացազանչական ձեւ գործածելու :

1. Ի՞նչ հեշտալի օր մ'անցուցի ձեր քով :

— Շատ հեշտալի օր մ'անցուցի ձեր քով :

2. Քանի՞օ՞ն երկայն կը թուի դիչերն անքուն հիւսանդին :

3. Սիրեւի չայր , ո՛հ , ո՛րչափ կը սիրեմ գքեզ ,
- 4 . Ո՛րքան երկար եղաւ ձեր աքսորը ,
- 5 . Աւա՛ղ . ո՛րչափ , կը ցաւիմ քո վրայ ,
- 6 . Իցի՛ւ թէ յոյսդ իրականանար ,
- 7 . Ո՛հ , պատերա՛զմ . կ'անիծեմք գքեզ ,
- 8 . Քանի՛ քանի մարդիկ կը զսէնն իւրեանց առաքինութիւնն ու երջանկութիւնն իւրեանց համբաւոյն :
9 . Ես գքեզ մոռնա՛մ . երբե՛ք ,
- 10 . Քաղցրիկ գարունն ինչպէ՛ս կը վերակենդանացնէ երկիրը ,
- 11 . Անպիտա՛ն :
- 12 . Քանի՛օ՛ն անյաղթելի էր իւր զօրութիւնը ,
- 13 . Ո՛հ , քանի՛օ՛ն բարի և գթած է Աստուած :
14 . Երանի՛ շինականաց ,
- 15 . Վա՛յ ամբարշտին .
- 16 . Մա՛հ մատնչաց ,
- 17 . Քանի՛ քանի՛ անգամ ահագին ամպերը փարատած են առանց կաթիլ մը անձրև իջեցնելու :

ՀՐԱՀԱՆԳ 9 .

Հետեւեալ խօսքերը բացազանցական ձեւով բացատրել .

- 1 . Դու անմիտ ես :
- 2 . Հազար անգամ շնորհակալ եմ քեզ ,
- 3 . Կը փափաքիմ որ երջանիկ լինիք ձեր ուղեւորութեան ժամանակ :
- 4 . Օգնութեան հասէք ինձ :
- 5 . Մանկունք ուշադրութիւն թող ընեն :
- 6 . Շատ կը ձանձրանայի երբ հիւանդ էի :
- 7 . Այն ժողովուրդն որ իմաստուն օրինօք կը կառավարուի երջանիկ է :

8. Կը յորդորեմ զձեզ, բարեկամք իմ, զի արիութիւն ունենաք և յառաջ քալէք:

9. Կարելի չէ որ օտարականներ դան հոս հաստատուելու:

10. Նա որ կը հաւատայ, երջանիկ է:

11. Ուսուցչաց պաշտօնը տաժանելի է և ապերախտ. շատ տաղտուկ կ'զգան նոքա:

12. Ես երբեք վատ չպիտի լինիմ:

13. Ծատ անգամներ մահաշունչ բուռն քամիներն հեզասիւզ զեփիւսին առջև խոնարհեցան:

14. Մարդասպանութիւնը չկարէ հաճոյ լինել Աստուծոյ, որ ըսաւ մարդուն. «Մի՛ սպաններ»:

7. Պ Ա Տ Շ Ա Ճ Ո Ւ Թ Ի Ի Ն

35. Հ. Ի՞նչ է Պատշաճութիւնը.

Պ. Պատշաճութիւնը ոճոյ յարմարութիւնն է նիւթին հետ. այս յատկութիւնը կը պահանջէ որ բացատրութիւնք համաձայն ըլլան իմաստից և իմաստներն ու զգացումները՝ նիւթին:

Վ Ե Ր Ա Դ Ի Ր Ք

36. Հ. Ի՞նչ է վերադիմումը:

Պ. Վերադիմումը կը կոչուի այն ածականը որ կարելի որ չէ պարբերութեան իմաստը լրացնելու համար, այլ իրր զարդ կը գործածուի խօսքին աւելի ազնուութիւն կամ ազդուութիւն տալու համար. ինչպէս

Բա՛նտ մահասուներ , բացվէ՛ հոգւոյս իմ առջև . . .
Ես պատերէն քո չեմ սարսիր քանձօր ու սել ,
Ես խորշերէն քո չեմ խորշիր զէն խաւար ,
Ես չեմ փախչիր շրղթաներէդ ժանգափար . —
Բա՛նտ մահասուներ , բացվէ՛ հոգւոյս իմ առջև :
Խորէն եպ. Նար. Պէյ (Ստուերթ 4.)

Եթէ այս հատուածին մէջէն վերցունենք վերադիրները, խօսքը կը կորսունցնէ իւր ազդուութիւնը :

Թըռչնոց արթընցան երգեր փաղցրօլոր ,
Ու լըցին լըռիկ դաշտերն ու ծործոր ,
Ծաղկունք վերուցին աչեր ցօղալից ,
Ու ծաւալեցին բոյրեր խընկալից .

Ի նմին

Վերցունենք վերադիրներն , խօսքն ալ իւր շնորհն ու ազնուութիւնը կը կորսունցնէ :

37. Հ. Քանի՞ տեսակի կը բաժնուին վերադիրք .

Պ. Վերադիրք երեք տեսակի կը բաժնուին .
1. Բնական վերադիրք . 2. Նկարագրական վերադիրք . 3. Պարագայական վերադիրք :

38. Հ. Ո՞րք են Բնական վերադիրք .

Պ. Բնական վերադիրք անոնք են որք իրաց բնութենէն առնուած են , և անոնց սեպհական ու ծանօթ յատկութիւններն ու հանդամանքները կը յայտնեն . այս վերադիրք բարձր քերթուածոց մէջ մանաւանդ կը գործածուին և գրեթէ նոր բան մը չեն յաւելուր դաղափարի մը վրայ :

Յոյն և Լատին քերթողք յաճախ կը գործա-

Տէին այս վերադիրներն , ուստի և իւրեանց քեր-
թուածոց մէջ գործածուած կը տեսնեմք միշտ՝ կոր
մանդաղ կամ մաճ , սեաւ սպնիաղ , խարսեաւե կամ շի-
կակարմիր ցորեան , գեղմնաբարձ խաշն երգեցիկ թըռ-
չուն , ցուրս եղեամն , խոնկոյ սղոց , սպիտակ կարապ ,
կարծր բահ , ցուրս հիւսիս , խոնաւուտ հարաւ , ըս-
պիտակ ձիւն , մքին գիշեր եւն . զոր օրինակ
. . . եւ կոր մանոյն բերող ի լոյս պատանեկիկ .

Վիրգիլ . Մշակ . Ա . 21

Բեր տեսնուի գինչ եւ անօրք իցեն եւ գէնք պինդ մեակաց ,
Յոյց վրէպ՝ ոչ վար եւ ցան եւ ոչ ճրնանց յառնեն հասակի .
Գաշարուն ծանրարօրոյ նախ եւ յառաջ կորով եւ խոփ . . .

Նոյն Ա . 164

Իսկ ի հունն գայ կարմրորակ ցորեան ի սապ տօրածամտ
Եւ կամնէ զմբրկեալ արդիւնս ի միջօրէ տօր կայարայ .

Նոյն Ա . 306

Եւ նապաստակս ակընջեղ վանել հարուլ անդ այծեմունս
Ճախր ի նոպան տըւեալ ի բոպ Բալէարեան պարսասկաց ,

Նոյն Ա . 317

Անդ ուրեմն անաստ ալիք ի կոր նաւաց շառնուն նա-
հանջ .

Նոյն Ա . 372

Հ . Եգ . Հիւրմիւզ ճարտարութեամբ կը գործածէ
ըսելով ,

Ձըմերունք քեզ գայն երբեակ ի բօնընկէցս որդեացեն ,
Եւ սպիտակ ըզնովաւ հալեալ լուծցի ձեան կերպարան .

Ռարսասան . Ա . 31

Այն ինչ անգի ի քաղցրաւունջ եղկեալ ի սիւք զարնա-
նաբեր ,

Մինչ զուռս ի սայր կոր յօսոցին քրտէ մըւակ ի յայ-
գետան . . .

Ի նմին Ա . 47

39. Հ. Ո՞րք են նկարագրական վերագիրք .

Պ. նկարագրական վերագիրք անձի մը կամ իրի մը կուտան այնպիսի յատկութիւններ որք կ'որոշեն զայն ուրիշ անձերէ կամ իրերէ . այս տեսակ վերագիրք աւելի բացատրիչ են զի աւելի սաստկութեամբ ու վայելչութեամբ կը յայտնեն իրի մը հանդամանքը . վասն որոյ քերթողը կ'երեւակայէ միշտ

Մշակը խնամող, հողագործը հուժկու, բրինձը ծանր, յօտոցը սուր, երկվարը անխպարանց, առիւծը ամենի, հոգանին մեծասարած, անտառը ցեւեւասուեր, բազեզը սեաւ, վարագը բաւասել, օձը երկայնածիգ, կիճը պարոսեան, ծիրանին սիւրացի եւն. համառօտ ըսելով, զամէն չար և բարի բան՝ երևակայութիւնն կ'ստուարացնէ նորա աչաց :

ՀՐԱՀԱՆԳ 1 .

Առակերսը պարսի գծերուն տեղ դնել նկարագրական վերագիր մը .

1 . — և — շուշանը խորհրդանշան է անմեղութեան : 2 . Մայիս ամսոյն մէջ — անտառք կը հնչեն սոխակին — երգերով և կկուին — քուքերով : 3 . — եղեգան — ցօղունը կը կքի զեփիւռին — շնչոյն տակ և կը դիմանայ — մրրկին դէմ : 4 . Փախէք, մանկունք, — ձերութեան — գրգանքներէն : 5 . Երբ գիշերը կը սփռէ իւր — քօղն երկրի վրայ, վաստակարեկ երկրագործք — քնոյ մէջ կը փնտրեն իւրեանց — աշխատութեանց մոռացումն : 6 . Քանի՛ մարտիրոսներ փշած են իւրեանց հոգին առիւծուց և վաղերց — ժանեաց տակ : 7 . — մահը չմեծարեր

աւելի արքայից — սալաւանքն՝ քան — երկրագործաց — հիւղակն։ 8. Բանականութիւնը ջան մ է —, զոր Աստուած տուաւ մեզ, և մեք պարտիմք մեր ձեռօք պահպանել նորա — լոյսը։ 9. Աղօթքը նման է — արչալուսոյ որ կը ծագի մեր ցաւոց վրայ՝ խաւարն անտի փարատելու՝ և անդ ցոյց տալու համար զերկինս մեր — աչաց։

ՀՐԱՀԱՆԳ 2.

Աւակերտք պարտի հետեւեալ գոյականաց իւրաքանչիւրին նկարագրական յարմար վերադիրներ գտնել .

1. Վարդ։ 2. Քուն։ 3. Գատաւոր։ 4. Վազր։ 5. Չմեռն։ 6. Տաւ։ 7. Աշակերտ։ 8. Շուն։ 9. Պատերազմ։ 10. Պառւղ։ 11. Կին։ 12. Մաղիկ։ 13. Մառ։ 14. Հաց։ 15. Անապատ։ 16. Հողի։ 17. Հողմ։ 18. Չայն։ 19. Բարեկամ։ 20. Գեղեցկութիւն։ 21. Աշխատութիւն։ 22. Լեզու։ 23. Դէմք։ 24. Ջուր։ 25. Գիշեր։ 26. Գեա։ 27. Լեռ։ 28. Կեանք։ 29. Հոտ։

Յ Ր Ի Ն Ա Կ

Վարդ . — Կարմրագեղ, ծիրանագեղ, ծիրաներփեան, գեղեցիկ, թարչամ, փշալից, քաղցրարոյր, գեղափթիթ, գեռափթիթ .

ՀՐԱՀԱՆԳ 3.

ԵՐԿՈՒ ՀԱՊԿԵՐԸ

Աւակերտք պարտի գծերուն տեղ նկարագրական յարմար վերադիր մը գտնել .

Օգոստոս ամսոյ — աստուած մը, հայր մը իւր — որդւոյն հետ դաշտերուն մէջ կը ճեմէր։ Երկնից կա-

պոյաք ջինջ էր , և առաւօտեան ցօղը կը փայլէր տա-
կաւին , աստ անդ , հասկահասուն ցորեններուն վը-
րայ : — հարսնուկներն , երեկոյեան ծիրանեփայլ
ամպոց նման հեզիկ հեզիկ կը տատանէին զեփխոսին
— շունչէն , — հասկերուն մէջտեղ : Մանուկն այս
անդր կը վազէր , ամենուրեք ուր որ կը տեսնէր այս
— ծաղիկներն , և , լի ձեռամբ , կը վերադառնար
առ իւր հայրն : « Տես , հայրիկ , կ'ըսէր , ի՞նչ քաղե-
ցի . դիտէ մանաւանդ այս երկու հասկերն որոնք ի-
րարմէ տարբեր են : Մին ուղղաբերձ կը կանգնի —
հպարտութեամբ մը , միւսը գոգցես յերկիր կը խո-
նարհի վայրահակ : է՞ր երկուքն ալ միևնոյն բարձ-
րութիւնը չունին : Յայնժամ հայրն ըսաւ բարու-
թեամբ . « Որդեակ իմ , ճշմարտութիւնն իւր — դա-
սերը կուտայ մեզ — երեւոյթի մը տակ : Այն հասկը՝
որ գոռօզութեամբ կը կանգնի , սակաւ հատիկներ կը
պարունակէ . իւր գլուխը դատարկ է : — արտունձը
զայն միայն կը յարգէ և կը հնձէ որ , դէպ յերկիր
խոնարհած , այս — դիրքովը , կը յայտնէ արժէքն
այն — հարստութեան զոր կը պարունակէ : Այսպէս
դու ալ , սիրելի որդեակ իմ , մի վտահիր սնափա-
սութեան — փայլին . ի ներքուստ ազբատ է նա և
փցուն : Սիրէ — համեստութիւնն . իւր տեսիլը շող-
չողուն չէ , բայց երբեք շխարբեր զմեզ : »

ՀՐԱՀԱՆԳ 4.

Ասակերտք պարտի հետեւեալ գոյականաց իւրաքանչիւ-
րին նկարագրական յարմար վերադիրենլ գտնել .

1. Զի :
2. Ոճ :
3. Սէր :
4. Միտք :
5. Վարք :
6. Մով :
7. Պատասխան :
8. Շանթ :
9. Հանդերձ :
10. Հասակ :
11. Մահ :
12. Մայր :
13. Մանկութիւն :
- 14.

Յոյս : 15. Երազ : 16. Փառք : 17. Սիրտ : 18. Երկինք :
19. Օր : 20. Օրէնք : 21. Տուն : 22. Տիւ : 23. Նաւա-
հանգիստ : 24. Նամակ : 25. Որթ : 26. Ալիւր : 27. Եր-
կիր : 28. Լուսին : 29. Անտառ : 30. Պալատ : 31.
Հիւշ : 32. Մարգագետին : 33. Աչք : 34. Դեղ :

40. Հ. ՈՐՔ ԵՆ Պարագայական վերադիրք .

Պ. Պարագայական վերադիրք գեղեցկագոյն և
ազնուագոյն տեսակն են վերադրաց . ասոնք իրի
մը վայրկենական յատկութիւնը կը ցուցնեն , և
մասնաւոր պարագայի մէջ միայն կը պատշաճին
նմա . թէև բառ մ'է , այլ կը պարունակէ մերթ
խորին մտածում մը մերթ բարձրաթափչ երեւա-
կայութիւն մը , է զի նմանութիւն մը և է զի փո-
խարեբութիւն մը և այլ և այլ ձևեր և իմաստ-
ներ :

Վիրգիլիոս ուրեք ուրեք արծաթի կը կոչէ լուսինը
և ոսկեղինիկ՝ արեգակը , յայտնելով միոյն արծաթի
նման փայլումը և միւսին ոսկւոյ նման շողիւնը :

Յամբ կը կոչէ ամարան ամիսներն և ձմերան գի-
շերներն , ու երազընթաց՝ աշնանային արեւը , ակնար-
կելով ամարան ցերեկներուն և ձմերան գիշերներուն
երկարութեան և աշնան ցերեկներուն կարճութեան :

Մոյլ կը կոչէ անբեր ծառաստաններն ու արտերը
նմանութեամբ մորդկային բարք տալով նոցա .

Փայլուն կը կոչէ խոփն . ակնարկելով արօրադրին
անդուլ աշխատութեան :

Լուռ կը կոչէ անտառներն և համբ ծառերը , միոյն
ամայութիւնն և միւսին երգեցիկ թռչնոց դադար
չլինելը յայտնելով :

Ամպարիտ կը կոչէ այն դարերը յորս ամպարիշտ
մարդիկ եղան :

8. Դ Ա Շ Ն Ա Կ ՈՒ Թ Ի Ի Ն

41. Ի՞նչ է Դաշնակույթիւնը .

Պ. Դաշնակույթիւնն է բառից և պարբերութեանց այնպիսի ընտրութիւն և դասաւորութիւն մը որ նոցա ամբողջութենէն ականջն ակտորժ տը պաւորութիւն մը կրէ :

42. Հ. Քանի՞ տեսակ դաշնակույթիւն կայ .

Պ. Երեք տեսակ . 1. Դաշնակութիւն բառից . 2. Դաշնակութիւն պարբերութեանց . 3. Դաշնակութիւն նմանաձայն կամ նմանաձայնութիւն :

43. Հ. Յորո՞ւմ կը կայանայ բառից դաշնակույթիւնը .

Պ. Բառից դաշնակույթիւնը կը կայանայ քաղցրահնչիւն և ակտորժալուր բառեր գործածելու մէջ . ուստի ներդաշնակ ոճ ունենալու համար պէտք է զգուշանալ խորթ և անախորթ հնչում ունեցող բառերէ , բաղաձայն գրերու կուտակութենէ և նոյնաձայն վանկերու յաճախակի կրկնութենէն :

Հետեւեալ պարբերութիւնք ոճոյ դաշնակութեան հակառակ օրինակներ են .

« Այլ այլազգիք այլայլեցան , երբոր թշնամեաց բանակին մօտենալը տեսան : »

« Վա՛յ այն ազգաց որ տգիտութեան խոր խաւարին մէջ կը խաբխափեն : »

« Միմիայն միմեանց միուրեան կը փափաքէին : »

44. Հ. Յորո՞ւմ կը կայանայ պարբերութեանց դաշնակույթիւնը .

Պ. Պարբերութեանց դաշնակութիւնը կը կա-
յանայ պարբերութեան մ'անդամներուն զու-
գաշափ և բարեյարմար դասաւորութեան մէջ :

15 . Հ. Պարբերութեան մ'անդամներն ո՞րք են .

Պ. Պարբ'րութեան մ'անդամներն են այն նա-
խադասութիւններն որոցմէ բաղկացած է պար-
բերութիւնը .

16 . Հ. Պարբերութիւն մը քանի՞ անդամներէ
կրնայ բաղկանալ .

Պ. Պարբերութիւն մը կրնայ երկու, երեք ,
չորս և , դուն ուրեք , հինգ անդամներէ բաղ-
կանալ . զոր օրինակ ,

Պարբերութիւն երկանգամ

Երջանկութեան հասնելու համար բոլոր մարդիկ
հարստութիւն կը փնտրեն , | բայց և այնպէս երջա-
նիկ հարուստներ յոյժ սակաւ կը գտնուին :

Պարբերութիւն եռանգամ

Եթէ արգարութիւնը թագաւորէր մարդոց սրտին
մէջ , | եթէ ճշմարտութիւնն և առաքինութիւնն ա-
ռաւել սիրելի քան զգրգանս և զինչս լինէին նոցա ,
| ոչինչ պիտի կարէր վեր ի վայր չըջել նոցա երջան-
կութիւնը :

Մասիկեօն

Պարբերութիւն քառանգամ

Երկնային խմաստութիւնը սիռեց իւր բարիքներն
երկրի վրայ , | որպէս զի մարդ , ժողովելու համար
գայնս , չըջի նորա այլ և այլ կողմերն , | զարգացը-
նէ բանականութիւնն իւր գործոց զննութեամբը , |
և բոցավառի իւր սիրով՝ զգալով իւր բարիքները :

Պէրն . ար ՍԷՆ Բիէր

47. Հ. Յորո՞ւմ կը կայանայ նմանաձայնու-
թիւնը .

Պ. Նմանաձայնութիւնը կը կայանայ բառից
ձայներով առարկաները նկարելու կամ կերպա-
րանելու մէջ .

Ազգային բանաստեղծք բազում օրինակներ կ'ըն-
ծայեն մեզ , յորս զարմանալի ճարտարութեամբ յա-
ռաջ բերուած կը տեսնուին զինուց , ձիոց , զօրաց ,
քամիի , ալեաց եւն . ձայներն .

Ի Հ. Արսէն Բազրատունւոյ
Տարմասաւճ նըսին բանակի , նընչեն երկայն կոր ծո-
վափունք

Ի կարկաչ ուի կառաչիւն անհուն կերկեր աղաղակին :
Հ. Գիւց. Դր. Ժ .

Մըրկասաւրափ կուռ կարկուտ կըրպէր կոծեալ ի կա-
ռափունս :
Նոյն. Դր. Ժ .

Որ գըրոչնիկըն բիբեռնիկ բերել բեւօքըն բըրբոռուն
Ի բըրբուրն արկեալ պահէ յանարգ գեռուն տաղաւարեալ .
Նոյն. Դր. Գ .

Կերկերեալ մըռընչիւն , կարկամ հագագ , նիզն անօգուտ ,
Չայնք ըզձայնս բախէին , աստի անտի մըղին աւաչ ,
Ոչ բան ոչ միտք ի նոսա , ժըխոր եւ խոռով խառնա-
կուքեան ,
Խուժաղուժ կարկաչ , խանչիւն խափարածայն եւ խաղ-
սախողս
Նոյն. Դր. Ե .

Եւ վիճապ ալլեւս մանունք յուտոցն ըզվիզսըն ամ-
բարձեալ
Շըչէին նըչող սուլիւք՝ նօնեալ լեզուս սուր եռասայր :
Նոյն. Դր. ԺԹ .

Բագրատունին թարգմանութեանց մէջ անգամ
ուշագիր է նմանաձայնութեան .

Անդ ի նեղ որկոր ազաւոք եռակ հառեակ վընիս բար-
բառ

Ի յեղեղուկս արկանեն , եւ

Վերգիւ . Մշակ . Ա . 24

Ո՛ն , յայնժամ ուռ սաղարբուն ոչ փրկեսցէ գփափկիկ
ողկոյզս ,

Այնչափ ընդոս դռոյր ընդ սամալ սայ կուռ կարկուս
գոռ բարկանայր

Նայն . Ա . 461

Փութադռոյր անդրուվարեան ոսին դրընդիւն 'դունկն
իմ բընդէ :

Հոմեր . Ելիս . Երգ . Ա .

Ի Հ . Երգ . Հիւրմիւզեանէ .

Չեւ կըռչաձայն կըռընկաց նընչեալ յամպոց կերկեր
բարբառ .

Բարաստան . Գիրք . Բ .

Ճռընչէ նըպուռն ի նըղին , նընուեն նըննդուկէ նըռ-
ուողականէ :

Նայն . Գիրք . Գ .

Ի Խորէն Արքեպիսկոպոսէ Նար - Պէյ

Դռուաց փող կերկեր

Եիզալս քաջալեր .

Ճախտեն սուրան ձիք

Թօրափեալ շանքիք ,

Եւ փառաց վակժոյժ

Քաջք առնուն աշխոյժ :

Դափր անդ ի դրընդիւն

Նժուզից վրնջիւն ,

Որսորդաց գոչիւն ,
 Բարակաց հաջիւն ,
 Երէոց բաջիւն ,
 Զինուց շառաչիւն ,
 Ազեղանց հայրիւն ,
 Նեւից հարեասիւն ,
 Շրօինդ ընդ բումբիւն ,
 Անդ յընդոս բընդիւն՝
 Յանսառ , ձոր բըմբիւն
 Իրղըրդեն գանգիւն :

Ստուերք . 2 .

Եւ ռսե՛աւ անդէն խուժան այսաբեկ .
 Եւ սուր փարանցըն շառաչէր խիս երբեւեկ .
 Իբրու յամպոց դըղըրդիւն յամառնակէզ օդոց մղձկուս
 Ի շանքեռանդըն բօթափիւն ընդոս ի դռոյք տոփէ
 կարկուս .

Գնար Պանդխտին

Ակօսք ի նռինչ բեկանին , ապասք յոսին ելին բինդ ,
 Կառաց շաչիւն հեծելոց , սալք բոպին յուռն ի շրօինդ .
 Սըրինգ ի հեօս սոյլ շըշըչէ , շեփոր ի մարս հրաւիրակ ...
 Ի նմին



Գ Լ Ո Ի Խ Գ .

Մ Ա Ս Ն Ա Ի Ո Ր Յ Ա Տ Կ Ո Ի Թ Ի Ի Ն Ք Ո Ճ Ո Յ

48 . Հ . Ո՞րք են ոճոյ մասնաւոր յատկութիւնք .

Պ . Ոճոյ մասնաւոր յատկութիւնք անոնք են որք նխութոց տեսակին համեմատ կը զանազանին

49 . Հ. Նիւթերը քանի՞ տեսակի կը բաժնուին .

Պ. Նիւթերն երեք ընդհանուր տեսակի կը բաժնուին . պարզ , միջակ եւ վսևւ , ուստի երեք տեսակ ալ ոճ կարեմք զանազանել որք , ամէնուն հասարակաց եղող ընդհանուր յատկութիւններէն զատ , պարտին իւրեանց առանձին յատկութիւններն ունենալ . Ոճոյ այս երեք տեսակներն են . 1 Պարզ ոճ . 2 . Միջակ կամ բարեխառն ոճ և 3 . Վսևւ կամ բարձրագոյն ոճ :

1 . ՊԱՐԶ ՈՃ

50 . Հ. Ո՞րն է պարզ ոճոյն նկարագիրն եւ ի՞նչ նիւթոց կը պատշաճի .

Պ. Պարզ ոճը դոյզն զարդ կը պահանջէ , ևւ պէտք չէ որ բնաւ արուեստ երեւի հոն . զի իւր բովանդակ արժանիքը բնականութեան մէջ կը կայանայ . Այս ոճը կը պատշաճի ընտանեկան խօսակցութեանց , սովորական եղելութեանց զրոյցներու , առակի , հովուերգութեան , նամակաց , վերջապէս այն տեսակ նիւթոց յորս գրողին նըպատակն է ուսուցանել :

51 . Հ. Ո՞րք են պարզ ոճոյ սեպհական յատկութիւնքն .

Պ. Պարզ ոճոյ սեպհական յատկութիւնքն են . 1 . Պարզութիւն . 2 . Սեղմութիւն և 3 . Միամտութիւն :

52 . Ի՞նչ է Պարզութիւնը .

Պ. Պարզութիւնն անջան , բնական և անզարդ ձեւ մ'է բացատրելու , յորում արուեստը բնաւ չերեւիր :

53. 2. Յորում կը կայանայ Սեղմութիւնը .

Պ. Սեղմութիւնը կը կայանայ պարբերութիւնն անձկացնելու և միայն անհրաժեշտ ու կարեւոր բառերու վերածելու մէջ , ի բաց մերժելով ո և է զարդարանք կամ ընդլայնումն , առանց սակայն ասացուածն իւր յատկութիւնն ու վայելչութիւնը կորուսանելու : Այսպէս է Պուալոյի սա տողն .

Վայրկեանն՝ յորում կը խօսիմ , արդէն հեռի է յինէն :

54. 2. Ի՞նչ բանէ պարտ է զգուշանալ ոճոյ սեղմութեան մէջ .

Պ. Ոճոյ սեղմութեան մէջ պարտ է զգուշանալ խրթնութենէ , խստութենէ եւ ցամաքութենէ որ սովորական խութերն են սոյն յատկութեան :

55. 2. Ի՞նչ է Միամտութիւնը .

Պ. Միամտութիւնը բնականին կատարելութիւնն է . յատկութիւն մ'է սա որ կը կայանայ այնպիսի բնական ասացուածները սելու մէջ , որք մտքի կամ սրտի ծայրայեղ պարզութիւն մը կը յայտնեն , եւ աշխատութեան կամ խորհրդածութեան արդիւնք չեն թուիր :

Հետեւեալ օրինակները միամտութեամբ կը վերջանան .

ՀԱՆԲԻ Գ. ԵՒ ՆԱԻԱՎԱՐԸ

Հանրի չորրորդ օր մը կ'անցնէր Լուսա գետէն նա-
ւակաւ .

Նաւավարն էր այր կաշքմբուռն և յիանամեայ հասա-
կաւ

Ալեծաղիկ ունէր մազեր
 Բայց քաջաթուխ մօրուաց թելեր ,
 Բարի իշխանն ընտանեբար
 Ուղեց սորին գիտել պատճառ :

« Եհէ՛ , Տէր իմ , դորա պատճառն է շատ բնական
 Ըսաւ , առանց ամաչելու , մեր շինական .

Զի քան ամօք են ձերագոյն
 Քան ըզօրուսս հերք իմ գլխոյն : »

ՄԱՅՐՆ ՈՒ ՄԱՆՈՒԿԸ

Մայրը

Երկինք նայէ , տըզա՛ս , եղբայրդ հոն տարուեցաւ
 Հրեշտակներէն որք զայն յինէն խըլեցին ,
 Զի իւր մօրկան չը պատճառեց նա վիշտ բընաւ :

Մանուկը

Մայրի՛կ , որպէս զի հրեշտակը շուգէ իջնել
 Յերկիր , զիս քո բազուկներէն խըլելու ,
 Ասա՛ , ի՞նչպէս կըրնամ ըզհեզ վըճացընել :

ԼԵՈՏ Մանկի:

56. Հ. Միամտութիւնը կը մերժէ՞ իմաստից
 կորովութիւնը .

Պ. Միամտութիւնը չմերժեր իմաստից կորո-
 վութիւնը և շատ անգամ միամիտ խօսքերու
 տակ շանթահարող զօրութիւն մը կը ծածկուի .
 բաց աստի՛ երբեմն նաև չարամտութեան ճար-
 տար ու սիրուն եղանակն է այն .

Հետեւեալ օրինակը շանթիչ միամտութեամբ մը
 կը վերջանայ .

Պ Ա Պ Ը

Պատը սաստիկ ձերացեր էր : Նորա աչքերը լաւ
 չէին տեսներ , ականջները ծանրացեր էին , ձեռներն

ու ոտները ձերութենէ կը դողդողային , այնպէս որ դրդալը մինչ կը տանէր ի բերան կերակուրը կը թափ-
թըփէր : Նորա որդին ու հարսն այս բանէն չէին ա-
խորժեր : Ծերունին իւրեանց հետ միևնոյն սեղանը
չէին նստեցնէր , այլ առանձին անկիւն մը , հացն
առջևը կը դնէին և հողէ ամանով մը կը կերակրէին
խեղճը : Անգամ մը , մինչ կը ճաշէր , ձերունւոյն ձեռ-
ները դողդղացին . ամանը վար ինկաւ և կտրեցաւ :
Հարսն ու որդին սաստիկ բարկացան , և այնուհետև
փայտէ ամանով կերակուր կուտային նմա :

Ծերունին թոռ մը ունէր : Օր մը սա , գետինը
նստած , փայտի կտորուանքով բան մը կը շինէր :

Մայրն հարցուց նմա ի՞նչ կ'ընես զաւակս :

— Փայտէ աման կը շինեմ , որ երբ դու եւ հայրիկս
ձերանա՛մ՝ այնու կերակուր կերցնեմ ձեզ :

Միամտութիւնը լաֆոնթէնի առակաց գլխա-
ւոր յատկութիւնն է :



2. ՄԻՋԱԿ ԿԱՍ ԲԱՐԵԽԱՌՆ ՈՃ

57 . Հ . Ո՛րն է Միջակ կամ Բարեխառն ոճն և
ի՞նչ նիւթոց կը պատշաճի .

Պ . Միջակ կամ Բարեխառն ոճը , որ կը կոչուի
նաև ծաղիկաւոր ոճ , պարզին և վսեմին մէջտեղ
աստիճան մ'է , և տեսակ մը խառնուրդ յերկո-
ցունց . պարզէն աւելի ճոխ ու զարդարուն բայց
վսեմէն նուազ կորովի ու շողշողուն : Այս ոճը
պատշաճ է հաճոյական նիւթոց :

58 . Հ . Բարեխառն ոճոյ պատշաճագոյն յատ-
կութիւնք ո՛րք են .

Պ. Բարեխառն ոճոյ սլառշածագոյն յատկութիւնքն են. 1. Վայելչութիւն. 2. Ճոխութիւն. 3. Նրբամտութիւն. 4. Փափկութիւն և 5. Շնորհիք:

ՅԾ. Հ. Ի՞նչ է Վայելչութիւնը .

Պ. Վայելչութիւնն է իմաստից ազնիւ և սիրուն ձև մը տալ և կոկիկ ու սահուն ոճով մը բացատրել զանոնք: Ոճոյ վայելչութեան հակառակն է Ռամիկ կամ անխնամ ոճը,

Լաւ ըմբռնելու համար անխնամ և վայելուչ ոճերուն տարբերութիւնը, հոս կը գնենք երկու օրինակներ առ ի բազդատութիւն .

4. Յ Ո Յ Ս

ԱՅԽնամ ոճ

Վայելուչ ոճ

Երկնից մէջ կայ էակ մը որոյ պաշտօնն է սգնել մարդուն իւր վշտաց մէջ. հետեւիլ նմա ամենուրեք ձեռնաու ըլլալու համար նմա, և նուիրել իւր անձը ամէնուր:

Պատանը զօր ունի իւր աչաց վրայ շարգելուր զոյն նշմարելէ ապագայն:

Նա կը խոստանայ հաճոյքներ և կը թողու որ նշմարենք երջանկութիւնը:

Երկնից մէջ կայ աստուածային զօրութիւն մը, անմեկին ընկեր կրնի և Առաքիճութեան. նա մեզ կ'օգնէ ասանելու համար կենաց. զոյք ընդ մեզ կը նաւէ որպէս զի ցոյց տայ մեզ նաւահանդիսաբ մրկաց մէջ. հաւասարապէս քաղցրահամբոյր է թէ՛ անուանի ուղևորաց, թէ՛ անծանօթ նաւորաց .

Թեպէտև իւր աչերը ծածկուած են պատանու, սակայն իւր հայեցումքը կը թափանցեն յապագայն:

Մերթ ի ձեռին կը բռնէ նա ծագիկներ գեղափթիթ, մերթ բաժակ մը լի կտորադիշ ըմպելեոք:

Իւր ձայնը լի քաղցրութեամբ
կը գիւթէ միշտ :

Մեք որքան ծերանանք, այն-
քան աւելի նա կը մխիթարէ
զմեզ :

Իւր ձեռքը կ'երկարէ Հաւա-
տոյ և Գթութեան. Յոյսն է այն :

Նորա ձայնին քաղցրութեան
ոչինչ կընայ հաւատարիւ և իւր
ժպիտը շնորհայից ոչինչ ունի
զուգահեռ :

Մարդ որքան յառաջանայ
դէպ ի շիրիմ, նա այնքան աւելի
չինջ ու պայծառ կ'երևի սփոփ-
եալ մահկանացուաց :

Հաւատ և Գթութիւն կ'ըսեն
նմա Քոյր իմ, և իւր անունն թ
Յոյս. Եսրոպրիան

2. Մ Ա Ն Ո Ւ Կ Ը

Անխնամ ոն

Մանուկը կը տեսնէ կեանքը
իւր լուս կողմերէն միշտ :

Չնախատեսեր ոչ վտանգներ,
ոչ թշուառութիւն :

Անյոյզ և անկասկած զուար-
ճայի իրեր միայն կը մտածէ :

Եթէ զիշտ մը գգայ, այս զիշտը
իսկոյն կը փարատի :

Կարելի՞ է երևակայել էակ մը
աւելի շնորհայից, աւելի զը-
ւարթ, աւելի սիրուն :

Վայելուչ ոն

Մանուկը կը տեսնէ կեանքը
իրը ճանապարհ մը ծագկասփիւս
վարդայտտակ :

Չնախատեսեր ոչ մին այն վը-
տանգներէն որք կ'սպասեն նմա :

Իւր միտքը զե՛րծ ի կասկա-
ծանաց շնորհագեղ պատկերներ
միայն կ'երկնէ :

Եթէ թեթև զիշտեր վայրիկ
մը գան զինքը վրդովել, իսկոյն
կը փարատի :

Ի՞նչ կը պակսի նմա ընծայե-
լու համար հաւատարիմ պատ-
կերը զուարթութեան, շնորհաց
և յանկուցիչ գեղոյ. Լասերէս

60. Հ. Ի՞նչ է ձոխութիւնը .

Պ. ձոխութիւնն է առատութիւն զազախա-
րաց, կենդանի պատկերաց և գեղեցիկ բացատ-
րութեանց : Այսպէս ձոխ կ'ըսուի ոճը :

Ղ. Երբ քիչ բառերու մէջ շատ խմաստ կը
պարունակէ :

Լամարթին անկեալ մարդուն մեծութիւնն ու միանգամայն թշուառութիւնը կը ներկայացնէ ճարտարութեամբ հետեւեալ երկու տողերուն մէջ .

« Իւր բնութեամբ սահմանաւոր , եւ իղձերովն անվախ-
հան ,
Անկեալ Աստուած մի է մարդ որ միտ զերկին կ'ածէ
յուր : »

2. Երբ նկար կամ պատկեր կը յօրինէ .

Պօսիւ է այսպէս կը նկարէ պատրեալ մարդոյն ցը-
նորքը .

« Մեր պատիր յուսոց երկար շրջան ընդ քառս կը
սանինք ցգերեզման : »

61. Հ. Ի՞նչ է նրբամտութիւնը .

Պ. Նրբամտութիւնը յատկութիւնն մ'է որով
միտքը սովորաբար մարդոց ընդհանուրին տե-
սածէն աւելի հեռուն կը նշմարէ և աւելի խորը
կը թափանցէ : Մտքին այս յատկութիւնն երբ ո-
ճոյ անցնի , յառաջ կը բերէ իրաց խորին ու նրբին
տեսութիւն մը , կիսասքօղ բացատրութիւններ և
իմաստից արտայայտման անուղղակի ձևեր : Լա
Ռոչֆուգոյ , Լա Պրիւյէր և Վոլֆարկ ընտիր օրի-
նակներ են նրբամիտ ոճոյ . զոր օրինակ ,

« Կեղծաւորութիւնը մեծարանաց հարկ մ'է զոր մո-
լութիւնը կը մատուցանէ առաքինութեան : »

« Գովեստից մերժումն երիցս գովուելու տենչ մ'է : »

« Կը սիրեմք միշտ զանոնք որք մեր վրայ կը զար-
մանան . և չեմք սիրեր միշտ զանոնք՝ որոց վրայ
մեք կը զարմանամք : »

« Ամէն մարդ կը գանգատի իւր յիշողութեան վր-
րայ . ոչ ոք իւր գատողութեան վրայ : »

— Անգղիոյ Եղիսարէթ թագուհին իւր պաշտօն-

եայներէն միոյն կը հարցնէր թէ ի՞նչ անցաւ ժողովոյն մէջ . — Չորս ժամ, Տիկին, պատասխանեց վերջինը :

— Երիտասարդ դատաւոր մը դատարանի գահերէց կ'ընտրուի, և Նարուէոնի կը ներկայանայ, կայսրը գինքը բաւական չափահաս չգտնելով «Գաներէց սէր, կ'ըսէ, քիչ մը օտս երիտասարդ է: — Ինքնակալ Տէր, կը պատասխանէ նրբամիտ գահերէցը, ճիշդ այն տարիքն ունիմ յորում Ձեր վեհափառութիւնը Մարեցկոյի պատերազմին յաղթեց:» Այս ճարտար պատասխանին վրայ Նարուէոն նորա գահերիցութիւնը կը հաստատէ:

— Թաւերան՝ լսելով որ իրեն յաջորդող ասպիկար պաշտօնեաները կը գովէին և կ'ըսէին թէ գԳաղիա պիտի ազատեն . «Չարմանալու ի՞նչ կայ, ըսաւ, սագերն ալ զկապիտոլ ազատեցին:»

63 . Հ. ի՞նչ պարտէ է լինել նրբամտութեան գործածութեան մէջ:

Պ. Նրբամտութեան գործածութեան մէջ հարկ է ժուժկալ և զգոյշ լինել, վասնզի եթէ յաճախ և յանճահս գործածուի, գրողին վրայ խեղք ցուցնելու ճիգ մը, խելացութեան պահանջողութիւն մը ի վեր կը հանէ, և յայնժամ, ինչպէս կ'ըսէ Կրեստ,

« Միտք գոր կ'ուզէ ոք ունենալ, ունեցածն ալ կ'եղծանէ:»

(L'esprit qu'on veut avoir gâte celui qu'on a.)

Եւ կամ, ինչպէս կ'ըսէ Մոնթէսքիէօ,

« Երբ հետամուտ լինի ոք հանճարաբան լինելու, անհետքեան կը հասնի:»

(Quand on court après l'esprit, on attrape la sottise.)

63. Հ. Ի՞նչ է Փափկութիւնը .

Պ. Փափկութիւնը ,յատկութիւն մ'է սրտի ինչպէս նրբամտութիւնը մտքի . և կը կայանայ զգացում մը ճարտարապէս քողարկելով արտայայտելու մէջ , երբ շուղեր ոք բացէ ի բաց և անպատշաճ կերպով ,յայտնել զայն .

— Ռամիլիոյ ճակատամարտէն յետոյ , Լուզովիկոս ԺԴ յանդիմանութիւնը փափկութեամբ մեղմացնելով՝ ըսաւ մարաջախտ Վիլլըրուայի որ կորուսած էր յաղթութիւնը . Պարոն մարազախս , մեր տարիքին մէջ այլեւս երջանիկ չէ մարդ .

Երբ Բիէր Տիւբօն Բարիզ հասաւ , երիտասարդ , աղքատ և լի երազներով , ուղեց ներկայանալ մեծ քերթողի մը . Սենեկապետը արհամարհանօք պատասխանեց անոր թէ տէրը դուրս ելած է : Բիէր Տիւբօն զգաց թէ գինքը կը խտրեն . թղթի կտոր մը խնդրեց և հետևեալ տողերը գրեց առ քերթողն .

« Երէ տեսնէիր պուս մը որ , նուազեալ եւ մերձ ի բառամել , խնդրէր ի քէն , իբր ողորմութիւն , կարիլ մը ջուր փրբելու համար . երէ տեսնէիր ծիծեռնիկ մը որ , ձմեռը պատուհանիդ ապակւոյն իւր քեւերը զարնելով՝ աղաչէր քեզ վայր մը իրեն սալ յարկիդ սակ , ծիծեռնիկը պիտի ունենար իւր ապաստանարանն եւ պուսք իւր ջրոյ կարիլը . ես ալ , քե՛րքող , է՛ր քեզ համար չեմ այն խոնարհ ծաղիկը , կամ այն խոնարհ բոչնիկը : »

— Օր մը մէկը խնդրեց թաւերանէն գի Վօսմօն իշխանուհւոյն բնակարանը ցուցնէ իւրեան . « Սէն-Լազար փողոցը կը բնակի , պատասխանեց թաւերան . իսկ տանը բիւր չգիտեմ , բաղին աղտանեռուն հարջուր : »

Այս խօսքով կ'ուզէր իշխանուհւոյն գթասրտու-

Թիւնն ու անասածեանու թիւնը գովել . զի թշուա-
ասց բարեկամուհին էր և աղքատաց նեցուկ :

— Մօծարէօն՝ Թալէրանի տունը ճաշի հրաւիր-
եալ լինելով , սակաւիկ մը ուշացաւ , և սկսաւ թո-
ղութիւն խնդրել . « Հոգ չէ , սիրելիդ իմ զօրապետ ,
գոչեց նմա թալէրան . ամենէն վերջն եկաք դուք , վասն
զի պատերազմի դատերը հրաւիրուած չէիք , այլ նաշե-
լու : »

— Բանաստեղծ մը կ'ըսէր իւր սիրելի բարեկա-
մին . « Ամենէն ամայի եւ անապատ վայրերուն մէջ իսկ ,
ինձ նամար մեծ բնկերութիւն մ'էք : »

— Տանիմարքայի թագաւորն երբ կը գտնուէր ի
Բարիզ , Գաղիացի բանաստեղծ մը կ'ուզէր ան նա
քերթուած մը յորում հետեւեալ փափուկ բացատրու-
թիւնը կը գտնուէր . « Սիրելի եւ մեծարոյ բագաւոր
մը՝ ամէն երկրի մէջ հպատակներ ունի . ի զուր կը երջի
նա օտար երկիրներ , միտ իւր իշխանութեան երկրին
մէջ է : »

64. Հ. Ի՞նչ է Շնորհիք .

Գ. Շնորհքը միաւորութիւն մ'է փափուկ ըզ-
գացմանց , սիրուն և գողտրիկ գաղափարաց ,
պարզ ու բնական պատկերաց և զարդուց :

Ըմբռնելու համար պարզ ու շնորհալից սճերուն
տարրերութիւնը , հետեւեալ երկու օրինակները բազ-
մապէս կ'ընեն .

4. ԳԱՐՆԱՆ ԱՌԱՌՈՏ ՄԸ

Պարզ ոն

Շնորհալից ոն

Վարդենին տակաւին շէր
ծաղկած , բայց մանիշակներն
ըացուած էին , և փափուկ տե .

Վարդը գետ շէր արձակած
իւր բազմբաճառ բշրերը , բայց
խոնարհ մանիշակը անուշ հասով

բևեներ կ'սկսէին արձակուիլ ծառայ վրայ :

Յողը զանաւոր կը թրջէր. առաջ առ զոմ հողմ մը զգայի կ'ըլլար :

Միջատները կը շարժէին խոտոց տակ և զուարթ թռչուններ կը խմէին ցօղոյ կտիտները :

կը լեցնէր անտառները, և զաւարագեղ բազմահոյլ տերևք զուրս կ'արձակուէին պակասց ձէջէն :

Մէն մի տերև ունէր յիմքեան ծորան մարդարիտ մը, և երբ զովագին ու քաղցրաշունչ զեփուռը կը շարժէր ծառոց տերևները, ջինջ ու վճիտ կտիտներ կը թրջէին գետինը :

Միջատը զուարթագին կը շարժէր խոտոյն տակ, և թռչունը բախելով իւր թեկերը կ'ըմպէր երկնածորան ըմպելիքը :

Պէրն. sp սէն քիէր

2. ԹԻԹԵՌՆԻԿԸ ԵՒ ՎԱՊԻԸ

Պարզ ոն

Թիթեռներ կը վարդէն նախածեմար է :

Բաց ի գեղեցկութենէ, ունի նա մեր զգայարանները և հոգի մը :

Վարդին հիւթովը կը սնանի, և վարդեմուշն ծիւղերուն վրայ կը գնէ իւր ձուերը որք կը պահպանուին այն փուշերէն որք կը պատեն վարդեմին :

Անզգայ վարդը թոյլ կուտայ որ քաղեն զինքը. բայց թիթեռ-

Շնորհալից ոն

Թիթեռներին աւելի գեղեցիկ և աւելի կազմակերպեալ է քան վարդը :

Բաց ի գեղեցկութենէ, ունի նա կարողութիւն տեսնելու, լսելու, հաստատելու, ճաշակելու, զգալու, շարժելու, հուսկ ուրեմն հոգի մը կրիւք և իմացակամութեամբ սմտուած :

Ձայն սնուցանելու համար վարդը կը բանայ իւր ծոցը. և պահպանելու համար նորա ձուերը որք ապարանջանի պէտ ընդելու զուած են իւր տերևոց շուրջը, փուշերով շրջապատուած է վարդեմին :

Վարդը շտեմներ մանուկը որ կը դիմէ զինքը քաղելու համար :

Նիկը խոյս կուտայ, կը թռչտի և
կ'երթայ ի խնդիր այլ ծագկանց
հանգչելու համար Եղսա վրայ:

բայց թիթեանիկը որ հանգչած է
վարդին վրայ, խոյս կուտայ ձեռ-
քէն որ ահա պիտի բռնէր զին-
քը. կը բարձրանայ այնքց մէջ,
կ'իջնէ ի վայր, գարձեալ կը մո-
տենայ և խաղիբ ու կատակներ
ընելէ յետոյ որտորդին հետ, կը
թռչի և կ'երթայ ապահով և
խաղաղ ապաստանի մը ի խնդիր
այլ ծագկանց վրայ:

Պէրն. քր սէն բիւր

Ենորհալից ոճոյ օրինակ կրնան ըլլալ նաև Վայել-
չութեան համար (տես թիւ 59) յառաջ կերուած եր-
կու բաղդատական օրինակները:

Ենորհալի է պատկերն յորում Հոմեր կը նկարէ
զՀեկտոր երբ սա իւր հրաժեշտի ողջոյնը կուտայ իւր
կնոջ և որդւոյն.

Ասացեալ զայս՝ տարածեաց Հեկտոր ահեղ գիբկս առ որդեակն,
Եւ մանկիկն յետս ի ծոց զեղեցկամէջ իւրոյ սարնտու ին
ձիչ բարձեալ խոնարհեցաւ՝ ի տես սիրուն հօր զարհուրեալ,
Պակուցեալ ի պըզընձոյն ու ի ձիագէս գարգմանակէն,
Զահաւոր տեսեալ ճածելն ի գագթմանց գըլխանոցին,
Ընդ որ հայրըն սիրելի և մեծարոյն ժրմտեցաւ մայր,
Եւ անդէն բարձ ի գըլխոյն ըզտազաւարտն ահեղն Հեկտոր,
Եւ առեալ զայն ի վայր՝ ճաճանչաւեա եզ ի գեանի.
Եւ զմանկիկըն սիրուն ողջագուրեալ ճօճաւ ի ձեռան,
Յաջօթս եկաց և տսէ առ Սրամազգ եւ առ այլ զիս:

Արամազգ եւ այլ աստուածք, տուք եւ ըզտա զիմքս որդեակ
Լինել, որպէս եւ եսս, արժանափառ ի արժւացիս,
Այսպէս հըզօր զօրութեամբ եւ բաջարար տէր յիլիսն,
Եւ իցէ ոք առասցէ, բամ սա քան զհայրն արիագոյն,
Ի մարտէն յորժամ գարձցի եւ արիւնտս բերցէ կապուտ՝
Սատակեալ զախոյեանն, եւ մայրն ի սիրտ իւր խնդաացէ:

Զայս ասաց եւ ամուսնոյն զօրդեակն ի ձեռս եւ սիրայնոյ,
Որ առեալ ընկալաւ ըջնա ի գիբկս իւր բուրազուարթ

Աբտասու ախաան իբնդու թեամբ. առն յայն տեսիլ իտանգ աղատեալ
Փայլփայկաց ձեռքն ըզնա, կարգաց զտնուն իւր եւ առէ.

Նազէիիգ իմ, մի՛ անշափ զինեն ի սուգ հարցի քո սիրտ,
Զի յառաջ քան ըզհրամանան ոչ ոք ի գժտխա ընկեացէ զիս,
Իսկ յորհաւեն՝ եւ ոչ զոք ի մարդկանէ կարծեմ փախել,
Ոչ ըզվատ եւ ոչ ըզքաջ, յետ միանգամ ի լշյո գալոյ :
Այլ երթեալ քո ի տուն՝ քոյոց իրաց առնիջիր պէտ,
Ոստայնիգ եւ ի լոյդ, եւ ազախնայցըգ տուր հրաման
Ըզգ ործոյք գալ իւրեանց. հոգացցեն արք ի պատերազմ
Որ ծնեալքն են յիլինն ամեներին, ես մահաւանդ :

Իլիակ Երգ 2.



3. ՎՍԵՄ ԿԱՄ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՈՃ

65. Հ. Ի՞նչ է վսեմ կամ Բարձրագոյն ոճոյ
Նկարագիրը և ի՞նչ նիւթոց կը պատշաճի .

Պ. վսեմ ոճոյն նկարագիրն է գաղափարաց և
զգացմանց վեհութիւն, և լեզուի ու բացատ-
րութեան շքեղութիւն և սաստկութիւն : Այս
ոճը կը պատշաճի բանաստեղծական, պատմական
և փիլիսոփայական բարձր նիւթերու :

66. Հ. Ո՞րք են վսեմ ոճոյ պատշաճագոյն
յատկութիւնք ,

Պ. վսեմ ոճոյ պատշաճագոյն յատկութիւնք
են . 1. Կորովութիւն . 2. Ուժգնութիւն . 3. Պերան-
քիւն և 4. Բուռ վսեմ :

67. Հ. Ի՞նչ է Կորովութիւնը .

Պ. Ոճոյ կորովութիւնն այն յատկութիւնն է որ
զգացումը կամ գաղափարը կը սեղմէ քիչ բա-
ռերու մէջ, զայն աւելի զօրեղ և աւելի սաստիկ

բացատրելու համար, Ուստի կորովի են բացատրութեան կարճ ու հզօր կերպեր, քիչ բառերու մէջ հակադիր իմաստներ պարունակող ասացուածներ, և բառեր՝ որոց վրայ կը գումարի զգացմանց եւ գաղափարաց յորդութիւն մը :

Ահաւասիկ օրինակներ ոճոյ կորովու թեան սոյն իւրաքանչիւր կերպերուն .

— Հանրի Գ. սա խօսքերը կ'ուզղէ ճակատամարտի օր մը սա իւր զօրս մերձ ի կռիւ «ես ձեր բազաւորն եմ, դուք Գաղիացի էք, անա բեճամին :»

— Մեծն Նարուէոն իւր յազթական բանակին գըլուխն անցած երբ կը հասնի յեգիպտոս, բրգանց ըստորտը, քաջալերելու համար իւր զօրքերն, հեռեկալ խօսքերն կ'ուզղէ սա նոսա «Զօրակա՛նք, դուք այսօր եգիպտոսի սիրապեսաց դէմ պիտի պատերազմիք . խորհեցէք որ այս յիշատակարանաց բարձունքէն քառասուն դարեր զձեզ կը դիտեն :»

— Միլտոնի Գրայս կորուսեալին մէջ, Սատանան իւր յուսահատութեան մէջ կը գոչէ .

«Լաւ ի դժոխս է սիրել՝ քան քէ յերկինս լինել գերի .»

— Մասիլեօն իւր ճառերէն միոյն մէջ հեռեկալ կորովի ազաղակը կ'արձակէ . «Ամէն ինչ կը փոխուի՝ ամէն ինչ կ'սպառի, ամէն ինչ կը շիջանի . Ասուած միայն կայ եւ մնայ անփոփոխ : Գարուց հեղեղն՝ որ բոլոր մարդկային ազգը կը յափեցակէ կը քանի, կը հոսի նորա աչաց առջեւ եւ ցատամբ կը տեսնէ որ այս սրբընթաց հոսանքէն յափեցակուած սկօր մահկանացուք, լանցանելն իւրեանց կը բեճամանեն գինքն՝ այս մէկ վայրկեանն իւրեանց երջանկութիւն համարելով, եւ յեւանելն անսի՝ կ'իյնան նորա բարկութեան եւ արդարութեան յաւիտեական ձեռաց մէջ :»

68. 2. Ի՞նչ է Ուժգնութիւնը .

Պ. Ուժգնութիւնն է վերին աստիճան կորովութեան . կրից սաստկութենէն ոգեւորեալ . և յառաջ կուգայ ոչ այնչափ խօսքերուն զօրութենէն որչափ բացատրութեան բուռն կերպէն և ընթացքէն .

Հետեւեալն ոճոյ ուժգնութեան օրինակ է .

ՊԱՏԿԱՄ ՏԵՍՈՒՆ ՈՐ ԵՂԵՒ ԱՅ ԶՈՒԼԷՂ

ԲԱԹՈՒԷՒԻ ԹԱՌՈՒՐՍ ԵՉԵՆԻԱՅ

Լուարուք զայս , ձերք , և ունկն դիք , ամենայն բնակիչք երկրի . եթէ եղեալ է այսպիսի ինչ յաւուրս ձեր , կամ յաւուրս հարցն ձերոց , Պատմեցէք զայս որդւոց ձերոց , և որդիք ձեր որդւոց իւրեանց , և որդիք նոցա յազգ յայլ : Զմնացորդս թրթրոյ եկեր մարախ , և զմնացորդս մարախոյ եկեր ջորեակ , և զմնացորդս ջորեկի եկեր երեւիլ : Սթափեցարուք արբեալք ի գինւոյ , և լացէք և զգացարուք ամենեքեան որ ըմպէք գինի ցարբենալ . զի բարձաւ ի բերանոյ ձերմէ ուրախութիւն և խնդութիւն : Զի ազգ մի ել յերկիր իմ հզօր և անթիւ . ատամունք նորա ատամունք առիւծու , և Տանիք նորա կորեան առիւծու : Արար զորթ իմ յապականութիւն , և զթղենիս իմ խորտակումն . յուզելով յուզեաց և ընկէց ըզնա , և լանցոյց զուսս նորա : Ողբա առ իս իրբև զհարսն քրձազգած ի վերայ առն իւրոյ ամուսնոյ , Բարձան զոհք և սպանդք ի տանէ Տեառն . սուգ առէք , քահանայք՝ պաշտօնեայք սեղանոյ , զի թշուառացան դաշտք . սուգ առցէ երկիր՝ զի թշուառացուցորեան , ցամաքեցաւ գինի , նուազեաց ձէթ : Ողբա .

ցէք , մշակք , ստացուածովք ի վերայ ցորենոյ և դար-
ւոյ . զի կորեան կութք յագարակէ , ցամաքեցաւ որթ ,
նուազեաց թուղ և նուռն և արմաւ և խնձոր , և ամե-
նայն փայտ ագարակի դօսացաւ . զի յամօթ արա-
րին զուրախութիւն . որդիք մարդկան , քրձագգածք
եղերուք . կոճեցարուք , քահանայք սուղ առէք՝ պաշ-
տօնեայք սեղանոյ . մտէք ննջեցէք խորզով , պաշտօն-
եայք Աստուծոյ , զի սպականցին ի տանէ Աստուծոյ
ձերոյ զոհք և սպանդք : Սրբեցէք պահս , քարոզեցէք
պաղատանս . ժողովեցէք զձերս , ամենայն բնակիչք
երկրիդ , ի տուն Աստուծոյ ձերոյ , և աղաղակեցէք
առ Տէր սրտի մտօք : Վա՛յ ինձ , վա՛յ ինձ , վա՛յ ինձ
յաւուր յայնմիկ . զի մերձ է օր Տեառն . իբրև թըշ-
ուառութիւն ի թշուառութենէ՝ հասցէ առաջի աշաց
ձերոց . սպականեցան կերակուրք ի տանէ Աստուծոյ
ձերոյ , ուրախութիւն և խնդութիւն : Սայտացին ե-
րինջք ի մտերս իւրեանց . ապականեցան դանձք ,
տապալեցան շտեմարանք՝ զի խորշակահար եղև ցոր-
եան . զի՞նչ համբարեցից ի նոսա . լացին դասակք
անդւոց , զի ոչ գոյր նոցա արօտ , և հօտք խաշանց
սատակեցան : Առ քեզ , Տէր , աղաղակեցից , զի հուր
սատակեաց զգեղեցկութիւն անապատի , և բոց ծախ-
եաց զամենայն փայտս ագարակի . և երէ վայրի ի
քեզ հայեցաւ զի ցամաքեցան վտակք ջուրց , և հուր
եկեր զգեղեցկութիւն անապատի :

Ս. Գիրք . Մարգ . Յովկայ

69 . Հ . Ի՞նչ է Պերճութիւնը .

Պ . Պերճութիւնն է ճոխութիւն ոճոյ զոյդ ընդ
մեծութեան նիւթոյ . կ'ընծայեցնէ մեծ դա-
ղափարներ մեծաշուք պատկերներով արտայայ-
տուած :

Քանիօ՞ն պերճ է Սաղմոսին հետևեալ նկարագրու թիւնը :

« Առովեցաւ և դողաց երկիր , և հիմունք լերանց սասանեցան և խռովեցան . զի բարկացաւ ի վերայ նոցա Աստուած : Եւ ծուխ ի բարկութենէ նորա , և հուր յերեսաց նորա բորբոքեցաւ , և փայլատակունք հատան ի նմանէ : Ածարհեցոյց զերկինս , և էջ . և մէդ ի ներքոյ ստից նորա : Եւ ի քրովքէս և թռեաւ , սլացաւ նա ի թևս հողմոց . եդ զխաւարն ի ծածկոյթ իւր , և շուրջ զնովաւ են յարկք իւր , և խաւարային ջուրք մինչև յամպս օդոց : »

70. Հ. Ի՞նչ է Բուն վսեմը .

Պ. Բուն վսեմը գաղափար մը կամ պատկեր մը և կամ զգացում մ'է որ իւր մեծութեամբը և բարձրութեամբը կ'ապշեցնէ կամ կը յուզէ զմեզ :

71. Հ. Բուն վսեմը կրնա՞յ սովորական և տեւական ըլլալ .

Պ. Այս տեսակ վսեմը հարկաւ անօտը և վայրկենական կ'ըլլայ , զի ինչ որ ծայրայեղ է չկրնար սովորական և տեւական ըլլալ խօսք մը , բառ մը , շարժում մը , ձեւ մ'է որ փայլակի կամ շանթի տպաւորութիւնը կ'ընէ և այնքան անկախ է արուեստէն զի արուեստին բնաւին անտեղեակ անձանց վրայ իսկ կուգայ յերեւան : Ահաւասիկ օրինակ մը .

Մայր մը իւր միամօր որդին մահամերձ վիճակի մէջ տեսնելով կը վշտանար անմխիթար . քահանայ մը կը ջանայ սփոփել զայն ըսելով նմա թէ Աստուած առ ինքն կը կոչէր իւր զաւակը , և օրինակ յառաջ կը

բերէր Արրահամու անձնուիրութիւնը, որ, Տիրոջ կամքը կատարելու համար, պիտի զոհէր իւր Իսահակ որդին: «Ո՛հ, գոչեց կինն, Ասուած այդպիսի զոհ մը չպիտի պահանջէր մօրմէ մը:»

Այս խօսքը մայրական զգացման վսեմն է.

72. Հ. Քանի՞ տեսակ է Բուն վսեմը.

Պ. Երեք տեսակ. 1. Պատկերի վսեմ. 2. Գաղափարի վսեմ. 3. Զգացման վսեմ.

73. Հ. Ի՞նչ է Պատկերի վսեմը.

Պ. Պատկերի վսեմը կը նկարէ մեծ առարկաներ հիացուցիչ մեծութեամբ և ահաւոր գոյներով. զոր օրինակ,

Վիրգիլիոս, երբ ուզէ նկարել Արամազդայ խօսից ազդեցութիւն, կ'ըսէ.

Յայնժամ հայրն ամենակալ, այն որ բնուից իշխէ իրաց,
Առնու խօսել. և ի խօսել նորա՝ լըռէ գիցըն տաճար
Երկնահասոյց, և սասանեալ գողայ երկիր խոր ի հիմանց.
Լըռէ եթեր բարձրակամօր, ըզկայ առնուն յայնժամ զեփրոսք,
Եւ ծով ծայրածաւալ ի հարթարգակ դառնայ ի գաշտ:

Յնկակ. Ժ. 106

Եւ Բագրատունին քանի՞ օն վսեմ կը յօրինէ պատկերն երբ յօտն կ'ելնէ Աստուած և կ'երդնու պաշտպանել արդարոյն.

Եթեռոյն ազամանդեայ յարեաւ անմահն և յառն եկաց
Հինաւուրցն յաւիտենից աստիքն ալեօքըն պսակեալ.
Գունա վերին խորան գունթեթ բարձրք գահուն սասանեցաւ,
Եւ երկերըս պատուանդան զըզըրդեցաւ. 'գոտիւք նորա.
Ի սըրամբեալ երեսացն՝ արփիցըն բոյլք փախեան ի գող:
Տարածեալ ըզթեւըս իւր ընդ քառակողմ՝ անհուն եզերս՝
Բունն եհար կալաւ զբնութիւն անպարագիծ, յանձն իւր երգուաւ:
Երգուաւ յանմահութիւն իւրոյ կենացըն յաւերժից.
«Զօրութիւնք երկնից, ասէ յահեղ բարբառ, վըզայ լըրուք: —
Եւ կացին տասեզք անչարժ և մըտաղիւր ի կայս իւրեանց —

Գուք վրկույք, օ՛ն և օ՛ն՝ կամաց շարին մի տաց յազուրդ,
ի բազում փորձութեան պաշտպան եղէց ես արդարոյն :
Բազմեցաւ, տիեզերաց սիւնք ւաղիք երկրի հանդարտեցին :

Հ. Գիւյց. Բ. 876

74. Հ. Ի՛նչ է Գաղափարի վսեմը .

Պ. Գաղափարի վսեմը սովորաբար կը ներկայ-
յացնէ մեծ գաղափար մը սեղմութեամբ բա-
ցատրուած :

Այսպէս է Մենդոց գրքին սա խօսքն ,

Ասաց Ասուած , եղիցի լոյս եւ եղիւ լոյս :

Մասիլէոն Լուդովիկոս Ժ՛Ի ի դագաղին առջև սա
վսեմ խօսքը կ'արտասանէ .

Ասուած միայն մեծ է , եղբարք իմ .

Լամարթին ուզելով բացատրել թէ ինչո՞ւ արդարը
թշուառ է երբեմն երկրի վրայ , Աստուծոյ բերանը
կը դնէ հետեւեալ սեղմ և վսեմ խօսքերն .

Դու արդար լինելու համար օր մ'ունիս միայն . իսկ
ես յաւիտեականութիւնն ունիմ իմ առջեւ :

Հետեւեալ օրինակը կը ցուցունէ այն տարբե-
րութիւնն որ կայ վսեմին և վսեմ՝ ոճին մէջտեղ .
Տեսի զամպարիշարն մեծարեալ աստ յերկրի ,

Որպէս մայրի յանտառի՝ ըզսիգապանձ զիւր ճակատ
Մըրարէր անդ ի յերկինս .

Թուէր շանթից որոտմանց հրամանատար ինքնիշխան
Եւ առ սան նա կօխէր ըզթշնամիս իւր պարտեալս .

Անցի 'ւ անա ոչ եւս էր :

Առաջին հինգ տողերն որք մեծ գաղափարներ
կ'ընծայեցնեն , վսեմ ոճոյ կը պատկանին առանց վսեմ
ըլլալու . իսկ վերջին տողն ինքնին վսեմ է իւր պար-
զութեան մէջ :

75. Հ. Ե՛րբ վսեմ կ'ըսուին զգացմունք .

Պ. Վսեմ կ'ըսուին այն զգացմունք երբ կը
թուին լինել գեր ի վերոյ քան զմարդկային բը-
նութիւն , և մարդկեղէն տկարութեան մէջ գող-
ցես աստուածային զօրութիւն մը կը յայտնեն .

Գոռնէյլ լի է այս տեսակ վսեմներով : Մէդէա ,
իւր համանուն ողբերգութեան մէջ , կ'ուզէ վրէժ
առնուլ իւր թշնամիներէն . ներինէ , իւր մտերմու-
հին , կ'ըսէ նմա ,

Քո աշխարհը կ'ատէ ըզքեզ , և քո փեսայն է գրու-
թան

Այնչափ ահեղ թշնամեաց դէմ այլ ևս ի՞նչ կը մնայ
քեզ

Մ է Դ է Ա

Ե՛ս

Ե՛ս , կ'ըսեմ , և բաւ է այն :

Որատիոս , ծերունի հայրն Որատեանց (Ողբերգ-
Գոռնէյլի) , երբ կը լսէ թէ իւր երրորդ որդին խոյս
տուած է իւր հակառակորդաց առջևէն , կը զայրա-
նայ նորա վատութեան վրայ . Յուլիա կ'ըսէ .

Այն երից դէմ ի՞նչ կ'ուզէիր որ ընէր ,

Ո Ր Ա Տ Ի Ո Ս

Թո՛ղ մեռնէր :

Բողանդակ հնութեան մէջ , կ'ըսէ Վոլթէր , այս
հռչակաւոր բոլ մեռնէրին պէս վսեմ խօսք մը չկայ :

Հետևեալներն զգացման վսեմի օրինակներ են .

— Պորրոս , Հնդկաց թագաւորն , ահեղ ճակատա-
մարտէ մը յետոյ անձնատուր լինելով Ազեքսանդրի ,
երբ Ազեքսանդր հարցուց նմա « Իբրեւ որո՞ւ հետ վար-
ուիմ հետդ » , պատասխանեց « Իբրեւ քաղաւորի մը
հետ » :

— Յուլիոս Կեսար ծպտեալ նաւարկելու ժամա-

նակ բուռն մտքով մը ելաւ և նաւը վտանգի մէջ էր :
Երբ նաւապետը կը ջանար անդրէն ցամաք դարձու-
նել զնաւն, Կեսար կ'ըսէ յ'նչ կը վախնաս, Կեսարը
կը քանխոս :

76. Հ. Ոճոյ այս երեք տեսակներն այսինքն
Պարզը, Միջակը, և Վսեմը բոլորովին իրարմէ
բաժանեալ են :

Պ. Ոչ. Ընդհակառակն, շատ անգամ իրարու
հետ խառնուած կը տեսնուին միեւնոյն նիւթին
մէջ և միեւնոյն էջին վրայ. նիւթին մասերուն
համեմատութեամբ ոճն ալ կրնայ բարձրանալ
կամ խոնարհիլ, և նոյն իսկ ոճոյ այս ելեւէջը
նորա գեղեցկագոյն հրապոյրներէն մին կը կազ-
մէ. Լաֆոնթէնի առականներն այս մասին շատ օ-
րինակներ կ'ընծայեն մեզ :



ՊԱՐԶ . ՄԻԶԱԿ ԵՒ ՎՍԵՄ ՈՃԵՐՈՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ

1. ԱՐՈՒՆԵՍ ԲԱՆԱՍՏԵՂՆՈՒԹԵԱՆ

Ի պառնասեան շերին՝ զուր մտանեագիր մպրհական՝
Չափական մեծ արուեստին խորհի ելլել յարտեւան,
Թէ չգգայ սիրտըն՝ ծածուկ զազգեցուիմիւն երկնաւոր,
Թէ բանաստեղծ շծընու իւր աստղը զինք ծննդեան օր.

•••

Ո՛վ գուք ուրեմն, բորբոքած վտանգաւոր եռանդեամբ,
Որ կ'ընթանայք հանճարին՝ ըզփշուից ճանապարհ.
Եթ' անպատու զյորինել տաղեր ըլլայ մեր ալ կամք.
Ոտանաւոր գրելու սէրն՝ մի համարիք մեծ հանճար.
Վախցէք անտի հանճից հրապոյրքներէն պատրակամ.
Երկայն ասեն շափեցէք մեր միտքն ու կար զօրութեան:

•••

Ինչ որ գրուի, զբոսուցիչ ըլլայ նիւթ կամ բարձրակամ.
Առողջ ինասան՝ յանգերուն թող ընթանայ առ երի.
Ի զուր զիրար անգոսնել յանգ և իմաստ երեւան.
Յանգըն միայն հնազանդիլ պարտի. է սարուկ և գերի:
Թէ ի սկզբան ջանայ մարդ յանգ հնարելու զմուսարու.
Ձայն գտնելու գիրուս միտք կ'ընտելանայ առ տակաւ.
Մտաց լուծին խոտարհի անաշխատ՝ յանգըն անշուշտ,
Ձի՛ նկեր զայն, նա՛ ջղուս իսկ կը գործէ և հարուստ:

•••

Բանաւոր միտքըն սիրէ՛. ասունն աստիքս գրեանք՝
Իրենց արժէք . փայլն ու փառք և գոյնագոյն իսկ երանգ:

•••

ՄԱՆՕԹ. Ոճոյ իւրաքանչիւր տեսակին իրր օրինակ
յառաջ բերուած այս հատուածները դիտմամբ խառն
դասաւորած եմք: Ուսուցիչն իւրաքանչիւր հատուածը
կարդալէ և բացատրելէ յետոյ, թող աշակերտին ու
րոշել տայ թէ ո՞ր տեսակ ոճոյ կը պատկանի այն:

Անմիտ խանդակն ոչ սակաւ քյափշտափուան հարմար
 Բանեն հեռու խոտորին՝ փնտաել իրենց խորհուրդներ .
 Հրեշ տաղից մէջ՝ կը կարծեն նուտտամաւ սարկարար ,
 Թէ մտածեն ինչպէս այլ քյառաջ արգեն են խորհեր :



Մտանկարքի մի երբեմն իւր նիւթով շատ լիացած ,
 Թէ շագաւ գլխովին , շի հեռանար բնու ի բաց :
 Թէ պատահի պալատան , նշկարագրէ ըզմակաւ ,
 Զիս կը տանի յածելով դարաւանդէ դարաւանդ .
 Վերնագաւթակ մի պատէ , եւ երկայն փող մի կայ անդ ,
 Զայս պատը զգամ բուրբէ վանդակ մի մեծ սահեպատ :
 Գմբէթայարգ , ձուանեւ ձեզուաներ ինչ կը պատմէ .
 « Գանձայ դրասանդ են , կ'ըսէ , եւ սեանց կոճակ մարմեր (1) : »
 Եփերջ գրքին համեմալ՝ թերթեմ թերթեր քըսանակ ,
 Հագիթէ հազ զերծանիմ , կարելով իսկ պարտիզակ :
 Հեղինակաց՝ այս ցամաք յորդու թեկնէն գու փոփեր .
 Մի՛ մանրամասն աւելորդ զիջանիր տալ ստորագիր :
 Ի՛ անախորձ և անհամ թէ պատմես շատ և երկայն ,
 Միտքըն յազած կը նետէ յանձնէ իսկոյն ի բաց զայն :
 Գրել շի գիտեր , որ գրչին՝ գընել սահման շուսանի :



Ժողովրդեան վայելել արդեօք կ'ու զե՞ս գու զեր .
 Օ՛ն , գրչու մէջ անդադար փոփոխէ միշտ քու խօսքեր .
 Ետտ միակերպ գրչութիւն և ս՞ մի պարզ ընտանի .
 Ի զուր փայլի մեր աշաց , ի քուն ըզմեղ կը տանի :
 Կարգացուին քիչ այն գրիչներ՝ անկրացուցիչք մեզ համար ,
 Որ միակերպ , մեծանայն ճառելէ շեն զգուշանար :



Երեւե՛կ մարդուն որ գիտէ շափակունին մէջ արագ ,
 Խտտէ ի քաղցր փոփոխել , զրոսականէ՛ զմեղակ :

(1) Scudery գազգ. բանաստեղծին՝ Ալարիկ անուն գիւցաղ-
 ներգու թեան մ'իկ տողն է . միայն սա տարբերութեամբ որ cou-
 ronnes բառը փոխած և գրած է՝ astragales , բանաստեղծի
 մը՝ որ պալատի մը ստորագրութեան 500 տող նուիրած է , զձուձ
 հանձարն աւելի յայտնապէս ցուցնելու նպատակաւ : Մ. Թ.

Ընթերցողաց ցանկայի , յերկնից իւր գիրքն է սիրուած ,
Պարպկնի քով պաշարեալ շուրջ կան գնացներ թանկրամած (1) :

• •

Ինչ որ ալ գրես , խորշէ միշտ ստորին սճէ անպատճառ ,
Նուազ ազնիւ սճքն իսկ լուսութենէ չէ ստար :

• •

Է բնարութիւնն ցանկայի՝ դաշնակամայն բառերու :
Մանքը հնչմանց՝ ասելի յորդութենէն ի՞ր հեռու :
Ոտանուարն՝ հոծ և կուս , և իմաստներ լուազոյն՝
Թէ ականջին հնչեն խիստ՝ հաճոյական չեն հոգւոյն :

• •

Կան շատ մտքեր , որոնց են գազափարներն խաւարին ,
Թէ թանկրամած ամպերով կարնես շագնեալ կը պատին ,
Քանական միտք իւր լուսով փարատել զայն չէ կարող :
Գրելն յառաջ գուն սորվէ նիւթին ըլլալ մտախոհ :
Թէ մեր մտաց խորհուրդներ են լուսուսք կամ մթին ,
Քոցաարութիւնք մեր կ'ըլլան կամ շատ յստակ կամ խրթին :
Քաջ լուսուսք յայտնուի , երբ բմբռնենք բան մը լուս ,
Ձայն պատմելու կը գտնենք յարմար բառեր շատ՝ գիւրու :

• •

Քո գրութեանց մէջ՝ մեծարող լեզուն բնաւ մի առնուր զանց ,
Նոյն իսկ եթէ գու պատմես իրեր՝ կարի շափազանց :
Ի զուր կ'ազգես ականջիս դաշնակաւոր քո ձայնիւ ,
Թէ ոչ յարմար են բառերդ , թէ գարնուածներ չեն ազնիւ :
Չառնում են յանձն՝ մի գրութիւն զարգարուն՝ բայց խմբան ,
Չեմ ընդունիր՝ ուսուցիկ մի գրչւածքի մեծ վրիպանք :
Ամենաբաջ հեղինակն՝ առանց լեզուի վերջապէս :
Ձոր ինչ և գրէ՝ յոսեգիր միշտ գրչակ զինք կոչեմ են :

• •

Որ ինչ հրաման թէ ստիպէ՝ (2) ջանա՛ գործել բնարանօր ,

(1) Barbin , նոյն ժամանակի անուանի գրափառաւ մը :
Ի. Թ.

(2) Սգուտերի՝ իւր շատ արագ գործելը ջատագովելու համար
չրամայուած է , կ'ըսէր , ինծի որ շուս լիցնեմ ,
Ի. Թ.

Մի՛ խաղակամ շուտութեամբ վաղվազելու ընկեր հոգ (1) :
 Այսպէս արագ գրողէն որ յանգ կազմէ սրբափար,
 Չեմ յուսար մեծ գատաստան և ոչ նաև մեծ հանճար :

Ես աւելի կը սիրեմ առուակ՝ կակուղ աւազով,
 Որ ծագկայից մարդերու վրայ թափառի մեզմ' ու զով,
 Քան հեղեղաւ յի զեղուն, որ ընթացքով մերկամին,
 Խճերով ծուր՝ թաւայի ցեխոտ տեղեր ճահիճին :
 Անապարէ՛ բայց հանգարտ (2), և մի՛ բնու վհատիբ,
 Քան անգամ տեղանից վրայ բու երկեթև նորէն գի՛ր :
 Ջայն ողորկէ անգագար, անցուր կրկին արգըկէ,
 Շատ քիչ անգամ աւելցուր, յանախագոյնը՝ ջնջէ :

Չէ մեծ զարմանք, գրուածքի մէջ, ուր վերջակէ առատ կան,
 Աստ անգ ցանուած գանուին իմաստներ վե՛հ, բարձրական :
 Խրոպատաշան տեղ զետեղել հարկ է քաջիկ՝ ամեն բան,
 Միջինն ու վերջ՝ պէտք են միշտ պատասխանել ըսկզբան :
 Մասունքն ամեն յարմարիլ պարտին՝ փափուկ արուեստին :
 Մասունքն ընկերէն՝ զանազան՝ կազմեն ամբողջ մ' առանձին :
 Խոսքի նիւթէն մի՛ երբէք խոտորելով հեռուներ,
 Քանի մի բառ շատ փայլուն մի՛ գու երբէք սրաներ :

Տաղից համար կը վախճան՝ հրապարակի գատու մէն,
 Անեամբ անձին եղիբ խիտ և շննագաս անաշառ :
 Տգիտութիւնն է պատրաստ, միշտ զարմանալ ինքն իրեն :
 Քեզի գտիբ շննագաս բարեկամաց մեծ կանառ :
 Քո գրըւածոց թող ըլլան գիտակակից մտերիմ,
 Անուներուդ ալ ամեն՝ հակառակող սիրերիմ :
 Հեղինակի սրգութիւնն անոց առջև մերկացիր :

(1) Մեր բանաստեղծն (Պուսլոյ) այս իւր առուած կանոնին միշտ հաւատարիմ թաց : Արբ իւր բարեկամներէն մին որ մը խնդրեց իրմէ որ շեմանաստեղծութեան արուեստն, շուտով ի հրապարակ հանէ, վրան զի, կ'ըսեր, ժողովուրդն անհամբերութեամբ կ'ուզանէ, պատասխան տուաւ : Le public ne s'informerá pas du temps que j'y aurai employé, (այսինքն՝ Ասոր վրայ որչափ ժամանակ անցնելուս՝ ժողովուրդը տեղեակ պիտի ըլլայ) :

(2) Hâtez-vous lentement, առակ . քիչ բարձիր, շուտ քաշ-ծիր :

Բայց որչեւ զբարեկամ շողորթեն գուն սորվէ :
Գովէ կարծես նա ըզբեզ, որ ծիծաղի, գրսովէ :
Արե՛ խորհուրդ աւելի՛ քան գովտասանք ձրիաձիր :

* * *

Քո իմաստուն բարեկամ, միշտ անաշտա, անողոք,
Սխառներուդ համար նա հանգիստ բընու քեզ չի տար,
Եւ ոչ ներուժ՝ այն տեղեաց, որոց եզար գու անհոգ :
Յոռի շարուած առղերուն կը ցուցընէ տեղ յարմար :
Մերժէ բառից ուսուցիկ սեխեւեխեմանքըն կարի :
Աստ իմաստին չի հաւնիր, և ի ստորև՝ խօսքերուն :
Գծուարիմաց կ'երևայ իրեն՝ շարուածք այս բառի :
Շատ երկգիծի է այս բառ, լուսաւորել պէտք ես գուն :
Այսպէս ահա մտերիմ քո բարեկամ բարբառի :

Թարգ. Հ. Գ. Մ.

ՊՈՒԱԼՈՅ

ՎԵՆՆԱՄ ՄԻՍԻՐԱՐ.
Միաբանութիւն

Արուես բանասեղծութեան
Երգ Ա.

Յ. ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ ՀՈԳԻՈՅ

Ըսէ՛ք ինձ, ինչո՞ւ ահաւոր ջերմեռանդութեամբ
կը համբուրեմք այն հողերը, ուր մեր հայրերը, մայրերը,
եղբայրները կ'սպասեն՝ թէև անկենդան թէև
ի հող դարձան :

Ինչո՞ւ, երբ մարմինը կը տկարանայ, երբ ալ չի
ճաշակեր, ալ չ'զրօսնուր, յայնժամ միտքն՝ իմացակա-
նութիւնը կամ հողին կ'ազնուանայ, կը բարձրանայ,
կը լայննայ, կ'ստուարանայ. կարծես թէ հասուն
ստուղ մը իր կեղևը սպառուելով գուրս ելնել կը նը-
կրրտի, հողապատեանը նեղ կը գտնայ, և անսահման
ոլորտ կը փնտռէ, զաշխարհ նեղ կը գտնէ. ևս բա-
զում սիրելեաց սնարից վրայէն լսած եմ զասոնք :

Ինչո՞ւ մարդ գոհ չէ իր վիճակէն, բաղձալի վի-
ճակն հասնելէն յետոյ ալ բաղձանքները կը բազմա-

պատկէ, և այսպէս յանհունս կը բաղձայ, կը խորհի, կ'ուզէ ունենալ քան մը զոր չկրնար ունենալ հոս, ի՞նչ է այս:

Արդեօք ոչնչութեան համար են այս անգուլանդադար ջանքերն գէպ ի կատարելութիւն, գէպ ի յառաջդիմութիւն, գէպ ի լաւագոյն կեանք. ի՞նչ... կարծէ՞քսան, երեսուն, քառասուն կամ հարիւր տարիներու համար այսչափ յոգնիլ: Եթէ ոչնչութեան համար է, ուրեմն թշուառ է մարդն՝ և թշուառագոյն, զի մարդուն ձեռքովը տնկուած ծառը, շինուած քարէ շէնքը քանի՞ պատիկ աւելի կ'ապրին քան նոյն խոկ զանոնք տնկող, յերիւրող, յօրինող իմացական էակը: Ուրեմն նիւթը կամ ծառը կամ քարը բարեբաստիկ է քան զտէր սոցին զմարդ...:

Ըսէ՛ք ինձ, ի զո՞ւր անապատները ծիծաղախիտ դաշտերու փոխարկելու կը քրտնին ազգք:

Թէ ի զո՞ւր աշխարհաշինութեան, գեղերու կանգման, քաղաքակիրթ լինելու, իմաստուն լինելու ջան ի գործ կը դնեն ազգք և ազինք:

Արդեօք ուրիշ աշխարհի համար պահուած չէ՞ մարդկային ազգին ամեն դարերու մէջ այս ընդհանուր բաղձանքը, որով կ'ուզէ լաւագոյն վիճակի տիրանալ:

Արդեօք ասո՞ր համար հիները գերեզմաններու մէջ մեռելներու քով վառուած կանթեղ մը կը դնէին:

Արդեօք և մե՞նք այս յուսոյն համար ճրագօք և լապտերօք և այլն կ'առաջնորդենք ի գերեզման, այս լոյսը փնտռելու համար՝ զոր չենք գտներ ի կենիս՝ և անդր քան զգերեզման կը փնտռենք:

ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍ. ՎՐԺԱՊԵՏԵԱՆ

(Նամակ առ Եղիա Տէմիրհիպաւեան)

3. ԱՆՄԵՂՈՒԹԻՒՆ , ԱԵՒԱՏՈՒԹԻՒՆ , ՀԱՄԵԱՏՈՒԹԻՒՆ

Ա.

Տեսե՞ր երբէք դու մանկիկ
Այտից խնձորքըն գողտրիկ
Որ յորրանի կայ ի քուն
Քաղցրիկ երգոցն ի հնչիւն .
Վարդից թերթեր են շրթունք
Որով ժըպտին զուարթունք . . .
Եւ մինչ անյադ՝ մօրն ի սէր
Քանայ խրփէ զիւր աչեր ,
 Զի՞նչ գեղանի
 Զի՞նչ սիրուն ,
Քան ի քուն Անմեղութիւն :

Բ.

Տեսե՞ր երբէք պատանեակ ,
Ժիր ծնողաց ժիր սրդեակ ,
Որ զարթնու այգուն այգուն
Տալ զանձըն յաշխատութիւն :
Ուրախ գէժք իւր , զուարթ աչկունք ,
Սիրելի են նմա ուսմունք .
Եւ մինչ ի գործ զողջոյն տիւ ,
Հօր խինդ է ն մօր պատիւ ,
 Զի՞նչ գեղանի
 Զի՞նչ սիրուն ,
Քան մանուկ յԱշխատութիւն :

Գ.

Տեսե՞ր դու կոյս ծընդատէր
Իւր անուշիկ մօր պատկեր ,
Սիրոյ ծնողացն ընդ փոխան

Տուեալ զանձրն ի խնամ տան .
Փոքունց՝ օրինակ բարի ,
Պատիւ հայրենի յարկի .
Եւ մինչ յուսումն մտաքն են կիրթ ,
Եւ Տեառն նուէր է իւր սիրտ ,
 Զի՞նչ գեղանի
 Զի՞նչ սիրուն ,
Քան կուսին Համեստութիւն :

Յ. ՈՍԿԱՆ

4. ՊԵՐՉ ՊԱՆԴԻՏԻՆ Ի ՏՈՒՆ ԻՆՐ

Ահա մայրս կուգայ , Սրտի թնդումէն կականա-
բարձ կուլայ . և թեւերը բացած կը թռի յիս հասնե-
լու , զիս գրկելու , կրծոց վրայ պրկելու և համբու-
րելու . . . , Երթամ ձեռքը պագնեմ , Ետեէն եկողներն
ալ եղբարքս են . և այն երամով թռվապոզ կանդ ու
գլուզները (մանրիկ մանկսիւմ) եղբարքս զաւակներն են :

Թո՛ղ , ներէ՛ ինձի վայրկեան մը ծնողական և ըն-
տանեկան երանութիւնս վայելեմ , բարեկամ : Ա՛հ ,
բաւակա՛ն շատ միջոց եղաւ . կարօտի և անձկութեան
կրակը սիրտս կը լափէ . . . մի քանի պուտ (կարիւլ)
արատունք ալ իմ աչերէս . . . թող կաթին . . . որ հո-
վանայ հոգիս . . . :

Թո՛ւչ , առ հասարակ պանդուխտները . . . : Թո՛ւչ
հեռացելոց և մնացելոց սրտի վիճակը , մորմոքումն
ու լացը :

Ես , թէպէտ ամենուրեք մարդասիրաբար ու պա-
տուասիրաբար հանգիստ գտած եմ , այլ սակայն շէի
կրնար մտնալ ոչ մեր փողոցի ծառն ու ճիւղ , ոչ
ջուրն ու հող , ոչ շողն (արեւուն քայ) ու հով , ոչ
ժուռն (չիասած միւրգ կամ ազոս) ու խաղող , ոչ

տանձն ու խնձոր, ոչ ծիրանն ու սալոր, ոչ աղբիւրն ու ջրհոր, ոչ դաշտն, ոչ սար և ոչ ձոր: Երբ ուտէի հաց ու կեր (կեռակուր), կը յիշէի մօրս եփածները. երբ ի պարտէզ և ի բուրաստան մը հրաւիրուէի, կը յափշտակուէի հոս: Չկրցի երբէք գոհ ընել զիս, և մոռնալ տալ սրտիս ու մտքիս այս հողաշէն անշուք խրճիթը, որ իմ հայրենական տունն է, յորում ես առաջին անգամ աչերս բացած և արև տեսած եմ: Չկրցի մոռնալ տալ այս շուքերը, որոց ներքև իմ օրօրոցս օրօրուեր և իմ ծնօղ մօրս սրտարուղիս ձայնով խաղեր և դարդարներ եմ լսեր. մոռնալ այս ճղերը, որոց վրայ ելլելով ձեռօքս միրգեր եմ քաղեր և կերեր. մոռնալ այս դալարաւէտ և ծաղկաբոլոր վայրը, ուր ծնողացս, եղբարցս, և հիւրերու ու ընկերաց հետ նստած հաց կերեր, ծաղիկ փնջեր, մանկական խաղեր և զուարճութիւններ անցուցած ենք:

Ո՛ր մանկական երանաւէտ օրեր և ժամեր. այսօր ձեզ կը հանդիպիմ վերստին, և շատ դիւրութեամբ մէկէն կը մոռնամ իմ տեսած սքանչելի շէնքեր, պալատներ, պարտէզներ, ջրեր, ճոխութիւնք և վայելչութիւնք պայծառ և մեծամեծ քաղաքաց, որք իրենց ամեն պերճութեամբ և շքեղութեամբ չկրցան մոռցնել տալ զձեզ ինձ. այլ յաւէտ առ ձեզ կը գըտնուիմ յափշտակեալ:

Եղան թերևս ծնողքէս աւելի խնամածուք ինձ, եղան եղբայրներէս ու մանկական ընկերներէս առաւել սիրողք և մտերիմք ինձ. այլ չեղաւ հնար որ մի և նոյն յարգանք ու համակրանք գրաւէին, ինչպէս այս պառաւ մայրս, այս հասարակ մարդ երևցա՞ր ընկերքս և եղբարքս:

Տ . Տ Ր Տ Ո Ի Ն Ջ Ք

(Մերձ ի մահ գրուած)

Է՛հ , մընաք բարով , Աստուած և արև՝
Որ կը պըլպըլաք իմ հոգւոյս վերև . . . :
Ասող մ'ալ ես կ'երթամ յաւելուլ երկնից ,
Ասողերն ինչ են որ՝ եթէ ոչ անբիծ
Եւ թշուառ հոգւոց անէծք ողբագին՝
Որք թըսին այրել ճակատն երկնքին .
Այլ այն Աստուծոյն՝ շանթերո՛ւ արմատ՝
Յաւելուն զէնքերն ու զարդերն հըրատ . . . :
Այլ , ո՛հ , ի՞նչ կ'ըսեմ . . . շանթահարէ զիս ,
Աստուած , խոկն հըսկայ փշրէ հիւլէիս՝
Որ ժպըրհի ձգակէ՛ սուգիլ խորն երկնի ,
Ելնել ասողերու սանդուխքն անալի . . . :
Ողջոյն քեզ , Աստուած դողդոջ էակին՝
Շողին՝ փըթիթին՝ ալւոյն ու վանկին ,
Դու որ ճակտիս վարդն և բոցն աչերուս
Խըլեցիր թրթռումս չրթանց թոխն հոգւոյս ,
Ամպ արւիր աչացս , հեւք արւիր սրտիս ,
Ըսիր մահուան դուռն ինձ պիտի ժպտիս ,
Անշուշտ ինձ կեանք մը կազմած ես ետքի ,
Կեանք մ'անհուն շողի՝ բոյրի՝ աղօթքի
Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ շունչ ,
Հոս մառախուղի մէջ համր անշըջունչ ,
Այժմէն թո՛ղ որ շանթ մ'ըլլամ դալկահար՝
Պըլլիմ անուանըդ մաընչեմ անդադար ,
Թող անէծք մ'ըլլամ քու կողըդ խըրիմ ,
Թող յորջորջեմ քեզ «Աստուած սխերիմ»
Ո՛հ կը դողդոջեմ , տփգոյն եմ տփգոյն ,
Փըրփըրի ներսըս դըժոխքի մ'հանդոյն . . . :

Հառաչ մ'եմ հեծող նոճերու մէջ սեւ ,
Թափեալու մօտ չոր աշնան մէկ տերեւ . . . ,
Ո՛հ , կայծ տըւէ՛ք ինձ , կայծ տըւէ՛ք , ապրի՛մ . . .
Ի՛նչ , երազէ՛ վերջ գրկել ջուրտ շիրի՛մ . . .
Այս ճակատագիրն ի՛նչ սեւ է , Աստուա՛ծ ,
Արդեօք դամբանի մրուրո՞վ է գծուած . . .
Ո՛հ , տըւէ՛ք հոգւոյս կրակի մի կաթիլ ,
Սիրել կ'ուզեմ դեռ լ'ապրիլ ու ապրիլ՝
Երկնքի աստղե՛ր , հոգւոյս մէջ ընկէ՛ք ,
Կայծ տըւէ՛ք՝ կեանք՝ ձեր սիրահարին հէք ,
Քարունն ո՛չ մէկ վարդ ճակտիս դալկահար՝
Ո՛չ երկնի շողերն ժըպիտ մ'ինձ չ'են տար ,
Գիշերն միշտ դագաղս , աստղերը ջահեր ,
Լուսինն յար կուլայ խուզարկէ վըհեր :
Կ'ըլլան մարդիկ որ լացող մը չ'ունին ,
Անոր համար Նա դըրաւ այդ լուսին ,
Եւ մահամերձն ալ կ'ուզէ երկու բան ,
Նախ կեանքը , վերջը՝ լացող մ'իր վըրան :

Պետրոս Գուրեան

Ե . Ա Ռ Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Մ Ս

Ողջո՛յն ձեզ , ո՛ անմահ և փառապսակ ոգիք , որ
կ'անուանիք Վիազա , Հոմեր , Եսայի , Վիրգիլ , Ան-
թար , Ֆիրուզի , Տանդ , Շէյքսպիր , Քամօէնս , Թաս-
սօ , Կէօթէ , Շիլլեր , Պայրըն , Միցքիէվիչ , Լամար-
թին , Պէշիկիթաշլեան , Ալիշան , Հիւկօ , ողջո՛յն ձեզ ,
բանաստեղծք ամէն աշխարհաց , և ամէն ժամանա-
կաց , ո՛ գեղեցիկն սիրահարք , ո՛ գաղափարականին
արուեստաւորք . ձեր քնարաց՝ սիրացմամբ ունկընդ-
րած է մարդկութիւն և պիտի ունկնդրէ յաւէտ ցոր-
չափ գեղեցիկն պաշտուի երկրի վերայ , ցորչափ մար-

դըն , արևածաղիկ բարոյական , դառնայ բնազդմամբ
առ արեգակն կատարելութեան , Երկինք իւր համայն
խորհուրդներով , բնութիւն իւր համայն սքանչելիք-
ներով և մարդկային սիրան իւր համայն ծուփերով
և իղձերով ձեր տաղից մէջ է : Մանուկն ձեր տա-
ղերով կ'օրօրի , ձեր տաղերով կ'ուսնի աղօթել , հայ-
րըն ձեր քերթուածներով իւր բնտանեկան խորանին
սրբութիւնն ու հրապոյրն կը յաւելու և կը մեկնէ ,
ձերն ձեր գեղօններուն մէջ կը գտնէ իւր յիշատակ-
ներն , իւր սիրտանքն և , դերեզմանին անդունդին
վրայ ծռած , յախտենական աշխարհին յոյսն ու ըզ-
մայլմունքն : Ձեր մէն մի ծայրան , հառաչն , արտօս-
րըն մի երգ է որ կը փթթի ծաղկատախ , կամ կը
բուրէ խնկահատ և կամ կը բխրեղանայ մարգարտա-
փայլ : Ի՛նչ ոգիներ էք դուք որ մեկն վեր կ'ապրիք ,
և երբ ձեր նայուածքն յերկիր խոնարհեցնէք՝ ճա-
ռագայթներ կը թօթափին անտի , կ'անցնիք , և ձեր
քայլեր լուսատիպ կը դրոշմին միջոցին մէջ . կ'անց-
նիք լոյս սիրելով ուր մութ կայր , կայծ վառելով
ուր սառ կայր , երգ նետելով ուր լուսթիւն կայր :
Միշտ նոր են էջերն զոր մի աստուածային գրչով
գրեցիք . ամեն սերունդ կուգայ իւր ճակատն կքել
մտախոհ նոցա վրայ , կամ գիշերուան լուսնոյն հետ
հսկելով կամ ընկողմանած մի ականակիտ ազրեր եզրն ,
և այդ էջերուն մէջ , խորին իրր գրնութիւն , միշտ
նորանոր իմաստներ կը գտնէ , մանաւանդ թէ ձեզմով
լաւագոյն կը հասկնայ գրնութիւն , երբ ձեր մատեան
ի ձեռին կամ ի մտի — զի ամէն սերունդ ի բերան
կ'ուսանի զձեզ — ման կուգայ լերանց , ծովուն կամ
գաշտաց վերայ , Երկնային բնազդմամբ մի ոգեւորեալ
մեղուներ , կը քաղէք հիւթն ամէն գեղեցիկ իրաց ,
և երբ այն կը կերպարանափոխի կը կազմի ձեր հոգ-

ւոյն կրակով ու բոյրով՝ ի՛նչ մեզը է հեշտահամ և անապառ, որով ամէն դար կուգայ սնանիլ, հեշտանա՛լ: Նիւթոյն գձձութեանց, վշտաց մրրիկներուն, անիրաւութեան յաղթանակներուն, խմաստասիրութեան մոլորումներուն մէջ հոգին կը սիրէ ազատանիլ այն աշխարհն, յորում կը բնակիք, և յորում ամէն ինչ մեծ է, լայնատարր և լուսաւոր, և սիրտն ազատ շունչ կ'առնու, և օդն՝ զոր կը ծծէ՝ բուրումներ ունի որք այս աշխարհէն շքան: Թէ երբ Լամարթին կոչուիք և ֆնարեղէի բնութիւնն ու Աստուած, սէր և անմահութիւն, թէ երբ Միլտոն լինիք և վիպասանէի երանութեան գրախօսի մի գրգանքն, առաջին ամուլից տարփանքն և երկնից փառքերն, թէ երբ Շէյքսպիր լինիք և մի դիւթական ճեսարանի վրայ պատկերէք բարւոյն ու շարին, նիւթոյն ու ուլւոյն կախն որ կեանք կ'անուանի, թէ երբ Յորնազ լինիք և մի երգիծարան հրաշէկ գրչով դատապարտութեան խարանն դրոշմէք թագապսակ մոլութեանց ճակատին վրայ, թէ երբ Մարտիազէս լինիք, և մի քանի փախստայ տողերու մէջ մի կայծ ծրարէք, և թէ երբ Հիւկօ լինիք, հանճա՛ր բազմաձև, և մի սրտի մէջ զգայք ամենայնի սիրտն և մի մտքի մէջ խորհիք ամենայնի խորհուրդն և մի անծայրածիր երեւակայութեան մէջ ցոլացնէք տեսանելի և անտես աշխարհաց պատկերն, և մերթ քնարերգուին քնարն, մերթ վիպասանին բամբիւն, մերթ Սոփոկղեայ սուլերքն և մերթ երգիծարանին խորազանն առնուք ի կիր և լինիք միշտ մեծ, միշտ վսեմ, դուք, ո՛վ երկնազգեցիկ ողիներ, դուք միշտ ճշմարտութեան և արդարութեան քահանայներն էք, գեղեցիկն կրօնն ունիք, մարդկութեան մարգարէներն էք:

Ռ. Յ. Պարպէրեան (Գեղեցիկն և գեղարուեստ)

Օրորանիս մօտ նստած՝
Մայրըս անոյշ երգելով
Ինձ շատ անգամ քուն էր արած՝
Պաշանըշան կընքելով,
Աջն ու Պաշը քեզ սփռապան՝
Անթիւ անգամ կրկնեւ էր,
Պաշն իւր սիրոյն միշտ ապաստան՝
Ամեն ժամուս կանչեւ էր,
Երբոր թոթով լեզուս բացաւ,
Պաշի դասըն աւանդեց -
Խաչ օգնեա՛ ինձ, կըրկնի՛ր, ասաց
Գըթոտ սիրով սատուիրեց,
Քանի՛ տարի էս սիրուն դասն
Ես շարունակ կըրկնեցի -
Մօրս հետը ժամ գընացի՝
Պաշեւութիւն սիրեցի,
Ուխտատեղի թէ մատուռներ
Ուր որ ես ուխտ գնացի,
Համբուրեցի ես խաչքարեր,
Խաչ օգնեա՛ ինձ, կրկնեցի,
Երբոր փոքր ինչ ես մեծացայ
Մայրըս տուաւ քերական,
Խաչ օգնեա՛ ինձ, կըրկնի՛ր, ասաց -
Պաշն է ուսման օգնական,
Պաշն օգնական ինձ կանչելով՝
Այր ու բէնէն ըսկըսայ -
Ամեն դասուս միշտ կրկնելով՝
Շուտով կարգաւ սովրեցայ,
Քերականն աւարտեցի
Յետոյ մըտայ վարժարան,

Եօթը տարի ես կարդացի .
Ուսմունք առի զանազան ,
Քանի՛ քանի՛ շարադրածներ
Որ ես ինձէն գրեցի ,
Դեռ չ'սկսած՝ ճակատներըն
Խաչ օգնեա՛ ինձ գրոջմեցի :
Աստուածաշունչ՝ Աւետարան
Որչափ սիրով կարդացի ,
Այնքան խաչին սիրոյ նըշան՝
Սըրտիս մէջը ըզգացի :
Զգացի որ խաչի ճառըն
Մեծ ուսմունք է մարդկութեան ,
Մեր փրկութեան դըրօշն է նա ,
Ճըշմարտութեան սուրբ նըշան :
Զգացի որ նախատանքով
Գողգոթայում արնկուեցաւ ,
Բայց և յետոյ անհուն փառքով՝
Գըմբէթներում փայլեցաւ :
Զգացի որ խաչեալն Աստուած
Սիրոյ համար խաչ շաղկեց ,
Մարդկանց սիրով խաչը գըրկած՝
Խաչ վեր առնուլ քարոզեց :
Զգացի որ խաչ կայ պատրաստ
Ամեն մարդու առաջին ,
Ով կը ցանկայ լինիլ ըզգաստ ,
Գընալ ըզհետ մեր Փըրկչին :
Զգացի որ ես էլ ունիմ
Իմ յատուկ խաչն աշխարհքում ,
Որ անարբատունջ պիտի տանեմ
Սիրով ամեն դիպուածքում . . .
Քանի՛ քանի՛ նեղութիւններ
Որ իմ հանդէպ դուրս եկան ,

Միտքըս բերի մօրըս սրտուէր
Կոչեցի խաչըն օգնական :
Քանի՛ քանի՛ հեշտութիւններ
Որ ես ինձէն գրրկեցի ,
Թափեցի յօրդ արտասուքներ
Խաչ օգնեա ինձ , գոչեցի :
Վիշտ ու վրտանդ փարատեցան ,
Զգացի մեծ ըսփոփանք -
Բուք փոթորիկ կուտակեցան ,
Անցի մէջէն անվրտանդ :
Օրհնուի՛ քո գերեզմանը ,
Որդեխնամ մա՛յր գըթոտ ,
Որ դու խաչի փրրկարար դասն
Ուսուցիր ինձ համառօտ :
Թէ որ մանուկ թարմ հասակէս
Զազդէիր ինձ խաչին սէր ,
Ի՞նչպէս պիտի լինէի ես
Մըրրկաց մէջ անվեհեր :
Թէ որ խաչի անյաղթ ոյժը
Ինձ յարածամ շըսփոփէր ,
Ի՞նչպէս պիտի տանէի ես՝
Սուտ , անիրաւ գրրկանքներ ,
Մա՛յր իմ , դասըդ չեմ մոռանալ
Քանի որ ես կենդան եմ ,
Նեղութեանց մէջ չեմ թուլանալ
Խաչն ինձ պարծանք կ'անուանեմ :
Ուրախութեամբ ես կը տանեմ
Ամեն գրկանք , ամեն խաչ
Քանի՛ սիրով ես կը տեսնեմ
Փրկիչն ի խաչ բարձրացած :
Մելիսեղեկ Եպիս. Մարտեանց (Գ. Մ.)

8. ՆԻՒԹ ԵՒ ՅԱՌԱՋՊԻՄՈՒԹԻՒՆ ՄԱՊԻՈՅ

Մարդս, երբ հին նախապաշարունակներով լցուած է, երբ չը գիտէ թէ ինչ անձուկ կապերով իւր շուրջ գանուած նիւթական առարկայից հետ կապուած է իր կեանքն, երբ ինքզինք բնութենէ դուրս և բնութեան բիւր ազդեցութիւններէն անկախ գեր ի վեր էակ մը կը նկատէ, որքա՛ն ակար է, որքա՛ն խղճալի: Մարդս կը զօրանայ, կը վսեմանայ ա՛յն վայրկենէն, ուր կը խելամոխի թէ ինք ոչինչ է առանց բնութեան, թէ ինք չը կրնար ապրիլ և չը կրնար խորհիլ առանց օդին՝ որ նիւթ է, առանց ճառագայթին՝ որ նիւթ է, առանց ջրոյն՝ որ նիւթ է:

Գարո՛ւն է. կը վերկենցազի բնութիւնն, և մարդոյն համար ալ նոր կենցաղ, նոր գործունէութիւն կ'սկսի, մանաւանդ դաշտաց մարդուն, մանաւանդ գաւառացի մարդուն համար, որ կը գործէ բնութեան ծոցն: Ու հոն սկիզբ կ'առնու քաղաքակրթութիւնն ալ. հոն, արտին մէջ, ոյր վրայ կը հակի մարդս իր հացն հանելու համար: Ի՛նչ որ իմացական, ի՛նչ որ բարոյական, ի՛նչ որ ճաշակագիտական կարգին կը պատկանի, այո՛, հոն ծագում կ'առնու, հոնկէ ծագում կ'առնու. — նիւթէն: Մարդոյս կարողութիւնք կը յայտնուի ին ու կը զարգանան նիւթին հետ շփմամբ. սոյն շփումն որքա՛ն յաճախի և որքան բնդարձակի, մարդկային մարմնոյն կորովն ալ ա՛յնքան կ'աճի և մտաց հորիզոնն ալ ա՛յնքան կ'ընդլայնի. մարդու բարոյական կոչուած սէտքերն յա՛յնժամ յառաջ կուգան, երբ մարդս շփուած է բաւական նիւթին հետ, երբ նիւթն ի գործիս, յանօթս և ի բնակարանս է փոխարկուած: Վայրենին չունի բարոյական: Նահապետական կենաց մէջ, ուր մարդս արդէն հաստատուն

ընակութիւն ունի, մարդս ամուսին ու զուակներ
 ունի, որք նոյն յարկին ներքե նոյն զգացումներն ու
 նոյն շահերն ունին: Սոյն վիճակին մէջ սակայն ըն-
 տանեաց հօր իշխանութիւնն անսահման է, քանզի
 սահմանափակ է ընտանեաց զուակաց մտաւոր կա-
 րողութիւնն: Երբ կարող կ'ըլլայ զուակն իւր հօրմէն
 աւելի ճարտարութեամբ ձեւակերպել նիւթն, երբ
 կարող կ'ըլլայ նիւթին լուազոյն ձեւակերպման հա-
 մար խորհուրդ տալ իւր հօր, երբ՝ ի մի բան՝ նիւ-
 թին հետ շփումն նորանոր բազմապատիկ ձեւեր ըս-
 տանայ և մարդս տակաւ հասու ըլլայ զնիւթ կառա-
 վարող օրինաց, ի յայտ կուգայ հաւասարութեան
 զգացումն: Բարոյականն այսպէս խնայականին հետ
 կը զարգանայ, կը բարեշրջի, նիւթին հետ մարդոյս
 ունեցած շփման համեմատութեամբ: Որքան աւելի
 շփուինք նիւթին հետ, որքան աւելի ներքին ծանօ-
 թութիւն ունենանք նիւթին, որքան աւելի մեր
 պիտոյից յօգուտ ի կիր արկանենք նիւթն, որքան
 աւելի նոյնանանք նիւթին հետ, այնքան աւելի կը
 զօրանանք նիւթապէս, մտաւորապէս ու բարոյապէս:

Գարունն այսպիսի մտածումներ կը ներշնչէ մար-
 դուս, այսպիսի նիւթակա՞ն մտածումներ: Անշուշտ:
 Գարնան մէջ աննիւթական ոչինչ կայ. երկնից ցօղն,
 արփուոյն շողն, աստեղաց որք կը նուազին աւօտաս-
 քանչ նշոյլն, և ծագկանց որք կը վիթթին աստեղա-
 հոս բուրումն, և վտակն որ կը դգդէ, և հաւն որ թե-
 լին ի հիւս կը յուզէ վճիտ ալեակն և կը քերթէ՝ ներ-
 դաշնակութեամբ լցունելով մեր հոգեակն, և կոյսն
 որ կը ժպտի, և գառնուկն որ կուսին առջև կը խայ-
 տայ, և շուենն անուշակ որ կը գգուէ կուսին ճակա-
 տըն ու գառին աղուարուրդն, ի՞նչ ունին ասոնք որ

նիւթական շրջայ: Բնագիտութենէն ու բնալուծութենէն գիտենք թէ շող ու նուագ, շունչ ու կոյս հրեշտակ՝ նիւթ են կամ նիւթական պայմանօք կ'արտադրին:

Եղիա Տեմիրճիպաշեան

Պ. ԱՄԻ ԶԵՓԻԻՒՌՆ ԱԼԷՄՏԱՂԻԻ

Դու փափկաթեւ մանկիկ զեփիւն,
Աղբերց վրայէն լուսակարկաջ.
Անուշ հօտով ծաղկանց բափիւն,
Ի՞նչպէս թռչիս ինձ բնդ առաջ.
Ու խունկ և զով բնծայելով,
Զիս ողջունել հեզիկ շնչով:
Ո՛հ կը սիրեմ բզբեզ հողմիկ,
Երբ դու փութաս ինձի գալու.
Ի պար ի թռիչ ի սոյլ մեզմիկ,
Այրած հակախ իմ այցելու.
Ծաղիկ հոգւոյս քեւ զովացած,
Բացուի ի լոյս ախորժ կենաց:
Սլացի՛ր փափկիկ դու սուրհանդակ,
Լուր տար հովաին ու ծործորին.
Ու անտառոց բարձրագիտակ,
Ուր երամով սոխակք թառին.
Թէ մտերինն իւրեանց եկաւ,
Բիւր բզմայլմանց յիշատակաւ:
Ո՛հ կորսըւած իմ հասնոյքներ,
Հոս վերստին գըտնեմ բզձեզ.
Ծառոց շրքով էք ծածկըեր,
Ու փրփրբրով առուակին հեզ.
Ահա կայտուէք ի յայս ծրմակ,
Ի յայս թըփուտ հովանոցակ:

Հոս դառն հոգեր մէկիկ մէկիկ ,
Ճակատէս ի բաց հեռանային .
Ու փունջք ժամուց դեղատարիկ ,
Սիրաբքս թեթեօ օրօրէին .
Եւ բընութիւն , մայր սրգեսէր ,
Քնքուչ գրկաց մէջ զիս գըգուէր .
Հոս ճեմէին երեկոյեան ,
Ի զով բոտուեր սար մի կուսից .
Մազերն հովուն բազմաբուրեան ,
Սիրաք բնծայուած հեշտ վայելից .
Շող լուսնակին , կոյսն ու ծաղիկ ,
Զիրար շոյեն սիրատարիկի .
Մտերմութիւն , Սէր կրակուրոց ,
Ի՞նչ անուշ էք յայտեսարան ,
Ուր բիւր դալարք ձեզ հանգըստոց ,
Ու անհուն դաշտեր ըզրօսարան .
Մտերմութիւն , ինձ երանի ,
Թէ հոս ծոցէդ հոգիս թռանի .
Դու փափկաթե մանկիկ զեփիւռ ,
Աղբերց վրայէն քաղցրակարկաջ .
Անուշ հոտով ծաղկանց ըսփիւռ ,
Թռի՛ր , թռի՛ր ինձ ընդ առաջ .
Ու խունկ և զով բնծայելով ,
Պարէ՛ շորսդիս հեզիկ շնչով .

Մ. Պէշիբրաշեան

10. ՆԱՄԱԿ ԱՌ ՄԱՆԿԻՐՆ ԼԵՒՈՆ ՕՏԵԱՆ

Պղտիկ Լեւոնիկ

Ո՞վ ես դուն նայի՞մ որ քեզի նամակ գրեմ , ո՞րչափ
ատեն եղաւ որ կաթ չես ուտեր կոր : Դու հօրդ մօ-

ըրդ գիրկէն վար իջած չունիս . հօրդ գիրկը քու ա-
թող է : Երբ կը քայլես աներեւոյթ ողինքը կը թե-
ւապարեն ու կը պահեն քեզ որ վար շիյնաս : Դուն
չես խօսիր այլ կը ճլուրտաս , դուն չես մտածեր
այլ կ'երազես . դուն երբ բաներ կ'ըսես՝ երկինքի հը-
րեշտակները կը հասկընան զանոնք , թոչո՞ւն ես թէ
հրեշտակ : Կուլա՞ս թէ կը խնդա՞ս , այն ալ յայտնի
չէ , լալով կ'սկսիս երգելով կը վերջացնես : Երբ աչ-
քերդ մեծ մեծ կը բանաս՝ երկինքի՞ն կը նայիս թէ
մարդո՞ց , ո՞վ կրնայ ըսել : Երբ թաթիկներդ կ'եր-
կընցնես՝ հայրիկդ կը կարծէ որ իրեն համար է , այլ
ես գիտեմ որ գլխուդ վերեւ կապոյտ կը տեսնես ,
անո՛ր կ'երկննաս : Երբ պարտէզ իջնաս՝ ոչ փշոտ վարդ
կ'ուզես որ քաղես , ոչ թեթե թիթեռնիկ կ'ուզես
որ բռնես , լուսի՛նը կ'ուզես որ ասն քեզի ու չես
մտածեր թէ՛ ո՛րչափ բարձր է անի : Քեզի համար ա-
մեն բան կարելի է ու կը զարմանաս իրաւամբ թէ
ի՛նչ ուրիշ լուազոյն բան կրնան ընել մարդիկ քան
թէ՛ միայն քեզ սիրել ու քու ամեն կամքդ կատա-
րել :

Իրա՞ն է արդեօք : Իմ ճանչցած Լեւոնս այսպէս
էր : Բայց անկէ ի վեր երկու տարիներ ու չորս ալ ա-
միսներ անցան : Կարծեմ հիմա այն տարիքն էս , կամ
ոչ շատ հեռի , ուր Երուանդ իմ տունս եկաւ : Մեծ-
ցար ուրեմն : Բայց դուն ո՞ւր ես , ես ո՞ւր : Դուն
տակաւին մարդուն ու հրեշտակին մէջ անորոշ բան
մըն ես : Դու վարդէ շրթունքներ ունիս վրայէն հը-
պելու համար կենաց բաժակին որ վրա՛ն միայն անոյշ
է : Դու զմայլմանց մէջ կ'ապրիս , քու երկինքիդ վը-
րայ աստղունք կը փայլին անհամար , դու խնձիղն
ես ու կայտիս , քու՝

Ի ճակատդ աղնիւ
Եւ ոչ մի կնճիտ
Եղընդամբ ժըպիրհ
Ոչ գըրեց վաղիւ :

Հապա՛ Երուս^ենդը , պիտի ըսես հիմա ,
Ա՛հ , Երուանդիս խօսքը մի՛ ընեք... անի վէրքե՛ր ունի...
Աստուած ձեզ պահէ՛ , պզտիկ Օտեանե՛ր :

Բարիկի Զօրարդ
Գ. Ս. ՕՏԵՆՆ

11 ԼՈՒՍԻՆ

Բըլուրք փթըթեալք , ամպածըրար գազաթունք ,
Սիւնք դալարիք , և անմահին և գեղջ տունք ,
Դաշտ և հովիտ և ստուերամած կայարան
Սոխոջ առուաց , սոխակն յոստոց բազմարան ,
Խընդրեն ըզլուսին
Լապտեր գիշերին :

Ժայռք անդեղեայք , ծործորք , նոճիք երկնածեմք
Լիճք անկենդանք , շարք պուրակաց դէմընդդէմք ,
Ընդ գընայուն անապատին անեղեր
Եւ ընդ կապոյտ գընդիցն հրոսակ մըշտերեր՝
Օրհնեն ըզլուսին
Գոհար գիշերին :

Ընդ ձիւնալեառն անցորդին հեաք թաքթաքուր ,
Մովահայեաց հիւղ , ձըկնորսին սահուն կուր
Աչք արքնասէր որդեկորոյս ծընողաց ,
Միաք իմաստնոց՝ խուզակք բնութեան ու եթերաց՝
Գովեն ըզլուսին
Ըզրիբ գիշերին :

Պըսակ մըթոյն ըզքեզ արփի՛ ուղիածեմ
Ըզքեզ սիրեմ և ես դըշխոյ եռադէմ :

Որ յաստեղց բոյս ըստոյազունդ զօրասպետ
Եւ յօրիորդս ես թագունի լուսազգեստ ,
Չբքնաղբդ լուսին
Պարծանք գիշերին :

Մերթ և մեկնակ ընդ ովկիանն օդաւոր
Յանչարժ կոհակս ի տիպ նաւու գողաւոր՝
Աս նաւակայս՝ ուր ի մեր գունտ չիք նըշմար՝
Յուզգեակ թաքուն ծովաչրուս անվրթար
Պայծառըդ լուսին
Ուզգեակ գիշերին :

Ո՛հ , թէ ելցես դու ի ծովէ յերեկոյն ,
Լեռնակուտակ թէ յանտառաց արջնագոյն ,
Ի ծաւալել հանուրց բզգէս ոսկեհեր
Մի՛ գիտ լուսանցս ի ճաճանչից քոց գրկեր ,
Աննրման լուսին
Հողի՛ գիշերին :

Այլ մի՛ և զվայրն ինձ անմոռաց մոռանաս .
Որոյ բնակչաց չհարու արեւն այլ ըսպաս . . .
Ե՛րթ ի տապանս՝ ուր սիրաւար բերի սիրտ
Դողալ բախիլ վերայ սրտից անխըլիրտ .
Եւ անդր ե՛րթ լուսին
Փարո՛ս դամբանին :

Հ . Ղևունդ Ալիշան

12. ՄԱՅՐԵՆԻ ՍԻՐՈՅՆ ԱՌԱՅԵԼՈՒԹՅԱՆԸ

Երբ որդին մեռնի՝ հայրը կուլայ ծանրաթախիժ ,
այլ ժամանակը անոր այս ցաւը միւս ցաւերէն աւելի
չյարգեր . — բայց տարիներով ետքը նայէ մօր սիրտը՝
դեռ նոյն վերքն արիւնահոս է : Արարչագործութեան
մէջ այն սիրոյն նմանող բան մը չկայ . մէկ վայրկեանի
մէջ կը ծնի սուրբ՝ անհուն՝ աննուաճ . այնչափ բուռն

որ զայն զգացողը կը տանի անդր քան զնութական բնութիւն , որ ցաւն իրեն նշտութիւն կ'երևցնէ , գրկումը՝ վայելք , և այս ոչ թէ գիպուածով անցողական իմն՝ այլ անդուլ՝ անյեղի : Անոր համար ոչ զարգանալ ոչ նուազիլ կայ՝ վասն զի այսպիսի փոփոխութիւնք անկատարութեան նշաններ են : Եւս զայն զգաց իւր Արեւայ անշունչ մարմնոյն փարեւով՝ ինչ որ Հեկարէ տեսնելով իւր Հեկտորին գետնաքարչ գիտիը , և ինչ որ ի կատարած անդր աշխարհի պիտի զգայ վերջին մայրը : Արրահամու հաւատարմութիւնը պանծացնելու համար՝ երէց մը կը պատմէր թէ երբ Աստուած իրմէ մինչև իսկ իւր միամօր որդին խնդրեց՝ սուրբ նահապետը զայն չզլացաւ . «Ահ աղաղակեց ունկնդրաց մէջէն մայր մը , Աստուած այսպիսի զոհ մը չէր կրնար մօրմէ մը խնդրել . . . » Այդ սիրոյն մէկ հրաշքն է ամբողջովին կերպարանափոխ ընել զկին . այնու թեթեւ ազջիկը՝ լուրջ կ'ըլլայ . անկանխատեսք զգոյշ և խնամոտ . կարծես մանկիկը յերկնից իջնելով՝ երկիւղեղկեալ թողուց անոր մէկ դուռն և երկնաւոր լուսոյ հասանք մը կ'ողողէ մայրենի ճակատը :

Թ . Թէրգեան

13. Ա Պ Ա Գ Ա Յ Ն

«Ո՞չ դուք ասէ՛ք թէ այլ եւս չորք ամիս էն՝ եւ հունձ՛ գան . անաւասիկ ես ասեմ ձեզ . ամբարձէ՛ք զայս ձե՛ր եւ տեղէ՛ք զարտալս , զի սպիտակացեալ էն եւ ի հունձս հասեալ » : (Յովն . Գ . 35)

Ի՛նչ փոյթ թէ՛՝ ձըմբան ցուրտ սառամանիք կը ծածկեն դաշտերն ու հիւղին տանիք .

Բացէ՛ք աշերնիդ , տեսնել ծիծաղկոտ
Ամառուան հունձքերն՝ լերանց ի ստորոտ՝
Որ կ'աճին ձեր մօտ :

Ի՛նչ փոյթ գիշերուան թէ մրթին թևեր
Կը պատեն զերկիր՝ ըզծով և զեթեր .

Բացէ՛ք աշերնիդ , տեսնել քաղցրահատ
Սիւգերով խընկեալ ջինջն այն առաւօտ՝
Որ փայլի ձեր մօտ :

Ի՛նչ փոյթ թէ աղբերք ցամքած են համակ ,
Եւ շը տան շրթանց ցօղոյ մի կայլակ ,

Բացէ՛ք աշերնիդ , տեսնել բնդ արօտ
Վըճիտ վըտակներ՝ ոյց ջուրց էք կարօտ՝
Որ սահին ձեր մօտ :

Ի՛նչ փոյթ թէ խոնաւ խորշ մի անձկագոյն
Կըսպառէ ոգիքն առողջ ձեր մարմնոյն .

Բացէ՛ք աշերնիդ , տեսնել մրթնոլորտ
Զովացիկ ու անամպ , և ծըծել զայն օդ՝
Որ շընչէ ձեր մօտ :

Ի՛նչ փոյթ թէ ամէն կորուսած բարիք՝
Աղքատ ու անտէր տըրտում թափառիք .

Բացէ՛ք աշերնիդ , տեսնել հոս ու հող
Աղամանդն անգին , ոսկին նախանձոտ
Որ շողան ձեր մօտ :

Ի՛նչ փոյթ թէ բախտին նայուածքն անողոք ,
Լըռեցուց ձեր ձայն՝ նրւագն ու բողոք .

Բացէ՛ք աշերնիդ , տեսնել անաղօտ՝
Թըռչնոց խուռն երամ ծաղկանց ի ծրղօտ
Որ կ'երգեն ձեր մօտ :

Ի՛նչ փոյթ թէ աշխարհ ձեր անմեղութեան
Կը լարէ թակարդ զերդ կըռփող սատան .

Բացէ՛ք աշերնիդ , տեսնել խաշանց հօտ՝

Որ գայլէն անվախ ճարակին ըղձոտ ,

Ու խայտան ձեր մօտ :

Ի՛նչ փոյթ թէ հացի քաղցըն դըժընդակ

Կը կըրծէ ձեր սիրտ , կըքէ ձեր քամակ .

Բացէ՛ք աչերնիդ , տեսնել ճոխ ու յորդ

Սեղան մի պատրաստ յոսկեղէն անօթ

Որ կանգնի ձեր մօտ :

Ի՛նչ փոյթ թէ ծովուն ալիք մեծասաստ

Ջարդեցին նաւուն կողն ու առաքաստ ,

Բացէ՛ք աչերնիդ , տեսնել դեղեկատ

Լաստ մի փըրկաւէտ՝ ծովուն իյուլորտ

Որ ծըփայ ձեր մօտ :

Ի՛նչ փոյթ թէ կենաց ի ճապարհին

Կ'արիւնեն զձեր ոտք ժանտ փուշեր շարին .

Բացէ՛ք աչերնիդ , տեսնել քրանատօթ

Ձեր ճակտին համար պըսակ և նարօտ

Որ ցոլան ձեր մօտ :

Ի՛նչ փոյթ թէ բուր ձեր ճըզանց փոխան

Խոնջ ընկնիք յերկիր՝ բիրտ ստից կոխան .

Բացէ՛ք աչերնիդ , արտօսր ի ծընօտ

Տեսնել զԱպագայն՝ Յուսոյն ժառանգորդ՝

Որ ժըպտի ձեր մօտ :

Եւ ի՛նչ փոյթ դարձեալ թէ բընաւք տան խոյս

Ու շիրմին բացուի խորն անդընդասոյդ ,

Յերկինս դարձուցէք աչեր նըւաղկոտ ,

Եւ տեսէք զԱստուած բարւոյն առաջնորդ՝

Որ հըսկէ ձեր մօտ :

ԵՂԻՇԷ Կ. Վ. ԳՈՒՐՅԱՆ

14. ՅՈՒՈՒՍ Ի ԳԵՔՍԵՄԱՆԻ ՁՈՐ

Մո՛ւնր դիր , ո՛վ Տէր , ծո՛ւնր դիր , երեսդ ի
հող մած . թող աչքէդ կայլակող կենդանատու կա-

Թիւները հօտին ու թափին այս մեռեալ և անիծեալ երկրին վրայ, Հին մարդն ի հողէն էր՝ իբրև անօթ փշրեցաւ. դու զայն վերաստեղծէ՛ Տէր, Քո Հայր դրախտի գետէն և ջրէն կաւ շինեց ու ստեղծեց մեր նախահայր, իսկ դու աշքիդ ցօղով գետին կը թրջես և նոր կաւ կազմելով անդրէն նորահայր կը շինես հին բեկեալ ու մանրեալ անօթն:

Շինէ՛, ս'վ նորոգիչ ձեռք, շինէ՛ և խնամով նոր ճարտարապետութեամբ շինէ, այնպէս որ կրկին չը փշրէ և չաղարտէ զայն սեւ օձին սատրանք: Վլուխ խոնարհ շինէ, որ այլ ևս չամբարտաւանի՝ Աստուած լինել: Պարանոցը կոր շինէ, որ Աւետարանիդ նոր պատուիրանին քաղցր լուծը սիրով տանի: Աշքերը երկիւղածութեանդ վարագուրով պատէ և փակէ մարդուն ցանկութեան դուռը: Ամիտփէ ժպիւրհ մարդոյն լայն ու բաց բերանը, որ այլ ևս չհամարձակի երկնից դէմ բան խօսել: Սիրտն և հոգին թիւրեալ է, ուղղէ դէպ առ քեզ, որպէս զի ճանչնայ, հաւատայ, և սիրէ բարերար Փրկիչդ: Իսկ ձեռքերը որչափ հընար է կարճ շինէ, Տէր իմ, որ չհասնի արգելեալ ծառին ճիւղը և չքաղէ մահացու պտուղը: Ոտքերը զօրաւոր սողպատէն շինէ, որ ջախջախէ իւր թշնամուոյն գլուխ և կոխէ անցնի երկրիս տատասկ փուշերուն վրայ:

Ո՛վ դու մարդոյն հնացեալ բնութեան կենարար և կարկատիչ ձեռք. քո արտասուք և ճակատէդ հոսեալ քրտունք բաւական չեն մեռեալ մարդոյն նոր կեանք տալ. այլ պէտք է անսարս զոհի մի արիւն. Քո Հօր անդարձ վճիռն է, այդ զոհին արիւնալի գառնագոյն բաժակ ըմպել: զոր ահա խաչիդ գուժարեք հրեշտակը քեզ կը մատուցանէ: Առ որ հոգիդ

յօժար է՝ միայն մարմինդ զգածեալ խոյս կուտայ
մահէն՝ բայց ի՞նչ է մարմին, որ կարենայ անհուն
սէրդ և հոգիդ նուաճել:

...

15. ՅԻՇԱՆՅԱԿ ՄԻ

Մանուկ էի աստ տարեկան, արդ յիշեմ,
երբ երեկոյն, ճրագին առաջ լուսաճեմ
նստած, գըլուխս դրքին վերայ խոնարհած,
կարդայի ես, և երբ միտք իմ վայրայած
Ա՛լ հոգնելով, վեր առնուի իմ աչեր,
եւ ժպտէի նոցա սրոց դութ և սէր
երանուէա մի դրախտ իմ շուրջ գործէին,
եւ զորս յինէն համարէի անմեկին,
երբ ժպտելէ յետոյ, աչերս անքրթիթ
Սեւեռէի անձանօթին, նորափթիթ
ես մի մանուկ, և ընդ երկար դիտէի
Այսպէս անհուն զարմացման մէջ անյեղլի՝
երբ թերեւ չա հոգւոյս առաջ խուռներամ
Անցնէին ուխք կենաց ծովուն դառնահամ,
եւ անօրփչ ցոլացմամբ մի ընդ ազօտ
Միրաներփնէր ինձ ապառնոյս առաւօտ,
եւ նայուածքէս հատանէին ճաճանչներ
Որք, անտես ինձ, ցոլանային լուսահեր:
Երբեմն, երկար լըռութենէ մի յետոյ,
Հայր իմ և մայր զըւարթադէմ յուզեալ, գոհ,
նախ ժպտէին միմեանց, ապա կոչելով
Զիս իւրեանց մօտ, սրտասպառար ի գորով
Զիս գրկէին և ցնծութեան արտասուօք
Պագնէին զիս:

Ա՛հ, պատճառն ի՞նչ էր արդեօք:

16. ՄԱՅՐԱԿԱՆ ՍԷՐ

Ոչինչ կը հաւասարի մայրենի սիրոյն . մայրը կը սիրէ անսահման անձնուիրութեամբ . իրեն համար չկայ զոհ, և կամ լաւ ևս ըսեմ կեանքը զոհերու շարունակութիւն մ'է՛ զորս ոչ կը նշմարէ և ոչ իսկ կ'զգայ : Կը սիրէ ոչ թէ վարձատրուելու , այլ միմիայն սիրելու համար . և նոյն իսկ որդիական ասկերախտութեան հանդիպելով դարձեալ մայր կը մնայ . այսինքն կը սիրէ դարձեալ , կը նուիրէ զոր ինչ ունի՝ սիրտն ու կեանքը : Մայրենի զգացման մեծութիւնը կազմողը կատարեալ անշահասիրութիւնն է . և կը նկատեմ այդ զգացումը իրիւ ճշմարտագոյնը , վսեմագոյնը և միմիայն հաստատը :

Մայրը մարդկութեան նախնական գիրքն է . ով որ չգիտեր սոյն գրքին մէջ հեգեւլ , անկարող պիտի ըլլայ միշտ բնութեան մեծ գրքէն կարգալու , զի կոյր մ'է նա , զի մայր անունը սիրոյ անբաւութիւնը կը պարունակէ . և ով որ այդ բառը չըմբռներ , արարչութեան վսեմագոյն վանկէն զրկուած կը մնայ : Չգիտեմ թէ արդեօք մայրենի սիրոյ անբաւութիւնը զաւակաց ասկերախտութիւնը չի՛ պատճառեր շատ անգամ : Որովհետեւ մարդկային բնութիւնը ամեն բանի վարձելով՝ մեծագոյն զոհերն անգամ իւր վրայ ազդեցութիւն չեն ընէր . այնչափ կը կարծէ իւր սեփական իրաւունքը վայելելու : Բայց երբ այդ կարծեցեալ իրաւունքէն կը զրկուի , այն ժամանակ միայն կը ճանաչէ անոր յարգն և կ'զգայ անդարմանելի կորուստը : Որքը ջերմ կլիմաներու տունին է որ ցուրտ երկիր մը փոխադրուելով իւր պայծառ երկնից ջերմութենէն կը զրկուի , ցուրտ քամիէն կ'ոսնի , կը դաւկանայ , կը թարշամի իւր բոյրը չ'արձակած . հէ՛ք ծագիկ :

17. Գ Ա Ս Տ Ի Ա Ր Ա Կ Ն

«Գործակից եմք Աստուծոյ»
Ս. 902.

Աննիւթ գոյին տալ ըզդիմակն էակից,
Զաստուածականըն բոց զոգւոյն արծարծել,
Զվայրավատին ճաճանչն յերկին արձակել՝
Արարչական երկա՛նցն է գոլ գործակից:

Սերմն արգաւանդ ծրարեալ յանձին բովանդակ
Ըզվեհական իւրեան ըզբողոքն է հոգին,
Զայդ յոչընչէ՛ քաղեաց անդուստ աջ Վեհին,
Իսկ զապագայ նորին՝ քե՛զ յանձն ետ, մըշա՛կ.

Քե՛ւ դա ելցէ սաղարթագեղ ծառ վըսեմ,
Քե՛ բուրեսցէ ծաղիկ, զոր՝ Տէր ետ քեզ ծիւ,
Քե՛ ամբարձցի շինուածն՝ ում Տէր եղ ըզվէմ:

Հաւասարորդ ընդ քեզ յայնժամ նըստցի Տէր,
Եւ ինքն ըզփառս անտի առեալ իւր բաժին,
Քեզ՝ ըզծաղկունս նոցին տացէ և ըզսէր:

Խորէն Արեւիկա. Նար.Պէյ

18. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՈՃ

Լեզուի մը կազմութիւնն և արտադրութիւնն երկու էական պայման ունին, ո՞վ չզխտեր. այս է քերականականն և տրամաբանականը: Մակայն մինակ մեր գրող կարդացողներէն շատերը չզխտեն որ երբ այս պայմաններէն մին զանց առնեն՝ լեզուին սխալ, անչնորհ, մութ, կամ թիւր ու անհեթեթ կերպարանք մը կ'տան:

Մինչդեռ ինքնակոչ գրագէտը քերականական օրինաւոր պայմանը մեր արդի դրութեան մէջ քամածին բան մը կ'համարի և քննադատութեան իրաւունքը

կ'ջրէ , կ'մոռնայ բանականութեան իրաւունքն որ ամէն իրաւունքէ և կանոնէ վեր է և հին , կ'մոռնայ որ անոր ուժովը տրամաբանօրէն խորհելու և տրամաբանօրէն իր խորհուրդն արտադրելու պարտաւոր է : Այս պայմանն ամէն լեզուի գրաւոր և աւանդական կանոններուն մէջ յայտնի կամ անյայտ կերպով կ'տիրէ : Այս պայմանն է որ ասունն անասունէն կ'որոշէ , բանականն անբանէն կ'զատէ : Ձեռքէ՛ այս բանն և կ'ջնջես մարդս , ջնջէ՛ ամեն կանոն և իսկոյն բանաւոր մարդուն տրամաբանական հակումը նոր մը կ'ըստեղծէ լռելեայն՝ լեզուին կամ գրչին շարժում տալու ատեն : Իսկ երբ բանական կանոնին կ'միանայ նաև մտքի և սրտի նուրբ ներշնչութիւններն և հետեւապէս օգտակարին , գեղեցիկին և վսեմին ճաշակն , այն ատեն ոճի ուղղութիւնն ալ կ'միանայ վայելուչ , ընտիր և ներդաշնակ արտադրութեան :

Այս իսկական պայմաններէն զատ՝ ոճ մը կ'կրէ նաև գրող հանճարին յատուկ գրոշմն : Այս գրոշմն է որ մի և նոյն կանոնաւոր լեզուին բացատրութիւններն անհունս կ'զանազանէ , զանազանութիւն մը որ մարդկային մտքի և բնաւորութեան պէս անսահմանելի է և անստորագրելի : Չգիտեմ ո՛ր հեղինակն ըսած է թէ աշխարհիս մէջ չըջող հիմնական գաղափարները սահմանափակ են : Թերևս այս գիտողութիւնն իրաւացի լինի : Սակայն ինչո՞ւ համար մի և նոյն գաղափարը կամ զգացումն երբ տարբեր գրիչներ կ'բացատրեն տարբեր կերպով կը ներգործեն մեր վրայ , ինչո՞ւ համար , կ'ըսենք , այս տեսիլը մեզի ընտանի է , այլ ի՞նչ բնական , անոյշ , վառվառն , ի՞նչ շնորհալի , ազդու և վսեմ գրուած է : Ահա այս տարբերութեան շարժառիթը գրողին հոգին է , սիրտն է , երևակայութիւնն է , կամ իր բնատուր սուր և

հզօր ըմբռնման, ստացած հմտութեան և սարագա-
յից արգասիքն է, որը կ'ուզես սեպէ՛ միշտ հոգւոյդ
որ և է կարողութեան վրայ ըրած տպաւորութեան
միտ դնելով՝ եթէ հոգիդ կարողութիւն ունի զգալու
և ըմբռնելու :

Ոճի մը երփն երփն գոյներն, որ մինակ ընտիր
հոգւոյ կամ կիրթ մտքի հիանալի ցոլացումն է, ոչ
քերականութիւնները կրնան աւանդել մեզի և ոչ
բառարանները: Քերականը թերևս անսխալ գրէ,
բառագէտը բառեր շարէ, բայց մեծ հանճարի բաժի-
նըն է թղթի կտորի մը շունչ և ոգի տալ, լեզուն
գործիք ընել և բանն անմահացնել:

Մ. Մամուրեան

19. Զ Օ Ն

Առ Օրինոյ Մարի Փափագեան

Այսօր գեղեցիկ քո անուան է տօն,
Եւ ես փափաքիմ ընել քեզ մի ձօն,
Բայց ոչ մարգարիտ կամ ակն ոսկեշար,
Զի սիրտդ է ազնիւ քան զամեն գոհար:

Եթէ ընծայեմ քեզ վարդ գեղեցիկ,
Եւ այն ալ, ամսո՛ս, է շատ վաղանցիկ,
Մինչ դու ձիրք ունիս անմեղ հոտ բուրեղ
Որ վարդին հոտէն քաղցր է առաւել:

Թէ կարենայի՝ փայլուն աստեղներ
Քաղելով յերկնից, քեզ տայի նուէր,
Այլ զի չեմ կարող՝ կը մաղթեմ սրտէս
Որ փայլի ճակատ քո միշտ աստղի պէս:

Մ. Աճեմեան

30. ՀԱՅ ԼԵՉՈՒՆ ԸՆՏԵՒՐՊՊԱԳԱՆ Է ԹՆՆ ԴՈՒՐԱՆԱԿԱՆ

Ճշգագոյն քննութիւններէ տեսնուած է որ այս ինչ խմբէ, զոր օրինակ հետեւորդական խմբէն, կարծուած լեզուներէն ոչ ամենուն նմանութեան պատճառն է այն լեզուն խօսող ազգին սերելը միւսոյն հին ցեղէ: Բոլորովին տարրեր ցեղի, զոր օրինակ ի բնէ Դուրանականին վերաբերեալ լեզու մը կը տեսնուի իւր հին ձևին վրայ առած շատ բան Հետեւորդական լեզուներէ, մինչև թուել լինել այն խմբէն. բայց Դուրանական լեզուի տարրեր որ աւելի կամ նուազ յայտնի կը նշմարուին ի նմա՝ կուտան բաւական հաւանականութիւն թէ ծագումն նորա է բուն Դուրանական: Այսպէս նորագոյն լեզուաբաններէն ոմանք կը կարծեն թէ արդի եւրոպական նոր ազգաց լեզուներն, ինչպէս նաև ցեղերն, էին ի բնէ Դուրանական, և յետոյ ուրեմն առին փոքր ի շատէ Հընդիկ-եւրոպական ձև:

Լեզուաց այլ և այլ խումբերու բաժանման, և այն լեզուները խօսող ազգաց բնակութեան վրայ պատմական տեղեկութիւններէ հայերէնի համար կը հետեւի թէ, Հայ ցեղն, հին անուամբ Արարատեան, ապա Արմնի, կամ Արմէն, անյիշատակ ժամանակներէ բնակելով Երասխայ հովիտը, ունէր ինքեան դրացի երեք գլխաւոր ցեղ լեզուները խօսող ազգեր. յարեւելից և յարեւմտից Հնդիկ եւրոպականներ (Պարսք և Յոյնք), ի հարաւոյ՝ Սեմականներ (Ասորիք), ի հիւսիսոյ՝ Դուրանեան ցեղեր: Այսպէս լեզուաբանական տարրեր տարրեր տարրներ ունենալով ինքեանց դրացի, Հայք հարկաւ մեծ ազդեցութիւն կրած են ի նոցանէ քաղաքակրթութեան ինչպէս ուրիշ մասերուն, նոյնպէս մանաւանդ լեզուի կողմանէ, ըստ ա-

ւելի կամ նուազ յառաջդիմութեան այն ազգաց . և որովհետև աւելի յառաջադէմներն էին Արիք և Յոյնք , հարկաւ այս երկու ազգաց լեզուներն մանաւանդ կրնային դործել մեծ ազդեցութիւն Հայերէնի վրայ , և է իսկ այնպէս , որպէս ցուցանէ մտադիր քննութիւնն :

Եւրոպացի լեզուադէտք ի սկզբան նայելով մեր անհարթ սամկօրէնին , և գտնելով զայն խճողեալ թուրքերէն բառերով և ձևերով , կարծեցին իրրև բիրտ գաւառաբարբառ թուրքերէնի , Դուրանական խմորէ : Յետոյ քննելով հին լեզուն կամ գրաբարը , և գտնելով ի նմա մեծ նմանութիւն Հնդիկ-եւրոպական լեզուաց հետ , վճռեցին թէ հայերէնն ևս է արիական լեզուաց դասէն , այսինքն՝ ի բնէ դուստր այն մայր լեզուին որոյ ծնունդ են Չանդիկն , Յոյնն և Լատին :

Հայերէնն ունի այնչափ նմանութիւն , առաւելապէս ձայնի կամ բառերու կողմանէ Հնտերոպական լեզուաց , մանաւանդ գլխաւորներուն , Չենդի կամ հին պարսկերէնի , Յունարեանի և Լատիներէնի , որ , եթէ չէր ևս ի բնէ Հնդիկ-եւրոպական , ըստ վերջին ձևոյն իւրոյ կ'երևի Հնտերոպական , և առաւել քան որչափ կարծած են այս լեզուն լեզուաբանական օրինօք քննող համազգի և օտար գիտունք : Սակայն լեզուի նմանութենէն չհետևիր ծագման կամ ցեղական միութիւնն . ուստի նայելով հայերէնի նմանութեան Հնտերոպական լեզուաց հետ , չենք կրնար համարձակիլ ըսել թէ այս լեզուն էր ի բնէ Հնդիկ-եւրոպական կամ Արիական : Եթէ , ինչպէս արդի հրնադէտներէն ումանք կը կարծեն , Հայ ազգին ծագումն է դուրանական , կամ ուրիշ բառերով ըսենք , եթէ Հայ , կամ հին անուամբ Արարատեան ցեղն ,

էր ի բնէ հիւսիսային ժողովուրդ , չէ անհաւանական
թէ լեզուն ևս էր նախապէս հիւսիսային դուրանա-
կան անհարթ բարբառ , որ յետ ժամանակաց ազդե-
ցութեամբ լեզուաց դրացի հնտերոսպական աւելի
քաղաքակիրթ ազգաց , առաւ տակաւ հնտերոսպա-
կան ձև :
Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Ձ 1 . Թ է Ի՞ՆՉ ՊԱՐՏԻ ԳԻՏՆԱԼ ՔԱՀԱՆԱՅՆ

Թէ կրօնը ամեն ընկերական կարգի անկիւնակալ
քարն է , ուրեմն քաղաքակրթութեան ամենէն գոր-
ծօն ծաւալիչներէն մին է քահանայն , նախուժանին
վրայ անհուն ազդեցութիւն ունի , զի մի բարձրա-
գոյն կարողութեան անունով կը խօսի և կը յուզէ ինչ
աննիւթական մաս որ կայ մարդուն մէջ : Անտարբերի
և նիւթապաշտի գործ է ուրանալ կամ արհամարհել
այս ճշմարտութիւնը :

Մանաւանդ գաւառներու մէջ հզօր է նորա ազ-
դեցութիւնը և կարեւոր նորա ներկայութիւնը : Ըն-
տանեաց իրր մի անդամը կը նկատուի նա գաւառաց
մէջ . իւր խրատները թանկագին են ժողովրդեան
համար , որ մտիկ կ'անէ նմա երկիւղած եւ պատկառ :

Այս բուռն և ներքին ազդեցութիւնը օգտակար
անելու համար ի՞նչ պէտք է . — Պէտք է ուսեալ
լինի քահանայն և գործնական դաստիարակութիւն
ալ առած : Քանի որ խուժանը կ'անսայ նորա խօսքին
իրր աստուածայնոյ , կարեւոր է որ նորա խօսքերը
հրահանգիչ լինին և ճշմարտութիւն քարոզեն . կա-
րեւոր է որ Աւետարանի ոգին մեկնեն , և ոչ արտաքին
ձևը , նիւթական մասը :

Քահանայն ուսում առած պէտք է որ լինի , որ-
պէս զի կարենայ ուսում տալ : Քահանայն պարտաւոր
է զբաղիլ աստուածաբանական ուսումներու . այլ ար-

տաքին գիտութիւններու ալ պարտաւոր է աշխատիլ : Գիտութիւնը կրօնի թշնամին չէ , որպէս կարծած են շատեր . երկու քոյր են նոքա , զոյգ ճաճանչ ճըշմարտութեան արևուն :

Քահանայն երաժշտութիւն ալ պարտաւոր է սուսիլ : Սա կը վերացունէ մեր հողին , և երևակայութեան թեւերու վրայ զմեզ բարձրացնելով՝ մեր սիրտը կ'սքանչացնէ , մեր բարքը կ'ածէ ի համայր : Քահանային ուրրուն ձայնը , խունկի բուրումին միացած , կը յուզէ ժողովուրդը և կ'առաքինացունէ զայն : Երաժշտութիւնը քաղաքակրթեց Մարդկութիւնը , թէև արդի երաժշտութիւնը , աւա՛ղ , մատերու մարմնամարզութիւն է աւելի :

Նաև հարկ է որ քահանայն հմուտ լինի բնական գիտութիւններու , կամ գէթ նոցա ընդհանուր ծանօթութիւններուն : Գիւղացիները , բնութեան անթիւ երևոյթներէն պաշարուած , նոցա պատճառը չը գիտեն , և այլընդայլոյ պատճառներ , սնապաշտութիւններ կը հնարեն և կ'աւանդեն մի ժառանգական ախտի պէս . քահանայն , ճշմարիտը գիտնալով , պարտաւոր է ջրեւ նոցա թիւր կարծիքը , այն ազիտարներ նախապաշարումները : Բնութեան գիրքը նոցա առջև դնել , արարչագործութեան հրաշալիքը մեկնել պէտք է , որպէս զի տիեզերքին այս մեծութիւնը և ներդաշնակութիւնը տեսնելով՝ հիանան Արարչին վերայ և յօժարակամ պաշածն տանին նմա :

Քահանայն պերճախօսութիւն ալ պարտաւոր է սովորիլ : Սա , այո , բանաստեղծութեան պէս , մի տեսակ ձիրք է բնութենէն տրուած . այլ չ'եմ ուզեր որ նա մի Պօսիւէ լինի , կամ հաւասարի Շահնազարեաններու , Խրիմեաններու , Վարժապետեաններու , Նար-Պէյներու , Էնֆիէճեաններու . բաւ է որ , վար-

ժուլթիւնով և աշխատութիւնով, աջողի ստանալ մի
հեշտ եղանակ, մի բեղուն և սիրուն կերպ խօսակ-
ցութեան:

Կը վերջացունեմ այս խորհրդածութիւնները, քա-
հանայնեբուն յիշեցնելով Յիսուսի սա խօսքը. «Փնա-
ցէ՛ք, աշակերտեցէ՛ք, ուսուցէ՛ք» . . .

33. ՊԷՏՏԻ Է ԼԵՌԱՅՆԵԼ ԳՐԱՊԱՐԸ ԽԵՐ ԳՊՐՈՅՆԵՐԷՆ

Գրաբարը հասարակութեան սահմաններէն կամ
մանաւանդ դպրոցներէն հալածական հանելու տագ-
նապը՝ բացարձակ գործնականի մտադրութիւնն է,
որուն վրայ կը հիմնեն ոմանք գործունէութիւնը, ա-
նոնք՝ որ գործնականը գործունէութեան հետ կը
չփոթեն, անոնք՝ որոնց քովը տեսականը միշտ տե-
սական ըմբռնուած է, ուստի և ժամանակի կորուստ:
Սակայն պարզ գործնական առանց տեսականի՝ շէնք
մըն է առանց հիման, կամ գոնէ հիմ մըն է առանց
սպաւորով հաստատութեան: Ի՞նչ պէտք է չափաբերա-
կան գիտութիւն՝ գործնական ճարտարապետութեան,
կամ ի՞նչ հարկ կայ փաստաբանի մը՝ փիլիսոփայու-
թեան վրայ տարիներով ժամանակ կորսնցնելու, կ'ը-
սեն այսպիսիները: Պոհ է հետեակ բանաստեղծ մը
իւր հանճարոյն վրայ, և միջակ նկարիչ մը իւր ճար-
տարութեանը վրայ, աւելորդ համարելով՝ մէկը
նախնի բանաստեղծներու գրադիրը, ու մէկայը՝ դա-
սական նկարչութեան պարապմունքը: Հիմակուան
ուսմանց և գիտութեանց յառաջադիմութիւնն այդ-
կարճ գաղափարներուն հետ պատերազմելով և յաղ-
թելով միայն կրցաւ յաջողիլ. և այսօր այնպէս մը-
տածողի մը համառօտ կը սպասասխանուի՝ թէ խեղ-
ճը չը գիտեր որ ի՞նչչափ պիտի օգտէր՝ եթէ սորված

ըլլար : Աւելի նիւթական և շոշափելի օրինակ են վաճառականութեան տները՝ զորոնք միայն տեսական գիտութեան պակասութիւնը փլուցած է : Իրաւամբ ըսուած է աշխարհաբարի համար՝ թէ « շնչելու սկսող լեզունիս դեռ շատ կռանահարութեան և ձեռնավարութեան կարօտ է : մինչև որ կատարեալ ձեն առնու : Եթէ նոր մատենագրութիւնն ստուգիւ գործարան մընէ՝ ուր լեզուն պիտի գործէ ու գործուի, նոյն գործարանին նիւթ մատակարարողը, անոր բովբը՝ գրաբար լեզուն է և գրաբար մատենագրութիւնը : առանց բովուց գիտութեան, առանց նիւթոյն տարերքը տեսականապէս և հիմնովին ճանչնալու՝ կամ արուեստին մէջ կը սխալինք, և կամ առ առաւելն եղած տեղերնիս կը մնանք՝ առանց յառաջադիմութեան փոքր շարժում մ'ընելու : Թողունք ստորին գործաւորներուն՝ անգիտութեամբ գործել, կամ լոկ գործնականապէս շարժիլ : որ ինչպէս քաղաքական նոյնպէս ուսումնական կենաց մէջ ալ միշտ պիտի գտնուին մեծ բազմութեամբ :

Հ. ԱՐՍԷՆ Վ. ԱՅՏԸՆԵԱՆ

33. ԾԻՄԱՂ ԵՒ ԿԵՐԲԵՐՈՍ

(Հայ գրականութիւն և Հայ վարժապետութիւն)

— Ի՞նչ լուր բերիր ինձ դժօխքէն, սիրելիդ իմ կերբերոս, գործերն ի՞նչպէս են հոն :

— Գործերն գոհացուցիչ վիճակի մէջ են :

— Գրականութիւնն ի՞նչ վիճակի մէջ է :

— Որքան գրագէտ այնքան գրականութիւն կայ : հին օրէնքներն և կանոններն յարգ և պատիւ չունին մեր մէջ : ամեն ոք ազատ է իրեն հաճելի թուած եղանակով գրել : մին կը գրէ սիրահարական վէպ մը

որ կրնայ աշխարհագրութեան, պատմութեան և իմաստասիրութեան իրր դասագիրք ծառայել. ուրիշ մը դպրոցական մրցանակներու բաշխման հանդիսին մէջ կը կարդայ ճառ մը՝ որ սքանչելի դամբանական մ'է:

— Ճաշակի պակասութիւն: Ձե՞ն քննադատեր:

— Կը քննադատեն. քննադատողներն, այսինքն յոռի կողմերը ցոյց տուողներն — որովհետեւ մեր քրննադատներն ընդհանրապէս գոյլելու պաշտօն կը վարեն — կը հալածուին, երբեմն իսկ կը զրպարտուին նոյն իսկ ամենէն ազնիւ կենդանիներէն:

— Ծիծաղն մաս չունի՞ այս թերութիւններուն մէջ. ներեցէք սակայն այսպէս...

— Ոչ, Ծիծաղն կ'առնէ նիւթ մը և անոր ետեւէն կ'երթայ հարուածելով ինչ որ ճամբուն վրայ իւր առջև կ'եւնէ: Ահա իւր ընթացքն որով քայլած են իրմէ առաջ շատ հին հեղինակներ թէև տարբեր ճամբու վրայ: Ստեղծելու պէտք չունի, կը նկարէ ժամանակիս պատկերն ուր պիտի տեսնեն յաջորդ սերունդներն թէ ինչ է եղեր իւր նախահայրերուն վիճակն անցելոյն մէջ:

— Հեղինակներ ունի՞ք գոնէ:

— Ի՞նչ ըսեմ, բարեկամ, օտարներն շատ յառաջ գնացած են և կ'երթան շարունակ և շեն սպասեր մեզի որ իրենց հասնինք: Յաւալի բայց ճշմարտութիւն մ'է խոստովանելն թէ ստեղծող հանճարներ կը պակսին մեզ դեռ. մեր հեղինակներուն մէկ մասը օտարին ապրանքն կը վաճառէ պզտիկ յանձնարարութեամբ: Մէկ մասն զուրկ ստեղծելու օժիտէ՝ փայլուն գոյականներով և հրապուրիչ ածականներով կը զարդարէ իւր լեզուն անզգալի ընելու համար

պակասն այն հողւոյն որ գրութիւններն կը կենդանացնէ : Մէկ մասն ալ օտար հեղինակներու հանճարին ծնունդին տակ իւր ստորագրութիւնը կը դնէ : Քիչերն են որ իրենց մաքին պատւոյն , համեղ կամ անհամ , տհաս կամ հասուն , անուշ կամ կծու , հրապարակ կը հանեն վաճառելու համար : Ասոնք ալ գրենող շեն գտներ : Շատ անգամ այս տեսակ պատուները ծով կը նետուին իբրև փնասակար ընդհանուր գրական առողջութեան :

— Դուն ալ այն մասին կը վերաբերիս որուն լեզւին անկեղծութիւնն անկրթութեան նման բան մ'է , փափկութիւն չունի բնաւ . կ'խօսի այն կերպով որով կ'զգայ . չափաւորութիւն , փափկութիւն , ներդաշնակութիւն , քաղաքավարութիւն չունի : Փոխանակ « այս առտու ծով մտայ » ըսելու՝ խօսէ այսպէս . . . Մինչդեռ երկնից դէլտոյն հետզհետէ իւր ճառագայթներն ամբոփելով կը պատրաստուէր իւր աթոռն տալ արեգակին՝ որու դռներն բանալու կ'երթար վարդամատն Արշալոյս . մինչդեռ աքաղաղներն նոր խօսք առած էին . մինչդեռ փողոցներն « աղէկ սոխ և ըսքանչելի սխտոր » կը պօռային . մինչդեռ հացագործն մինչև որ առնելիքն շառնէր չէր ուզեր իւր յաճախորդին հաց ձգել և հետն կոխ կ'ընէր . մինչդեռ կաթնավաճառն սիրահարութիւն կ'ընէր սպասուհւոյ մը հետ դրան մ'առջև . մինչդեռ փողոցն աւելլու պաշտօն ունեցողներն փոշիներու մէջ կը թաղէին անցնողներն . մինչդեռ կինն թաւշեայ վերարկու մը շինելու նպատակաւ էրկանը գրպանէն քանի մը ոսկի կը գողնար . մինչդեռ էրիկն իւր կնիկէն յանձնարարութիւններ չլսելու համար ինքզինքն անէն դուրս կը նետէր . մինչդեռ խահուէ չգտնուելուն

Համար մայր և որդի միմեանց հետ կը ծեծ կուէին ,
այն պահուն ահա մերկացայ և նետուեցայ հեղուկ և
կապոյտ սաւանի մը վրայ որ անհուն է : Նետուելուս
պէս , սաւանը փրփուրներ հանեց , փրփուրներ՝ որ
ժամանակաւ ծնունդ տուին Աստղիկին , գեղեցկու-
թեան : Սարսուռ զգացի . . . : Քիչ մը սողացի այդ
սաւանին վրայ և ահա արևն ելաւ իւր պալատէն և
իւր առաջին շողն կաթեցաւ աչքիս մէջ , ո՛հ , այդ
առաջին ճառագայթն , թուեցաւ ինձ կուսի մ'առա-
ջին նայուածքն որ ժպտով մը կ'ուզուի բանաստեղ-
ծին : Յուզուեցաւ ծովն , ես ալ յուզուեցայ , դու չը
յուզուեցա՞ր ով կոյս . . . կոյս ով չը յուզուեցա՞ր դու . . .
կոյս յուզուեցար չ դու ով . . . դուրս ելայ , դողա-
լով և դողզղալով . հագուեցայ և մնաս բարեաւ ըսի
ծովուն , արևուն և կուսին :

— Բաղնիքի ստակն ո՞վ տուաւ հապա :

— Բարձր բանաստեղծութիւններու մէջ ստակի
խօսք չըլար , ամօթ է :

— Այսու ամենայնիւ բաղնեօլանն մինչև որ դը-
րամը չառնէ թող չտար ներս մտնել :

— Ատ ուրիշ խնդիր , մեր խօսքը գրականութեան
վրայ է և ոչ թէ ծովու բաղնիքին վրայ :

— Ես ալ կ'ուզեմ որ նկարագրութիւն մը մեր
առջև պարզուած տեսարաններն ճշուութեամբ պատ-
կերէ առանց բան մը դուրս ձգելու : Օրինակի հա-
մար , շատ մը բանաստեղծներ գարունը կը նկարագ-
րեն , չգիտեմ թէ իրօք տեսած են գարունն և ո՛ւր-
և այդ նկարագրութեան մէջ գրեթէ միշտ սոխակն
է որ կը խօսի : Գարունը նկարագրող օտանաւորի մը
մէջ բնաւ չեմ տեսած էչ մ'որ զուայ , Աքաղաղ մ'որ
խօսի , Գառնուկ մ'որ մայէ , Հնդկահաւ մ'որ կլու-

կլուկէ, և ի՞նչ ներդաշնակութիւն չեն կազմեր անոնք եթէ փոխ առ փոխ երգեն գիւղի մը մէջ: Նութեր կան որ որքան վարէն դիտուին և գրի առնուին, այնքան բարձր, փափուկ և բնական կ'ըլլան: Չեմ ըսեր թէ գարունն բարձրէն չդիտուի մանաւանդ մեծ հանճարներէն, բայց չեմ հաւանիր երբէք որ ստանաւոր մը գարունով և լուսափետուր հրեշտակներով սկսի ու ներքին կանոնադրութեան այս ինչ յօդուածով վերջանայ:

— Ես ալ ձեզի համակարծիք եմ. հին մուսայները շոյելու է քիչ մը: Այս խնդիրն ալ թողունք և անցնինք դաստիարակութեան. այս ի՞նչ վիճակի մէջ է:

— Այն վիճակին մէջ է ուր կը գտնուէր տասը տարի առաջ: Մասնաւոր ջանքեր կ'ըլլան զայն տարածելու համար, իսկ կեդրոնն բոլորովին անտարբեր է: Ամեն կենդանի ամեն բանի համար դրամ կը գտնէ բայց դաստիարակութեան համար չգտներ կամ գտնել չուզեր և կերպով մ'ալ իրաւունք ունի:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ, ինչպէս քիչ մը առաջ խօսքը անցաւ, ամենէն թշուառ ապրողներն անոնք են որ կըրթութիւն առած են, և ամենէն երջանիկներն անոնք են որ կըրթենէ: Բոլորովին զուրկ են: Դասատուներ՝ որ աշխարհիս զարգացման գործին մէջ մեծ դեր կը խաղան, իբրև անարդէակներ կը նկատուին վաճառականներէն որ ուրիշի բան չեն եթէ ոչ ուրիշի մը ապրանքն քիչ մը շահով ուրիշի վաճառողներ իբրև սինդքոր կը նկատուին նոյն իսկ այնպիսի մէկէ մ'որու հայրն ժամանակաւ վարժապետ էր, ինքն ժամանակաւ վարժապետ եղած է և եղբայրներն դեռ վարժապետ են: Ա'լ ի՞նչպէս կ'ուզես որ վարժապե

տութիւնն այս վիճակին մէջ խնայէն ետքը կարեորութիւն արուի դաստիարակութեան :

— Ողբալի՛ վիճակ :

Յ. Պարոնեան

Չ 1 . ՅԱՄԱՏՆԻ ԱԵԽԱՏԱՆՔ

Աշխարհի մէջ , ուր լի են ցու և դաւ , ուր անձնիւր քայլ ունի իւր խոչ և ուր անհուն վտանգներ կ'սպառնան կեանքին , մարդկութիւնն մի զէնք ունի որով կարենայ զինք պաշտպանել ամէն յարձակումի դէմ . — յարատե աշխատանքն է դա : Այդ զէնքով սպառազինուած մարդերն յառաջ կը դիմեն անընդհատ , աներկիւղ կը մտնեն ամեն փշալից ուղւոյ մէջ , կը խորասուզին ամեն անդունդի մէջ , կը քննեն ամեն դաղտնիք , կը կրկտեն ամեն հորիզոն , ոչ ուրեք կը կասին և կը վերանա՛ն միշտ դէպ ի Բացարձակն . . . :

Յարատե աշխատանքն ազրիւր հանդիսացաւ ամեն բարեաց : Դա ճոխացուց նիւթական և բարոյական աշխարհներն , և հրաշակերտներ ստեղծեց . դա մարդկային սեռն ազատեց նուաստութեան շղթայներէ , աշխարհն վերահաստատեց իւր պատուանդանի վրայ , և այսպէս ապահովեց մեզ մի լուսասփիւռ ապագայ : Ուրեմն արդար է հռչակել թէ՛ կեանքի գլխաւոր պայմանն է դա և խարիսխ յառաջդիմական :

Երբ մի ակնարկ ձգեմք մեր շուրջ , կը համոզուիմք իսկոյն թէ՛ բնութիւնն իսկ է յարատե աշխատանքի օրինակն , որով ամեն բան նոր երևոյթ կ'առնու , նոր արդիւններ կը մատակարարէ :

Հանճարն իսկ , առանց յարատե աշխատանքի , կը վճատի և կը մեռնի , զերդ ծաղիկ որ կը թառամի անցող և անարև : Հանճարն կ'ստեղծէ , այլ դա չ'է


բաւ , զի հարկ է արդիւնաւորել այդ ստեղծում ,
հարկ է մարդկային կեանքին մէջ ներմուծել զայն .
այս գործի առջև պէտք է որ մարդ աշխատանքի սէր
ունենայ , կորով ունենայ , անյողդողդէ կամք ունենայ
զի յաջողութեան գաղտնիքն դոցա մէջ կ'ամերփութի :

Վհատանքի սառ ժպիտին առջև , արդեօք քանի՛
հանճարներ խեղդուած են ցարդ և քանի օգտաւէտ
գիւտեր անէի խաւար վիհերուն են մատնուած . . . :

Ահ , գիտցէք զայն , թէ ամեն էակ ունենար այն
յարատեւութիւն , որով մեծ մարդերն անմահացան ,
քաղաքակրթիչ գործն ի յանգ ածուած պիտի լինէր
արդէն և մարդկութիւնն , իւր փառաց զէնիթին վը-
րայ , պիտի պանծար յաղթական . այլ , աւա՛ղ որ
քիչեր կրցան դէմ դնել բախտի հարուածներուն և
քիչեր , հետևապէս , յաջողեցան իւրեանց հանճար
օգտակար ընել մարդկային ազգին :

Երբ մարդ կարդայ այն անմահ հանճարներու կեն-
սագրութիւնն , որք գիւտեր ըրած են բնական և բնա-
զանցական կարգերուն մէջ , և իմաստասիրէ դոցա
կեանք , գիտէ՞ք ինչ պիտի տեսնէ . պիտի տեսնէ թէ
այդ կեանքեր ահեղ կռիւներ են անողոք բախտին
դէմ մղուած , նաև տգէտ խուժանին որ կուրօրէն կը
հալածէ մեծ մարդերն . պիտի տեսնէ թէ դոքա լոկ
յարատև աշխատանքով կրցած են անկործան թում-
բեր քանդել և սկայ պատնէշներ կործանել . և այս
օրինակներ տեսնելէ յետոյ , ո՞չ ապաքէն ներելի է
մեզ հետևցունել թէ աշխարհ նոցա կը պատկանի որք
անընդհատ կ'աշխատին և յառաջգիմութիւնն մի ա-
նուն է միայն թէ չը լինի յարատև աշխատանք :

Հրանս Կոմսուր



Վ Ր Ի Պ Ա Կ

Սխալ

Ուղիղ

Էջ 8 տող 21 *կը փափկափէ*

կը կափկափէ



112

A I
15001

Մ Ի Լ Բ Ա Ն Ա Ս Ք Ա Ն Ա Ջ Ե Ա Ն



Գ Ր Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Տ Ե Ս Ա Կ Ա Ն Ե Ի Գ Ո Ր Մ Ն Ա Կ Ա Ն

Մասն Ա. ԱՃ

- Ա. հաստը 5 դահեկան
- Բ. » 5 »
- Բանալի 8 »

Մասն Բ. ԳԻՒՑ և ԵՐԻՆՈՒԹՅՈՒՆ (հասարակելի)

Մասն Գ. ԲԱՆԱՍՏԵՂՆՈՒԹՅՈՒՆ և ԶԱՐՏԱՐ
ԽՕՍՈՒԹՅՈՒՆ (հասարակելի)

معارف نظارت جلیله سنک رخصتیه طبع اولمشدر